

ՀԱՅՔ

ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԵՎԱՆ 2024

ՄԱՐԴՆ ԱՐԱՐԱՏԵԱՆ

Ոչ ոք գիտի: Միայն գիտեմ, կգայ մի օր,
Մարդը հզօր, Արարատեան մարդը հզոր,
Անդորր, լուսեղ իր ճակատով, խաղաղ,
մեծդի, ինչպէս լեռը
Ձիւնագագաթ, ինչպէս ծորը խոր հոյզերով
խորհրդացած.
Կգայ մի օր մարդը հզոր
ԵՒ կստեղծի իր ոգիով ասպետական
Կեանք իրական,
Իր ճակատի նման լուսեղ, նման մտքին
իր առնական,
ԵՒ կստեղծի կեանք իրական, ծաղկած
ոսկի մի արևով:

Կոստան Զարեան

ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Հայության վերածնունդը և նրա ձեռամբ Արարատյան առաքելության վերաստանձնումը ոչ միայն համահայկական, այլև համամարդկային հրամայական է:

Որովհետև հրամայական է ոչ միայն հայության, այլև համայն մարդկության արարատացումը:

Հայք նախագիծն այս գերնապատակի իրագործման ծրագրային մտահղացում է:

Նախագիծը սնվում է հայ ազգի կոլեկտիվ հանճարի ստեղծած բաներից, որոնց շարքում առանցքային է Հայոց հավատամքային համակարգն արտացոլող Սասնա Ծռեր էպոսը:

Նախագիծը մշակելիս ելակետային են եղել Հայոց ինքնության և առաքելության ճանաչողության հարցում էական ավանդ ունեցող հայերի, մասնավորապես՝ Կոստան Զարեանի, Հայկ Ասատրյանի, Գարեգին Նժդեհի, Կարլեն Ավետիսյանի և Արթուր Արմինի տեսախոհական մոտեցումներն ու պատկերացումները:

Նախագիծը կազմված է որպես միասնական թեմատիկ թղթապանակում հավաքված հոդվածաշար:

Հոդվածաշարի սկզբում զետեղված է նույն՝ «Հայք նախագիծ» վերնագրով մայր հոդվածը, որը ներկայացնում է նախագծի ընդհանուր, շրջանակային նկարագիրը, իսկ մյուս հոդվածներն ավելի հանգամանալից կերպով ներկայացնում են նախագծի հիմնական բաժինները:

Մայր հոդվածում ներառված են նաև 2012-2014 թթ. ընթացքում Նախախորհրդարանի և Հիմնադիր խորհրդարանի մշակած «Նոր որակի հայկական պետության ձևավորման և զարգացման ռազմավարական հայեցակարգ»-ի նախագծի այն հիմնադրույթները, որոնք վերաբերվում են Հայքի (հայության և նրա կազմակերպվածքի) բնութագրին:

Հոդվածը հրապարակվել է 2024 թ. www.ajbever.com կայքում:

«Որպեսզի դերերը չփոխվեն» հոդվածում Կոստան Զարեանի «Սպանիա» գրքում արտացոլված բանաձևումների և լուծումների անդրադարձով ներկայացված է այն վտանգը, որ առանց դիմադրության շարունակվելու պարագայում թուրքական թշնամական կեղծիքը կարող է հաղթել հայկական ճշմարտությանը, որից հետո մեր Հայրենիքի յուրացումը և հայության ինքնության ոչնչացումը կդառնա դառը իրականություն:

Հոդվածը հրապարակվել է 2023 թ. Lragir.am կայքում:

«Զվարթնոց կառավարման համակարգ. Զվարթնոցի տաճարը՝ ազգային առաքելության պատգամ և կազմակերպվածքի մոդել» հոդվածը Արարչի և մարդու (մակրոտիեզերքի և միկրոտիեզերքի) և նրանց կապի ու հարաբերակցության ընկալումային պատկերացումների ճարտարապետականացման առավել լիակատար ու ամբողջական դրսևորման՝ Զվարթնոցի տաճարի ճարտարապետական հայեցակարգի և չափական տվյալների հիման վրա ներկայացնում է հայության Արարատյան առաքելության պատմամշակութային հիմնավորումը և այն վերաստանձնելու հայության արարչահանձն պարտականությունը, ինչպես նաև այդ առաքելության իրականացման կառավարման համակարգի մոդելային նկարագիրը:

Հոդվածը հրապարակվել է 2024 թ. www.ajbever.com կայքում:

«Ժողովրդավարության վերածննդի Արարատյան մոդել» հոդվածն ըստ էության նախորդ հոդվածի շարունակությունն է: Այն առավել մանրամասն և գործնական կերպով ներկայացնում է միջերկրծովյան քաղաքակրթության վրա հիմնված ներկայիս ժողովրդավարության ճգնաժամը և որպես լուծում առաջարկում է Արարատյան քաղաքակրթության վրա հիմնված ժողովրդավարության մոդելային նկարագիրը:

Հոդվածն առաջին անգամ հրապարակվել է 2023 թ.՝ www.ajbever.com կայքում: 2024 թ. նույն կայքում վերահրապարակվել է էապես լրացված և խմբագրված տարբերակով:

«Պետության իրավաքաղաքական հայեցակարգը և ազգի ու պետականության ճակատագիրը» հոդվածը սահմանում է պետության իրավաքաղաքական հայեցակարգը՝ մատնանշելով դրա որոշիչ նշանակությունը ազգի և պետության կյանքի ու ապագայի համար, ինչպես նաև այդ համատեքստում զուգադրում է Հայաստանի Հանրապետության ներկայիս օկուպացիոն և առաջարկվող իրավաքաղաքական հայեցակարգերի բնութագրերը՝ ցույց տալով օր առաջ ազգային իրավաքաղաքական հայեցակարգ որդեգրելու և այն կյանքի կոչելու կենսական անհրաժեշտությունը:

Հոդվածը հրապարակվել է երկու անգամ՝ 2023 թ. սեպտեմբերին և դեկտեմբերին՝ Lragir.am կայքում: 2023 թ. դեկտեմբերին հրապարակված տարբերակը փոքր խմբագրական շտկումներով վերահրապարակվել է 2024 թ. www.ajbever.com կայքում:

«Ազգ-բանակ համակարգ» հոդվածը ներկայացնում է ազգի և պետության անվտանգային-պաշտպանական ներուժի առավելագույն կարողություններ համախմբելու, զարգացնելու և արդյունավետ կերպով կիրառելու համապարփակ անվտանգության համակարգի նկարագիրը:

Հոդվածը հրապարակվել է 2024 թ. www.ajbever.com կայքում:

Նախագիծը գրքի ձևաչափով հրապարակվում է առաջին անգամ: Տեքստի միասնականացման համար կատարվել են անհրաժեշտ խմբագրական միջամտություններ:

Գրքում հղումները և ծանոթագրությունները զետեղված են էջատակերում՝ միասնական համարակալմամբ:

ՀԱՅՔ ՆԱԽԱԳԻԾ

Վարուժան Ավետիսյան

Նպատակ

ՀԱՅՔ նախագծի նպատակն է՝ վերականգնել Հայքի (հայության և նրա կազմակերպվածքի) կարողականությունը և այն ծառայեցնել նրա համամարդկային Արարատյան առաքելության վերաստանձնման գործին:

Հայքի Արարատյան աշխարհայացք

Մարդկությանը հայտնի բոլոր տեսություններն ու գաղափարաբանությունները բխում են երկու՝ հոգևոր կամ նյութական աշխարհընկալումներից:

Հոգևոր աշխարհընկալումը ծնում է արժանապատվության աշխարհայացք և դրանից բխող արժանապատվության մշակույթ ու վարք:

Նյութական աշխարհընկալումը ծնում է օգտապաշտության աշխարհայացք և դրանից բխող օգտապաշտության մշակույթ ու վարք:

Արժանապատվության աշխարհայացքը բխում է կյանքի ոգեղեն ընկալումից և ենթադրում է ոգեղենությունից բխող կենսադիրքորոշում ու գործունեություն: Արժանապատվության աշխարհայացքն անսահմանափակ է թե՛ մտքի ու գիտակցության, թե՛ կամքի ու գործունեության առումներով, քանի որ պայմանավորված է սահման ու վերջ չճանաչող ոգով, որն օժտված է անհրաժեշտ նյութառեսուրսի գեներացման անսպառ կարողականությամբ: Այն չի հարմարվում իրականությանը, այլ, մղվում է ոգու պոռթկումից, խիզախում է մտքով ու կամքով և առաջադրում ու ձգտում է իրագործել իրերի դրությանը հակասող և դրանք փոխելու նկրտում ունեցող մեծ նպատակներ՝ անշեղորեն փոխելով և մեծացնելով առկա հնարավորությունները:

Օգտապաշտության աշխարհայացքը բխում է կյանքի նյութառեսուրսային ընկալումից և ենթադրում է ըստ այդմ կենսադիրքորոշում ու գործունեություն: Օգտապաշտական աշխարհայացքը սահմանափակ է և վերջավոր ոչ միայն մտքի ու գիտակցության, այլև կամքի ու գործունեության առումներով, քանի որ պայմանավորված է սահմանափակ և վերջավոր նյութառեսուրսով: Այն երբեք չի

առաջադրում և, առավել ևս՝ չի իրագործում իրերի դրությանը հակասող և դրանք փոխելու նկրտում ունեցող մեծ նպատակներ, որոնք պահանջում են ոգու պոռթկում և մտքի ու կամքի խիզախում, այլ հարմարվում է իրականությանը և ընդամենը փորձում է գոյատևել առկա հնարավորությունների շրջանակում:

Արժանապատվության աշխարհայացքն արտահայտող գաղափարաբանությունները և, ըստ այդմ՝ դրանցից սնվող հանրությունները, այդ թվում՝ հասարակական-քաղաքական կազմակերպվածքները, հակված են ամբողջականության, համադրման և համագործակցության:

Օգտապաշտության աշխարհայացքն արտահայտող գաղափարաբանությունները և, ըստ այդմ՝ դրանցից սնվող հանրությունները, այդ թվում՝ հասարակական-քաղաքական կազմակերպվածքները, միտված են հատվածականության, տարանջատման և հակամարտության:

Արժանապատվության և օգտապաշտության աշխարհայացքների տարբերությունն առավել ակնառու է արժանապատվության ու ազատության և ֆիզիկական գոյության միջև ընտրության հարցում:

Արժանապատվության աշխարհայացքի տեսակետից արժանապատվությունն ու ազատությունը վեր են ֆիզիկական գոյությունից, ուստի կյանքն անիմաստ է առանց արժանապատվության և ազատության և, ըստ էության, հենց դրանք են կյանքի իմաստը:

Օգտապաշտության աշխարհայացքի տեսակետից ֆիզիկական գոյությունն ամեն ինչից վեր է և, ըստ էության՝ հենց դա է կյանքի իմաստը:

Արժանապատվության աշխարհայացքն ազգային չափման մեջ կայանում և գործառում է ինքնության առանցքի շուրջ:

Օգտապաշտության աշխարհայացքն ազգային չափման մեջ կայանում և գործառում է անձի առանցքի շուրջ:

Հայության հավատամքային համակարգն արտացոլող Սասնա Ծռեր էպոսում այս հակադրությունը տիպաբանորեն արտահայտված է Սասնա Ծռերի՝ Սանասարի, Մեծ Միհրի, Դավթի, Փոքր Միհրի և նրանց հակադրվող Ցռան Վերգոյի համեմատականությամբ:

Նոր և նորագույն պատմության շրջաններում ձևավորված քաղաքական տեսություններն ու գաղափարաբանությունները, կամ, այլ կերպ ասած՝ դասական կուսակցական-քաղաքական հայացքները, հիմնականում օգտապաշտության աշխարհայացքի և մշակույթի մասնակի, հատվածական մեկնաբանության տարատեսակ դրսևորումներ են:

Նույնիսկ այն դեպքերում, երբ դրանք ծնվել են արժանապատվության աշխարհայացքից ու մշակույթից և հետապնդել են/հետապնդում են ազգային և մարդկային վեհ նպատակներ, սակայն, միևնույն ժամանակ՝

գաղափարականորեն ինքնասահմանափակված են որևէ «իզմ»-ով և/կամ գործունեականորեն դիմում են օգտապաշտության, ապա, անկախ գործադրած ջանքերից, չեն կայանում որպես ազգային իղձի մարմնացում, քանի որ մնում են արժանապատվության աշխարհայացքային ամբողջականությանը, ուստի նաև՝ իմաստնությանը, ոչ հասու, ինչի հետևանքով դառնում են հատվածական ու մասնակի և սպառվում են՝ զուգահեռաբար ծնելով հակադրականություն ու պառակտում:

Միայն ամբողջական աշխարհայացքն է հասցնում իմաստնության և միայն իմաստնությունն է հասու ամբողջական աշխարհայացքի[1]:

Հայքի աշխարհայացքի տեսակետից Հայրենիքը, ազգը, մշակույթը, քաղաքակրթությունը և պետությունը հարաբերակցվում են հետևյալ կերպով:

Ազգը ստեղծում է մշակույթ, մշակույթը ստեղծում է քաղաքակրթություն, քաղաքակրթությունը ստեղծում է պետություն:

Ըստ այդմ՝ պետությունը կոչված է պահպանելու քաղաքակրթությունը, քաղաքակրթությունը կոչված է պահպանելու մշակույթը, մշակույթը կոչված է պահպանելու ազգը:

Հայրենիքը ազգ-մշակույթ-քաղաքակրթություն երրորդության և դրա կրիչների և դրսևորումների ամբողջությունն է՝ թե՛ որպես ինքնին տիեզերական-բնազանցական բովանդակ համակարգ, թե՛ որպես այդ համակարգի հոգեմտավոր և նյութական բովանդակություն և ձև, նաև՝ որպես այդ ամենի նախաստեղծ, անցյալ, ներկա և ապագա արարչագործություն՝ ներառյալ՝ ոգի, աստվածներ, նախնիներ, սերունդներ, հերոսներ, առաքելություն, ճակատագիր, ռիթմ, էպոս, հավատ, երկիր, լեզու, ոճ, տիպ, հիշողություն, իղձ, խորհուրդներ և խորհրդանիշներ, ժառանգություն, զգացմունքներ և զգացումներ: Այն ամենը, ինչ մարդուն ինքնություն, այսինքն՝ ազգային հանգ ու կերպ ունեցող անձ և անհատ մարդ է դարձնում:

Ասվածի համատեքստում ակնհայտ է դառնում, որ ազգն ու Հայրենիքն են առաջնային, մինչդեռ պետությունը դրանք պահպանելու ու զորացնելու միջոց-գործիք է:

Ուստի, ինչպես ընդամենը շենքը տուն չէ, այնպես էլ ընդամենը պետությունը դեռևս Հայրենիք չէ:

Այդու՝ բնակչությունը կամ նույնիսկ քաղաքացիների ամբողջությունը դեռևս ազգ չէ:

[1] Աշխարհայացքից բխող քաղաքական հայացքների (աջ, ձախ և այլն) և ճանաչողականության մակարդակի հարաբերակցությունն արտահայտող քաղաքական պարույրի տեսքի և բնութագրի մասին տե՛ս Վարուժան Ավետիսյան, «Ժողովրդավարության վերածնունդի Արարատյան մոդել» հոդվածը:

Երբ փոխարինում են՝ քաղաքակրթությունը մշակույթին և/կամ պետությունը Հայրենիքին, ապա դրանք դառնում են քաղցկեղ և սպանում են մարդը, ազգը և Հայրենիքը:

Նաև՝ պետք չէ շփոթել նմանը նույնի հետ:

Այսօր երկրագունդը գերբեռնվել է ուրիշի մշակույթի վրա հիմնված մակաբույծ քաղաքակրթություններով և, առավել ևս՝ ուրիշի քաղաքակրթության վրա կառուցված գիշատիչ պետություններով:

Փոփոխվող աշխարհ և Հայք

Աշխարհը մտել է անցումային շրջափուլ, որը բնութագրվում է կայունության նկատմամբ փոփոխության գերակայությամբ:

Անցումային շրջափուլում բնության օրենքով կայունը դառնում է փոփոխականի ածանցյալ, արգասիք և հատված, կայունը և դրա հետ կապված ամեն ինչ դրսևորվում են փոփոխականի մեջ և փոփոխության համատեքստում:

Ներկայիս փոփոխությունը կոչված է Լաո Ցզիի՝ քաղաքակրթության գործունեական կոդն արտահայտող «ուղի-առաքինություններ-բարոյականություն-օրենք-սովորույթ» հայտնի բանաձևի հայելացմամբ վերանայելու-վերադարձնելու-կարգաբերելու հատկապես գլոբալ կրոնների տիրապետության շրջափուլում հաստատված կայունը, որ բնական մշակույթների հետ կապը խզելու և դրանց ժխտմամբ ինքնահաստատվելու նպատակով տարված՝ գլխիվայր շուռ է տվել այդ բանաձև-կոդը և կյանքը ենթարկեցրել է «սովորույթ-կեղծօրենք-կեղծբարոյականություն-կեղծառաքինություն-կեղծուղի» արհեստական, հակատրամաբանա-կան և քայքայիչ բանաձևին:

Մարդկության ճակատագրի համար որոշիչ նշանակություն ունի հայության և նրա Հայրենիքի՝ մարդկային քաղաքակրթության օրրան Հայկական բարձրավանդակի ճակատագիրը:

Պատահական չէ, որ այսօր Հայկական բարձրավանդակի համար բնիկների և եկվորների պայքարը թևակոխում է վերջին և վճռական շրջափուլ, քանի որ Հայկական բարձրավանդակը միայն աշխարհագրական տարածք և նույնիսկ միայն Հայրենիք չէ, որի համար կողմերը պետք է բախվեն և որոշեն դրա պատկանելությունը, ինչը բազմիցս և գրեթե ամենուրեք տեղի է ունենում աշխարհում:

Հայկական բարձրավանդակն առաջին հերթին համամարդկային, համատիեզերական նշանակության բնազանցական մի տիրույթ է, որը եկվոր բարբարոսներին հանձնելը կհանգեցնի ոչ միայն հայության ոչնչացման, այլև մարդկության վայրագացման և կործանման շղթայական գործընթացի:

Այդ պատճառով Հայքը վերստին արդիական է դառնում որպես համամարդկային կերպափոխման ճակատագրական առանցք, կիզակետ ու սաղմնային մոդել:

Ընդսմին՝ կարևոր չէ, թե աշխարհում ովքեր և որքան են սա հասկանում:

Կարևորն այն է, որ հայերը կանչված և կոչված են Հայկական բարձրավանդակը պահպանելու և կիրառելու որպես մարդկության ու մարդկայնության ոգու, խղճի և մտքի ակունք՝ իր ֆիզիկական և զգայագիտակցական բոլոր առումներով՝ որպես առանցք և փարոս դիտելով ու դարձնելով Արարատը՝ Հայկական բարձրավանդակի միջուկը:

Վերը նշվածի հաշվառմամբ՝ ներկայումս փոփոխությունը և կայունությունը տարանջատվում և համադրվում են հետևյալ կերպով.

Երևույթ	**Փոփոխություն**	**Կայունություն**
Հիմք	Էթիկա	օրենք, կանոնակարգ
դրսևորում	թրթռացող համագործակցություն, որի համակարգաստեղծը գործընկերության հրավերն է	կայուն կազմակերպվածություն, որի համակարգաստեղծը իրավասու որոշումն է
կազմության ձև	ամպ, տիրույթ, հարթակ և այլն	կառուցվածք
միջավայրեր և գործընթացներ	նախաձեռնողական-ազատ-ստեղծագործական	կանոնակարգված
հոգեբանական վերաբերմունք	պատասխանատվություն	պարտականություն
Ներառականություն	Էլիտարություն	զանգվածայնություն
Կանոնակարգում	Պայմանագրային	կանոնադրական
Վիճակ	դինամիկ-փոփոխական-անորոշ	ստատիկ-կայուն-որոշակի
Կառավարում	հեղինակության իշխանություն և	ուժի իշխանություն և վերահսկողություն

	ինքնավերահսկողություն	
Կապեր	Հորիզոնական	ուղղահայաց

Մարդկության, այդ թվում՝ հայության, ընթացքի հերթական շրջադարձին աղետաբեր փակուղուց խուսափելու և դրա փոխարեն նոր շրջափուլ մտնելու համար պետք է անցնել թրթռացող համագործակցության և կայուն կազմակերպվածության կանոնակարգումների հատման տիրույթով:

Այդ հատման-անցման տիրույթի գործունեական կանոնակարգման հիմքը պրոտոկոլն է:

Այդ տիրույթում Հայք կազմակերպվածքի պետությունը և այլ կազմակերպությունները պետք է կատարեն թրթռացող համագործակցությամբ պրոտոկոլի հիման վրա կայացված որոշումները:

Հայք և հայության ու հայի գաղափար-իդեա

Հայ էության հոգևոր աշխարհընկալումից բխող արժանապատվության և ինքնության աշխարհայացքով առաջնորդվող Հայք կազմակերպվածքը պետք է հայությանը համախմբի Սասնա Ծռեր էպոսում արտացոլված հավատամքային համակարգից բխող նրա համամարդկային առաքելությունը («Արարատյան մարդու» առաքելություն) վերաստանձնելու նպատակի շուրջ:

Հայությունը, պայքարի այս վերջին և վճռական շրջափուլը հոգուտ իրեն և մարդկության հաղթահարելու համար, պետք է մղվի Արագածի նախաստեղծ ներուժից ու տիեզերական լույսից բխող իր ոգու զորությունից, դառնա իր հոգևոր-մշակութային արմատին և կարողանա ինքնակազմակերպվել, վերըմբռնել և վերաստանձնել Կենաց իմաստնության արարչական լույսը տարածելու և արդարություն հաստատելու իր համամարդկային Արարատյան առաքելությունը՝ հանուն հայության առանցքային դերակատարությամբ ներկայիս հակամարտածին-քանդիչ Երուսաղեմակենտրոն աշխարհի փոխարեն Արարատակենտրոն գործակցածին-արարչական աշխարհի ստեղծման:

Միայն այս ուղով Հայքը կարող է վերածնվել, այդ թվում՝ քաղաքակրթորեն և պետականորեն, ապա՝ վերածննդի լույսը տանել մարդկությանը՝ բուժելու համար նրան մակաբույծ քաղաքակրթությունների և գիշատիչ պետությունների հարուցած քաղցկեղային անկյալությունից:

Հայությունը և, ինչպես նաև վերաբերելի դեպքերում՝ հայ անհատը, հանուն իր օրինակով և գործով Կենաց իմաստնության արարչական լույսը տարածելու և արդարություն հաստատելու այդ համամարդկային առաքելության նորովի վերաստանձնման, պետք է.

1. Վերագտնի-վերաճանաչի «Արարատյան մարդուն» և, ըստ այդմ՝ ներդաշնակորեն համադրելով իր արքետիպային ժառանգականությունը և հարմարողական փոփոխականությունը՝ ներքին ինքնահաղթահարմամբ հասնի համազգային զգայագիտակցական կերպափոխման, արդիականացնի հայկական ինքնությունն ու վերբեռնի իր կյանքը՝ կարող դառնալով փոփոխվող աշխարհում Արարատյան քաղաքակրթության ներառական կարողությունների կիրառմամբ և նորացուցիչ կենսատու արժեքների և գաղափարների ներբերմամբ նախ կամրջելու և մերելու մյուս քաղաքակրթությունները, ապա նաև՝ նպաստելու մարդկության վեհացման:

2. Առավելագույնս գեներացնի իր ինտեգրալ կարողականությունը՝ որպես ոչ միայն հայկական, այլև նախահայկական, հարհայկական, հայամետ, ինչպես նաև հայկականի հետ համակցվող էթնոմշակութային բաղադրիչները Արարատյան քաղաքակրթության «Հայք-Արմենիա» քաղաքակրթական կորիզի մեջ ներբերող ու ներդաշնակող ներուժականություն:

3. Վերակազմակերպվի որպես Հայկական պետության միջուկ-առանցքի շուրջը «Հայք-Արմենիա» քաղաքակրթական միջուկ-առանցքով «Հայկական աշխարհ» համահայկական ցանցային կազմակերպվածք և դառնա Արարատյան քաղաքակրթության առաջնորդությունը վերաստանձնող ստեղծարար սուբյեկտ:

4. Հայկական պետության միջուկ-առանցքով «Հայկական աշխարհ» համահայկական ցանցային կազմակերպվածքը կայացնի և գործառի որպես միջքաղաքակրթական և միջտարածաշրջանային աշխարհառազմավարական նախագիծ («Հայք» նախագիծ), որը համահայկական համախումբ կարողականության, ինչպես նաև դաշնակցային և գործընկերային կարողությունների ներգրավման և համաշխարհային ու տարածաշրջանային նախագծերում և գործընթացներում ակտիվ ու նախաձեռնողական մասնակցայնության, այդ թվում՝ քաղաքակրթական, անվտանգային ու տնտեսատեխնոլոգիական հանգույցի վերածվելու և տարածաշրջանի պետականազուրկ ժողովուրդների իրավունքների պաշտպանության առաքելություն ստանձնելու շնորհիվ.

1) գլոբալի և լոկալի համադրմամբ ցանցային սկզբունքով կազմակերպում և ներազգային ու միջազգային չափումներում արդյունավետ կենսունակության վիճակի է բերում հայկական գործոնը,

2) դրսևորվում է որպես «Նորարար ազգ-սթարթափ կազմակերպվածք»՝ դրա միջուկ Հայկական պետությունը դարձնելով միջքաղաքակրթական և միջտարածաշրջանային «Կամուրջ-ամրոց»,

3) իրականացնում է դեպի դուրս ուժ պրոյեկտող անվտանգային ռազմավարություն, որի հիմնական բաղադրիչը համապարփակ անվտանգության «Ազգ-բանակ» համակարգն է:

5. Վերատիրանա Արարատյան առաքելության վերաստանձնման գրավականին՝ Արարատի իրավունքին և, ըստ այդմ՝ Հայկական բարձրավանդակ-Հայքին, գերակշիռ մասով վերահաստատվի Հայրենիքում, և հնարավորինս վերահայացնի այն՝ ամբողջացնելով իր արարչագործության մեկնարկային տարածքը:

6. Արարատյան քաղաքակրթության «Հայք-Արմենիա» քաղաքակրթական կորիզի շուրջ նախաձեռնի այդ քաղաքակրթության մարմինը կազմող «Արարատյան աշխարհ» միջավայրի արդիական վերակայացումը՝ ներգրավելով և համախմբելով Մեծ Մերձավոր Արևելքի, հարակից տարածաշրջանների, ինչպես նաև աշխարհով մեկ սփռված Արարատյան քաղաքակրթության այլ էթնոմշակութային ինքնություններ ունեցող սուբյեկտներին:

7. Այս խնդիրները լուծելու համար որպես հիմնական գործառութային լծակներ (մեխանիզմներ) կիրառի Հայկական «մերան»-ը, Արարատյան արժեհամակարգը և քաղաքակրթական ու տեխնոլոգիական կամուրջ-միջնորդի իր կարողականությունը:

Հայքի կազմակերպվածքը, հայեցակարգը, արժեքային հիմնասյունները և իրականացման հիմնական նախադրյալները

1. Հայքի Արարատյան առաքելությունը վերաստանձնելուն կարող է ունակ լինել միանգամայն նոր որակի Հայկական պետության միջուկ-առանցքի շուրջը ձևավորվող և գործառող ցանցային կազմակերպվածքը («Հայոց աշխարհ» կամ «Հայկական աշխարհ» ցանցապետություն կամ Հայկական ցանց):

Հայքի կազմակերպվածքը՝ նոր որակի Հայկական պետության, հնարավոր դեպքերում՝ նաև Հայկական ցանցի մյուս բաղադրիչների միջոցով.

1) հիմնվում և գործառում է հոգևորի ու նյութականի, բնականի ու բանականի, կենսաբանականի ու սոցիալականի, օրգանականի ու տեխնիկականի, ավանդականի ու արդիականի, անհատականի ու հանրայինի, ազգայինի ու համամարդկայինի ներդաշնակ միասնության վրա,

2) հարգում է համամարդկային առաքինություններից բխող և նշված ներդաշնակ միասնությանն ու դրանց փոխադարձ զարգացմանը միտված մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները և ապահովում է դրանց գերակայությունն ու արդյունավետ պաշտպանությունը,

3) երաշխավորում է հայության և հայ մարդու, Հայաստանի բոլոր քաղաքացիների ու բնակիչների, ընտանիքի, համայնքների և էթնիկական խմբերի ազատ, ներդաշնակ ու արժանապատիվ գոյությունը և ստեղծագործ զարգացումը,

4) ապահովում է մարդ-մարդ, մարդ-հասարակություն, մարդ-բնություն, մարդ-պետություն, հասարակություն-բնություն, հասարակություն-պետություն հարաբեր-ությունների ասպարեզում նոր՝ ավելի ներդաշնակ, համերաշխ և

համագործակցային, որակի կենսակերպի, այդ թվում՝ հանրային համակեցության և քաղաքական ու սոցիալ-տնտեսական հարաբերությունների համակարգերի ձևավորումն ու զարգացումը, ինչպես նաև հոգևոր և ֆիզիկական առումներով ներդաշնակորեն զարգացած, մարդասեր, բնասեր ու հայրենասեր մարդու և քաղաքացու դաստիարակումը,

5) օժտված է լիարժեք ինքնիշխանությամբ,

6) հզոր է և մրցունակ,

7) ունի հայության շահերն արտահայտող ու նրա անօտարելի իրավունքների վերատիրացմանը միտված նպատակներ առաջադրելու և իրագործելու ու այդ նպատակներից բխող խնդիրներ լուծելու ունակ կառավարման համակարգ, որն ապահովում է մասնակցայնություն, հետադարձ կապ ու հաշվետվայնություն, ինչպես նաև ռազմավարական հարցերի լուծում՝ բացառապես ժողովրդի կամքի արտահայտման միջոցով,

8) գեներացնում է ազգային և համամարդկային ներդաշնակ զարգացմանը, տարածաշրջանային և համաշխարհային համագործակցությանը նպաստող նոր գաղափարներ ու ծրագրեր և նախաձեռնում է դրանց իրագործումը և/կամ մասնակցում է արդեն գոյություն ունեցող նմանաբնույթ գործընթացներին,

9) Հայաստանը դարձնում է համայն հայության Հայրենիք և ի շահ հայության ու յուրաքանչյուր հայ մարդու՝ իր առանցքի շուրջը ձևավորվող «Հայոց աշխարհ» ցանցային համակարգում առավելագույնս ներգրավում և դրա միջոցով արդյունավետ կերպով գործադրում է հայության ռեսուրսներն ու հնարավորությունները:

2. Իր առաքելությունը համակարգված և ծրագրված կերպով արդյունավետորեն իրականացնելու համար Հայք կազմակերպվածքը պետք է մշակի և ընդունի միասնական հայեցակարգային փաստաթուղթ, պայմանականորեն՝ Ազգային ռազմավարական հայեցակարգ:

Ազգային ռազմավարական հայեցակարգը համազգային և պետական քաղաքական-ծրագրային հիմնական փաստաթուղթն է, որում համակարգված ձևով ներկայացվում են ներպետական, համազգային և արտաքին հարաբերությունների մակարդակներում անհատի, ընտանիքի, համայնքի, հասարակության, պետության և համայն հայության հոգևոր-մշակութային առողջացմամբ ինքնակերպափոխվելու և մարդկությանը կերպափոխելու կարողականության գեներացման և արդյունավետ կերպով կիրառման ռազմավարության հիմնադրույթները:

Ազգային ռազմավարական հայեցակարգը պետք է արտահայտի իր իրականացման արժեհամակարգային ուղենիշը, գերակայությունները, նախադրյալները, նպատակները խնդիրները և սկզբունքները:

Ըստ այդմ՝

1) Ազգային ռազմավարական հայեցակարգի արժեհամակարգային ուղենիշը կազմում են հավատի, սիրո, ճշմարտության, արժանապատվության և ազատության արժեքային-աշխարհայացքային համատեքստում ներդաշնակորեն համադրվող արիության, չափավորության, արդարության և ողջախոհության համամարդկային առաքինությունները:

2) Ազգային ռազմավարական հայեցակարգը մշակվում է արժեհամակարգային ուղենիշին համապատասխան և իրականացվում է.

- կենսագործունեության բոլոր ոլորտների համար միասնական՝ ներպետական, համազգային և արտաքին քաղաքականության շարակարգված պլանավորման և իրագործման միջոցով, որը Հայկական պետությունը մշակում է Հայրենիքում և արտերկրում գործող ազգային ու հասարակական կառույցների և առանձին անհատների ներգրավմամբ՝ հաշվի առնելով ոլորտային, տարածքային և այլ բնույթի առանձնահատկությունները,
- ազգային-պետական շահերի գերակայության, ազգային ինքնության ու քաղաքակրթական ինքնատիպության պահպանման ու զարգացման պայմանով,
- հենվելով առավելապես ազգային ներուժի վրա՝ անհրաժեշտաբար օգտագործելով նաև այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների փորձն ու աջակցությունը,
- ազգային շահերն արտահայտող նպատակների իրագործմամբ ու այդ նպատակներից բխող խնդիրների լուծմամբ,
- ազգային ռազմավարական հայեցակարգի հիմնասյունների պահպանմամբ և պաշտպանությամբ (վերաբերող պարագաներում՝ նաև վերակերտմամբ և/կամ վերականգնմամբ և/կամ վերհանմամբ և/կամ զարգացմամբ և/կամ տարածմամբ), ինչպես նաև դրանց դեմ ուղղված սպառնալիքների պատեհաժամ բացահայտմամբ, կանխմամբ ու չեզոքացմամբ:

3) Ազգային ռազմավարական հայեցակարգի իրականացման հիմնական երաշխիքը հայության և Հայաստանի ներուժի առավելագույն համախմբումն ու արդյունավետ կիրառումն է:

4) Ազգային ռազմավարական հայեցակարգը ազգային շահերի իրացման ու նպատակների իրագործման համար պետական մարմիններից, հայաստանյան հանրությունից և համայն հայությունից պահանջում է համակարգված կառուցողական գործունեություն, համահայկական ներուժի համախմբման և փոխպայմանավորված գործադրման ազգային-պետական համադրում: Դրա իրականացման ձգձգումը կամ ձախողումը Հայկական պետության՝ ներքին և արտաքին բարդ ու վտանգներով լեցուն միջավայրում գտնվելու, ինչպես նաև հայության մեծ մասի՝ օտար պետություններում բնակվելու պայմաններում անմիջական սպառնալիք է պետականության և ազգի գոյության համար:

5) Ազգային ռազմավարական հայեցակարգի հիման վրա մշակում և ընդունում են դրա նպատակների ու խնդիրների իրականացման ծրագրային գործողությունները պարունակող ոլորտային ռազմավարություններ:

6) Ազգային ռազմավարական հայեցակարգը ենթակա է ճշգրտումների և վերանայման՝ ըստ ներպետական, ներազգային ու միջազգային իրադրության և հայության ռազմավարական գերակայությունների փոփոխման ու նպատակների իրագործման:

3. Ազգային ռազմավարական հայեցակարգի հիմնասյուններն (պահպանության և պաշտպանության (վերաբերող պարագաներում՝ նաև վերակերտման և/կամ վերականգնման և/կամ վերհանման և/կամ զարգացման և/կամ տարածման) ենթակա հիմնական արժեքներ) են.

1) Հոգևոր Հայաստանը (այսուհետև՝ նաև արժեքային միջուկ)՝ հայոց բնօրրան Հայկական բարձրավանդակում, ինչպես նաև երկրագնդի այլ վայրերում մարդկության քաղաքակրթության սաղմնավորման պահից մինչ օրս ստեղծված և ապագայում ստեղծվելիք հայոց հոգևոր-մշակութային համակարգը, որի հիմնական բաղադրիչներն են.

- Հայկական ինքնությունը՝ հայոց գենային-էթնիկ ու հոգևոր-մշակութային հիմնական և համակարգաստեղծ առանձնահատկությունը, դրանց ինքնատիպությունը, կենսակերպի խորքային-արմատական քաղաքակրթական յուրահատկությունը:

- Հայոց լեզուն՝ Հոգևոր Հայաստանի համակարգաստեղծ բաղադրիչն ու առանցքը և հայկական ինքնության ձևավորման, պահպանման ու զարգացման հիմնական գործոնը՝ գրաբարի և միջին հայերենի շերտերով և աշխարհաբարի արևելահայերեն ու արևմտահայերեն ճյուղերով:

- Հայության և Հայաստանի հոգևոր-մշակութային հարստությունը՝ հոգևոր-մշակութային հիշողությունը, ժառանգությունը՝ պահպանված, հիշվող և հետագայում հայտնաբերվող հոգևոր և նյութական մշակույթի ստեղծագործությունները, նոր ստեղծվող հոգևոր-մշակութային արժեքները:

- Մարդկության քաղաքակրթության ակունքից սերող և դրա ձևավորման ու զարգացման գործում զգալի ավանդ ունեցող հայության ու Հայաստանի քաղաքակրթական դերը (Հայության Արարատյան առաքելությունը), նրանց ժառանգորդությունը, համաշխարհային քաղաքակրթության գանձարանում հայկական մասնաբաժինը, այդու՝ իր Հայրենիք Հայկական բարձրավանդակին վերատիրանալու, իր հիմնական մասով այնտեղ վերաբնակվելու և այն հնարավորինս վերահայացնելու հայության իղձը:

- Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ հայության հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում իր բացառիկ առաքելությամբ:

2) Հայ ազգը՝ Հոգևոր Հայաստանի (արժեքային միջուկի) գենային-էթնիկ և/կամ հոգևոր-մշակութային համակարգի հիմնարար բաղադրիչները տեսակորոշիչ չափաբաժնով կրող, դրա միջոցով ազգային և համաշխարհային հոգևոր-մշակութային, տնտեսական ու գիտատեխնիկական զարգացում ապահովող մարդկանց հանրությունը:

3) Հայ մարդը, Հայաստանի քաղաքացին և բնակիչը՝ հոգևորի ու նյութականի, բնականի ու բանականի, կենսաբանականի ու սոցիալականի, օրգանականի ու տեխնիկականի, ավանդականի ու արդիականի, անհատականի ու հանրայինի, ազգայինի ու համամարդկայինի ներդաշնակ միասնության պայմաններում ապրելու և արարելու իրենց իրավունքներով, հիմնարար ազատություններով ու պարտականություններով:

4) Արժեքային միջուկի հենքի վրա վերակերտվող ու արմատավորվող նոր որակի կենսակերպը՝ դրան համապատասխան հանրային համակեցությունը և սոցիալ-մշակութային հիմնական բաղադրիչները՝ համայնքը, ընտանիքը, մարդը և քաղաքացին:

5) Ազգային փոքրամասնություններն ու դրանց առանձին ներկայացուցիչները՝ իրենց ինքնությամբ, հոգևոր-մշակութային արժեքներով և իրավունքներով ու ազատություններով, համամարդկային և ազգային հոգևոր-մշակութային արժեքները հարստացնող, տնտեսությունը, գիտությունն ու տեխնոլոգիաները զարգացնող իրենց գործունեությամբ, հայերի և միմյանց հետ ներդաշնակ համագոյակցությամբ ու համագործակցությամբ, Հայաստանի հզորացմանը նպաստող՝ իրենց էթնիկ պետությունների և/կամ օտարերկրյա այլ պետություններում բնակվող ազգակիցների հետ հարաբերությունների զարգացմամբ:

6) Հայաստանի տարածքը՝ Հայրենիքի նյութական կրողն ու հիմքը, Հայ ազգի ծննդի, գոյության, կենսագործունեության և զարգացման պարփակ ու ամբողջական հիմնական միջավայրը, Հայաստանի նյութատնտեսական հարստության կրողը:

7) Հայաստանի տարածքում հայ ազգի գերիշխանությունը և նրա պետության ինքնիշխանությունը:

8) Հայության, նրա պետության և համահայկական ցանցապետության կենսունակությունը ու դրա հիմնական բաղադրիչները՝ ռազմավարական ինքնաբավությունը, ինքնուրույնությունը, տեսակակայունությունը, ինքնակատարելա-գործման ունակությունը, բավարար հզորությունը, մրցունակությունը:

9) Հայաստանի բնական միջավայրը՝ հայության և Հայաստանի մյուս բնակիչների հոգևոր ու ֆիզիկական առողջ կենսագործունեության ապահովման հիմնական նյութական միջավայրն ու գործոնը:

10) Հայաստանի և հայության՝ ազգային նպատակների իրագործմանն ու խնդիրների լուծմանը ծառայող և/կամ ծառայելուն ունակ հոգեմտավոր և գիտատեխնիկական ներուժն ու նյութատեխնիկական հարստությունը:

11) Ազգային նպատակներ առաջադրելու ու իրագործելու և դրանցից բխող խնդիրներ լուծելու ունակ պետական կառավարման համակարգը:

12) Նոր որակի հայկական պետության և համահայկական ցանցապետության տեղեկութային համակարգն ու տեղեկութային տիրույթը:

4. Ազգային ռազմավարական հայեցակարգի իրականացման հիմնական նախադրյալներն են՝

1) Հայության ազգային համախմբումն ու քաղաքական ինքնակազմակերպումը:

2) Ազատ և ստեղծագործ հայ մարդու ու Հայաստանի քաղաքացու և ազատ և ստեղծագործ հայության գոյության ու գործունեության ապահովումը:

Մեկնարկ

«Հայք» նախագծի մեկնարկի համար անհրաժեշտ է.

1. Հասկանալ պատմության ընթացքն ու հեռանկարը (ուստի նաև՝ իրավիճակն ու զարգացումների օբյեկտիվ միտումները) և ըստ այդմ սահմանել քաղաքական գերակայությունները, առաջնահերթություններն ու նպատակները՝ ձգտելով հնարավորինս ճշգրիտ կերպով որոշել դրանց վրա ազդելու սահմանները և առայժմ անհաղթահարելի երևույթները:

2. Զուգահեռաբար՝ կայացնել «Հայք» նախագծի հղացման և իրագործման ունակ ազգային հոգեմտավոր կորիզային շերտ և դրա ջանքերով ստեղծել ներազգային և համամարդկային «թրթռացող համագործակցության» ցանցային միջավայրեր:

3. «Թրթռացող համագործակցությամբ» ազգային հոգեմտավոր կորիզային շերտի հղացած մեկնարկային արձանագրումներին և որոշումներին համապատասխան ձեռնամուխ լինել «Հայք» նախագծի իրագործմանը:

4. «Հայք» նախագծի իրագործման առաջին և համակարգաստեղծ քայլը պետք է լինի հայության համախումբ ներուժի գործադրմամբ և դաշնակցային ու գործընկերային ներուժի ներգրավմամբ Հայկական հարցի (ներառյալ՝ Արցախի հարցի) լուծման համատեքստում ներկայիս Հայաստանի Հանրապետության՝ որպես 1918-20 թթ. Հայաստանի Հանրապետության շարունակություն ինքնիշխան, ժողովրդավարական և կենսունակ ազգային պետության վերականգնումը (ներառյալ՝ նրա տարածքային ամբողջականության վերականգնումը) և վերակերտումը:

Սա առաջին հերթին ենթադրում է ի կատարումն 1990 թ. օգոստոսի 23-ի Հայաստանի անկախության մասին հռչակագրի պահանջների՝ ընդունել Անկախ պետականության հաստատման գործընթացի ամբողջացումն ազդարարող «Հայաստանի Հանրապետության վերականգնման մասին» հռչակագիր (այսուհետև՝ Հռչակագիր) և դրանով.

1) Հայաստանի Հանրապետությունը հռչակել որպես 1918-20 թթ. Հայաստանի Հանրապետության շարունակություն,

2) իրավաքաղաքական գնահատական տալ Հայաստանի Հանրապետության ստեղծման, օկուպացիայի և անեքսիայի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մասնակի վերականգնման ամբողջ (1918 մայիսի 28-ից մինչ Հռչակագրի ընդունման պահը), ժամանակահատվածին և նախանշել Հայաստանի Հանրապետության վերականգնման հիմնական անցումային քայլերը (տես կից Հավելվածը):

Հավելված

«Հայաստանի Հանրապետության վերականգնման մասին»

հռչակագրի նպատակները և խնդիրները

Իրավաքաղաքական գնահատական

1. Ներկայացնել 1918-20 թթ. Հայաստանի Հանրապետության ստեղծման և կայացման պատմությունը՝ հիշատակելով Հայաստանի Հանրապետության և նրա տարածքի ու սահմանների ճանաչման վերաբերյալ միջազգային-իրավական ակտերը, առաջին հերթին՝ Ազգերի Լիգայի հատուկ հանձնաժողովի 1920 թ. փետրվարի 24-ի Ձեկույց-առաջարկը Ադրբեջանի և Վրաստանի հետ սահմանի վերաբերյալ և ԱՄՆ Նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թ. նոյեմբերի 22-ի Իրավարար վճիռը Թուրքիայի հետ սահմանի վերաբերյալ:

2. Դատապարտել և առ ոչինչ հայտարարել 1918-20 թթ. Հայաստանի Հանրապետության դեմ քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի 1920-21 թթ. ագրեսիայի օկուպացիայի ու անեքսիայի արդյունքներն արձանագրած փաստաթղթերը, այդ թվում և առաջին հերթին՝ 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագիրը և 1921 թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագիրը:

3. Նկարագրել քեմալաթուրքական (1920 թ. դեկտեմբերի 2 – առ այսօր) և խորհրդառուսական (1920 թ. դեկտեմբերի 2 – 1991 թ. դեկտեմբերի 26) օկուպացիան և անեքսիան, դրանց համատեքստում Հայաստանի Հանրապետության տարածքի մի մասը (Արցախ, Նախիջևան, Գարդմանք և այլն) Խորհրդային Ադրբեջանին հանձնումը, ինչպես նաև ԽՍՀՄ լուծարումից հետո այդ մասի

նկատմամբ Ադրբեջանի Հանրապետության տիտղոսի վերագրումը՝ հայտարարելով այս ամենին հանգեցրած ակտերի ու գործողությունների ապօրինի, անվավեր ու առ ոչինչ լինելը, ուստի նաև՝ նախնական վիճակի վերականգնման ու Հայաստանի Հանրապետությանը հասցված վնասների փոխհատուցման անհրաժեշտությունը:

4. Ապօրինի և առ ոչինչ հայտարարել Հայաստանի Հանրապետության տարածքի մեկ այլ մասի վրա ՀԽՍՀ ստեղծումը, նրա անունից, նրա վերաբերյալ և/կամ նրա տարածքն ու սահմանները Հայաստանի Հանրապետության տարածքի ու սահմանների ճանաչման հիմք համարող կամ որևէ ձևով դրան առնչվող բոլոր միջազգային պայմանագրերը և այլ փաստաթղթերը, ինչպես նաև ներպետական և այլ ակտերը, այդ թվում և առաջին հերթին՝ ԽՍՀՄ կազմավորման մասին 1922 թ. դեկտեմբերի 30-ի պայմանագիրը:

5. Նկարագրել Հայաստանի Հանրապետության անկախության դե յուրե վերականգնումից հետո (1991 թ. դեկտեմբերի 26 – մինչև Հռչակագրի ընդունման պահը) Ռուսաստանից Հայաստանի Հանրապետության դե ֆակտո կախյալությունը՝ որպես կիսագաղութային վիճակ:

6. Զուգահեռաբար՝ նկարագրել Արցախի զավթման և Հայաստանի Հանրապետության լուծարման ու հայկական գործոնի չեզոքացման նպատակով 2020 թ. սեպտեմբերի 27-ին առնվազն ռուս-թուրք-ադրբեջանական պայմանավորվածությամբ սկսված 44-օրյա պատերազմի պատճառներն ու հետևանքները, դրանց համատեքստում բնութագրել պատերազմին հաջորդած իրադարձությունները, ներառյալ՝ շփման գծի հատվածում տարբեր մասշտաբների ադրբեջանական հարձակումներն ու զավթումները, Արցախի ամբողջական զավթումն ու հայաթափումը և ապօրինի սահմանազատումն ու սահմանագծումը, այդ ամենի բերմամբ՝ Հայաստանի վերածումը Թուրքիայի գերակայությամբ ձևավորվող տարածաշրջանում Ադրբեջանի պրոտեկտորատի:

7. Ապօրինի և առ ոչինչ հայտարարել Ռուսաստանի, Թուրքիայի, Ադրբեջանի և/կամ այլ օտարերկրյա պետության թելադրանքով և/կամ նրանց կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկած՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը յուրացրած ու պետությունը զավթած բոլոր վարչակազմերի ձեռամբ Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնումից հետո (1991 թ. դեկտեմբերի 26 – մինչև Հռչակագրի ընդունման պահը) Հայաստանի Հանրապետության տիտղոսի, տարածքի և սահմանների վերաբերյալ կնքված բոլոր միջազգային պայմանագրերը և այլ փաստաթղթերը, ինչպես նաև կատարված գործողությունների արդյունքները, որոնք հակասում են 2, 3 և 4 կետերի բովանդակությանը:

8. Արձանագրել Ռուսաստանի, իսկ առնվազն 2020 թ. պատերազմից հետո՝ նաև առնվազն Թուրքիայի և Ադրբեջանի աջակցությամբ հայաստանյան վարչակազմերի ձեռամբ իշխանության յուրացումն ու պետության զավթումը, հանուն Ռուսաստանի, Թուրքիայի ու Ադրբեջանի և այդ վարչակազմերի շահերի

պետության օգտագործումը Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և հայ ժողովրդի դեմ, ինչպես նաև հայտարարել 1918-20 թթ. ստեղծված և միջազգայնորեն ճանաչված Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և տարածքային ամբողջականության դեմ ուղղված և ներկայիս Հայաստանի Հանրապետության՝ որպես 1918-20 թթ. Հայաստանի Հանրապետության շարունակության (կոնտինիուտետ), իրավաքաղաքական հայեցակետին հակասող և ըստ համապատասխանության դատապարտման և(կամ) առ ոչինչ ճանաչման կամ չեղարկման ենթակա իրավական ակտեր կամ այլ փաստաթղթեր ընդունած և (կամ) գործողություններ կատարած պետությունների, կազմակերպությունների և անձանց պատասխանատվության և դրանցով Հայաստանի Հանրապետությանը, Հայաստանի Հանրապետության բնակչությանը և իրավաբանական ու ֆիզիկական անձանց հասցված վնասի վերականգնման հետապնդման մասին:

Հայաստանի Հանրապետության վերականգնման հիմնական անցումային քայլեր

Պետական կառավարման ազգային համակարգի կայացման համատեքստում

9. Կազմակերպել իրավաքաղաքական գնահատականից բխող համապարփակ և ամբողջական անցումային արդարադատություն:

10. Իրավաքաղաքական գնահատականի հաշվառմամբ մշակել և ընդունել նոր Սահմանադրություն և դրանից բխող նոր Ընտրական օրենսգիրք ու Կուսակցությունների մասին նոր օրենք:

11. Կազմակերպել արտահերթ ընտրություններ:

Պետական կառավարման ազգային համակարգի գործունեության համատեքստում

12. Ընդունել Հայկական հարցի (ներառյալ՝ Արցախի հարցի) լուծման համատեքստում Հայաստանի Հանրապետության վերականգնմամբ մեկնարկող նոր որակի Հայկական պետության ձևավորման և զարգացման Ազգային ռազմավարական հայեցակարգ և, զուգահեռաբար՝ որպես այդ հայեցակարգի հրատապ միջոցառումներ՝ մինչ դրա ընդունումը.

1) ինքնիշխան քաղաքականությամբ, ներառյալ՝ իրական դաշնակիցներ և գործընկերներ ձեռք բերելու միջոցով, հաղթահարել Ռուսաստանից արտաքին, անվտանգային-պաշտպանական և տնտեսական կիսագաղութային կախյալությունը և չեզոքացնել Հայաստանը Թուրքիայի տարածաշրջանային գերակայության համատեքստում Ադրբեջանի պրոտեկտորատի վերածելու միտումները (այդ թվում՝ առաջնահերթորեն դատապարտել և առ ոչինչ

հայտարարել 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը (բացառությամբ հրադադարի և հումանիտար հարցերի վերաբերյալ դրույթներից) և դրա հիման վրա և (կամ) դրանից բխող այլ փաստաթղթերը ու դրանց իրագործմամբ առաջացած հետևանքները,

2) այս հիմքերով և համատեքստում՝

• դադարեցնել Հայաստանի Հանրապետության անդամությունը ԱՊՀ-ին, ՀԱՊԿ-ին և ԵԱՏՄ-ին, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում վերանայել Հայաստանի Հանրապետության կարգավիճակը և պարտավորությունները այլ միջազգային կազմակերպություններում և միջազգային հարաբերություններում,

• միջազգային իրավունքի հիման վրա կարգավորել հարաբերությունները Թուրքիայի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության հետ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության վերականգնման օրակարգով, ինչը ներառում է նաև Արցախի ապազավթում և վերադարձ Հայաստանի Հանրապետության իրավազորության ներքո,

3) ձեռնամուխ լինել Հայաստանի Հանրապետությունը համայն հայության Հայրենիքի վերածելու գործին՝ առաջնահերթորեն մեծ հայրենադարձության և պետության կյանքում բոլոր հայերի համընդգրկուն ակտիվ ներառականության միջոցով, այդ թվում՝ առանց երկքաղաքացիության կամ մշտական բնակության հանգամանքներով պայմանավորված ակտիվ և պասիվ ընտրական իրավունքի սահմանափակման,

4) համազգային ջանքերի գործադրմամբ և դաշնակիցների աջակցությամբ սկսել որակապես միանգամայն նոր՝ ազգի և պետության ամբողջ անվտանգային-պաշտպանական ներուժի առավելագույն կարողություններ համախմբելու, զարգացնելու, ինքնակատարելագործելու և արդյունավետ կերպով կիրառելու ունակ համապարփակ անվտանգության «Ազգ-բանակ» կազմակերպվածքի ձևավորումը,

5) դուրս գալ փակուղայնության ու հետընթացի ինքնահոսին հանձնվածի ներկայիս վիճակից և Հնդեվրոպական Հյուսիս-Հարավ միջանցքի վրա 4-րդ արդյունաբերական հեղափոխության համատեքստում երկրի արդյունաբերականացմամբ և տնտեսատեխնոլոգիական հանգույցի վերածմամբ Հայաստանը հասցնել թռիչքային զարգացման վիճակի,

6) քայլեր ձեռնարկել Նախիջևանի ապառազմականացման, նրա տարածքում միջազգային վերահսկողության հաստատման և նրա հաղորդակցային ենթակառուցվածքները Հարավ-Հյուսիս միջանցքի համակարգի մաս դարձնելու համար,

7) թեթևացնել ժողովրդի սոցիալական հոգսերը և դյուրացնել բիզնեսը (վարկեր, հարկեր, տույժ ու տուգանքներ, կոմունալ և տարատեսակ այլ

վճարումներ, կրթություն, առողջապահություն, արդար ու ազատ մրցակցություն և այլն)։

ՈՐՊԵՍԶԻ ԴԵՐԵՐԸ ՉՓՈԽՎԵՆ

Վարուժան Ավետիսյան

Առայժմ քնած բաղդասարականության վիճակում գտնվող հայության համար թերևս օրինաչափորեն չճանաչված և չյուրացված Կոստան Զարյանի հանճարը երկնել է մեր վերածննդի և մեզ տրված համամարդկային առաքելության վերաստանձնման բանաձևեր։

Այդ բանաձևերը ժամանակի ազդեցությամբ օբյեկտիվորեն ավելի ու ավելի արդիական են դառնում նաև այն պատճառով, որ առավելապես արտածված են ապագայի համար։

Ստորև ներկայացված են անկարևոր մասերից ազատված և փակագծերում բերվող անհրաժեշտ հուշումներով ընդգծված այդպիսի բանաձևումներ, որոնք հայ և թուրք էությունների և բնույթների բնազանցական մրցակցության համատեքստում բնության օրենքին համապատասխան տալիս են հայության վերընձյուղման և նրա արարչագործ առաքելության հոգին ու մարմինը կրող Հայրենիքի վերատիրացման լուծումները։

«Սպանիա» գրքում արտացոլված ցեղաշունչ հանճարի այս բանաձևումներին և լուծումներին ծանոթանալուց (կամ դրանք վերհիշելուց) հետո դրանց լույսով կներկայացնենք մեր զուգահեռումը ներկայիս զարգացումների և մարտահրավերների, ինչպես նաև վերջիններիս հաղթահարման վերաբերյալ։

□□□

«Մենք (հայերս) ներսումն (մեր երկրի) ենք, շատ կարևոր ռազմագիտական գծի վրա կանգնած։ Ավելի կարևոր դիրքերի վրա ամրապնդված, քան առաջները։ Առաջ ցրված, խառնված էինք անհարազատ և թշնամի տարրերի հետ, իսկ այսօր մի կտոր հողի վրա միատարր մի ազգ ենք. մի ճակատի վրա կանգնած՝ նոր ոգի դարբնող, երկրի խոր մշակման միջոցով նոր աստվածների և նոր մարդկային տիպի ձգտող մի բանակ։ Աշխատում ենք և սպասում, որովհետև գիտենք, որ այնտեղ, Հայրենիքի այն մասում, որ լքել ենք, ինչ չենք կարողանում անել մենք, անում է ինքը՝ երկիրը։ Անում են մեր լեռները, մեր դաշտերը, մեր ձորերը ...

... Ավստրալիայի որոշ բնիկները, տեղացիները, իրավմամբ կարծում են, որ անկարելի բան է նվաճել օտար երկիրները, որովհետև նախնյաց ոգիները դեռ շարունակում են ապրել այդ օտար հողերում։ Ու նվաճողների նոր ծնված երեխաները ճակատագրականորեն կոչված են մարմնավորելու օտարների նախնյաց ոգիները։ Այդ հավատքը պարունակում է մեծ հոգեբանական մի ճշմարտություն։ Նվաճված օտար երկիրը ներառման է ենթարկում նվաճողներին։

Տեսեք, թե ի՞նչ է կատարվում տաճիկների հետ։ Երբ նրանք եկան՝ մարդկային կերպարանքից զուրկ, վայրենի, կենդանական, մրրիկի նման արշավող, քանդող, անդիմադրելի և կույր ոհմակներ էին։ Այդ որոտող փոթորիկը լռեցրեց բոլոր ձայները, սպանեց, ոչնչացրեց իր ճամփի վրա հանդիպած

քաղաքակրթությունները, սուրի ենթարկեց բազում ժողովուրդներ, քանդեց հրաշալի քաղաքներ, այրեց և ոչնչացրեց մշակույթի հոյակապ հիշատակարանները և, մի օր էլ, շնորհիվ քրիստոնյաների և պապերի փոքրոգության, նա իրեն ձեռքը առավ իսլամի կանաչ դրոշակը, տիեզերական խալիֆայություն հաստատեց և հանուն Մուհամեդի շարունակեց իր նվաճումները: Ու հայ ժողովուրդի պատմությունը անասելի պատմություն է ... Քանի՜- քանի՜ դարեր նա լռեց, գրեթե վերածված ստրուկ վիճակի. քանի՜- քանի՜ դարեր նրա հրաշալի ոգին մնաց ծածկված, ծեփված, ինչպես Սուրբ Սոֆիայի խճանկարված պատերը ... Մեծ Թուրքը այնքան հզոր էր, որ նույնիսկ ուժեղ պետությունները ակնածանքով էին խոսում նրա մասին, ուր մնաց մենք: Եվ, սակայն, հասարակ մեր ժողովուրդը, այնտեղ, ներսը, իր հոգու խորքում, պահել էր հույսի թաքնաթաքուր այն կրակը, ապագայի և վերածնման այն հավատքը, որի դեմ անկարող են աշխարհի բոլոր բռնությունները: Թուրքը այդ գիտեր, և որպեսզի սպաննե հավատքը, նա սպաննում էր մարմինը, բայց նա չգիտեր, որ ինչքան սպաննե մարմինը, ավելի ուժով պիտի վերածնվի ոգին: Երիտասարդ թուրքերը, Մեծ պատերազմին ընթացքին, որոշեցին կրկնել օսմանցիության վերջին վճռական ժեստը՝ ահավոր կոտորածի ենթարկեցին մնացած հայությունը: Բայց եղավ այն, ինչ որ մեր ոգին և ճակատագիրը պատրաստում էին դարերից ի վեր. դիակների լեռների տակ ընդմիշտ թաղվեց և անհետացավ օսմանցիությունը և նրա հետ տաճկությունն ու իսլամի արյունով թաթախված կանաչ դրոշակը:

... Կան միամիտներ, որոնք խոսում են Տաճկաստանի (<u>քեմալական</u>) զարթոնքի և վերածնության մասին, բայց այն, ինչ կատարվում է, ճիշտ հակառակն է: Պատահել է այն, ինչից որ վախենում էին Ավստրալիայի բնիկները, երկրում ապրող մեր նախնյաց ոգիները հաղթել են վերջնական և վճռական հաղթանակով: Այնքան, որ տաճիկները այսօր պաշտոնապես և միանգամայն ընդմիշտ, հրաժարվում են իրենց ցեղից, իրենց կրոնքից, իրենց ավանդություններից, իրենց երգերից, իրենց անցյալից: Եզակի երևույթ պատմության մեջ: Նրանք ասում են՝ մենք մենք չենք: Նրանք ասում են՝ մենք եկվորներ չենք, օտարներ չենք, այլ բնիկներ ենք, սկզբից ի վեր այստեղ ծնված, այստեղ մեծացած և մշակույթ ստեղծած: Երե՞կը, անցյա՞լը, - մենք այն չենք: Մենք՝ մենք չենք: Ու փոխում են իրենց զգեստները, փոխում են իրենց անունները, ճգնում են փոխել մտածելու և զգալու իրենց կերպը: Ոչ թե ճապոնացիների նման ընդունում են օտար տեխնիկան՝ ավելի խորապես հաստատելու և պաշտպանելու համար իրենց ուժգին ազգային ոգին, դարերով մշակված իրենց եսը, այլ *ուրանում են* մանավանդ այդ եսը: Եվ այդ ուրացման պահանջը այնքա՜ն մեծ է, այնքա՜ն հիվանդագին, այնքա՜ն անդիմադրելի, որ նրանք դիմում են նույնիսկ գիտական, պաշտոնապես հարկադրված շառլատանության: Պոռում, կանչում, հրամայում, հրացանազարկության ենթարկում, կաշառում: Պարտադրական օրենք է, - այլևս մենք՝ մենք չենք: Մի ցեղի այդպիսի ահավոր անկումը անկարելի պիտի լիներ բացատրել՝ առանց ընդունելու ավստրալացիների հավատքը նախնյաց ոգիների վերածնման մասին: Ճշմարտությունը այն է, որ թուրքերը հայանալու ճամփի վրա են: Ներսից եկող, անդիմադրելի մի ուժ նրանց նվաճել է, կաշկանդել, կամքին է ենթարկել: Ու այդ ուժը նրանց պատրաստում է վերջին, այլևս քաղաքական և մշակութային նվաճումի համար, որ նախախնամական է և պատմականորեն անհրաժեշտ: Որովհետև այնտեղ, սահմանի վրա կանգնած սպասող հայության

հետ պատահելու վրա է այն, ինչ որ պատահում է Սուրբ Սոֆիայի հետ. Կիսալուսինը վար է առնված, մոլլաների ձայները անհետացել են, ու պատերի ծեփի տակից ահա դուրս են ցցվում հրաշալի խճանկարները: Հայ ոգին պատրաստվում է, շատ հաճախ հակառակ հայերին, իր վճռական դերին:

... Թուրքերի ինքնուրացումը մինչև ինչ աստիճանի է հասել ... Ինչպես աշխարհի բոլոր նախնամիտները, նրանք խոր հավատք են տածում դեպի գիտական փաստերը, գիտությունը և փաստը գերմանական իմաստով առած ... Ու այդ՝ «մենք՝ մենք չենքը» այսօր նրանք ուզում են անպատճառ շոշափելի դարձնել, ապացուցանել նյութապես ... «Ահա առեք այս գանգը ձեր ձեռքերի մեջ, ինչպես Համլետը Յորիկի գանգը, և պիտի տեսնեք, որ մենք՝ մենք չենք»:

... Նրանք որոշել են մի քանի գերեզմաններ բաց անել և մարդաբանական և մարդակազմական իրնակներով ցույց տալ, որ ցեղաբանորեն նրանք պատկանում են և միշտ էլ պատկանել են մաքրամաքուր բնիկներին:

... Միայն թե առաջին գերազմանը, որ պիտի բաց անեն կամ արդեն բաց են արել, պատկանում է հանճարեղ մի ճարտարապետի, որ իսլամություն ընդունելուց հետո, կառուցել է մի շարք մզկիթներ, որոնք մինչև այսօր էլ հիացում են պատճառում: Այս ճարտարապետի անունը Սինան էր, ծագումով հայ ... Իրենք անշուշտ պնդում են, թե Տաճկաստանի բոլոր բնակիչներն էլ թուրք են: Այդ նրանց պետք է՝ ապացուցանելու համար, որ թուրքը թուրք չէ և երբեք էլ թուրք չէ եղած: Ի՞նչ պիտի ասեիք այն այլասերված զավակի մասին, որ գլուխը պատերին զարներ, աջ ու ձախ վազեր պոռալով, որ նա իր հոր զավակը չէ, կեղծ փաստաթղթեր որոներ, ուրիշների գերեզմանը բանալ տար, լեզուն փոխեր, գիրը փոխեր, անունը փոխեր հանուն այդ ուրացման ... Պիտի դասեիք նրան ստոր անձնավորությունների շարքում, մարդկային արժանապատվությունից զուրկ տիպարների շարքում, այնպես չէ՞: Իսկ ի՞նչ ասել, եթե այդպիսի միջոցի է դիմում մի ամբողջ ազգ ...

... Ահավոր մի անկում: Ուզում են խաբել պատմությունը և իրենք՝ իրենց: Զուրկ ինքնուրույն ստեղծագործական կարողությունից, քշված, վտարված աշխարհի բոլոր այն հողամասերից, ուր մտել էին բռնի ուժով, նրանք, առանց որևէ անցյալի և առանց որևէ ապագայի, կանգ են առել մեր լեռների մոտ և շվարել: Մեր թողած գերեզմաններից դուրս են եկել հարյուր հազարավոր ոգիներ և նրանց շղթայել: Ու ահավասիկ նրանք, խենթացած, վախի և հավաքական փսիխոզի ենթարկված. – մենք՝ մենք չենք, դուք ենք ...

... (Նաև՝ դուք մենք ենք): Ու այդ հայության առջև դժվարին և վճռական պրոբլեմներ է դնում, որի լուծումից կախում ունի մեր ամբողջ ապագան: Հայությունը, եթե ուզում է իր վերջնական հաղթանակը տանել, պետք է վերակոչե և պողպատե կամքով ենթարկվի իր նախնավոր ոգիին: Զտե, զտվի, դուրս անե իր միջից անհարազատ տարրերը և, առայժմ Արարատյան դաշտում, վերաստեղծե իր հոգեկան այն պրոցեսը, որի միջոցով ժամանակին, իր կրոնա-հերոսական շրջանում, նա ստեղծել էր իր աստվածներին: Թուրքերին պետք է պահել «մենք դուք ենք» շեշտի վրա, թե չէ դերերը կարող են փոխվել ...»:

□□□

Կոստան Զարյանը կարծես թե կանխատեսել է նաև այսօրվա պատմական շրջափուլը, որի ժամանակ «դերերը կարող են փոխվել»:

Հետճշմարտության մեր ժամանակաշրջանում, որի համեմատությամբ գրողի նկարագրած ժամանակաշրջանի թուրքական կեղծիքը հաճախ մանկան թոթովանք է հիշեցնում, դերերն իսկապես կարող են փոխվել:

Հանճարի մտքի լույսով դիտարկելիս դժվար չէ հասկանալ, որ Հայաստանի այսօրվա կառավարիչների պատմական «առաքելությունն» է՝ դերերը փոխելու գործում ապահովել հայության ուրացումը: Ապահովել, որ հայությունը ուրանա ինքն իրեն, իր Հայրենիքը, իր նախնիների ոգին, իր առաքելությունը և արդեն հայությունն ասի, թե մենք մենք չենք:

Թշնամին գտել է դերերը փոխելու ուղին: Որովհետև միայն այն պարագայում, երբ հայությունը հրաժարվի իր Հայրենիքից, իր Արարատից, իր անցյալից, իր նախնիների ոգուց և դրանով կենսացվող իր առաքելությունից, այդ ժամանակ կմեռնի տերը և թուրքը կկարողանա տեր դառնալ:

Միևնույն ժամանակ՝ ինքնուրացումի քեմալական այլափոխությունից հետո Էրդողանի դեմքով հանդես եկող թուրքը նախաձեռնել է իրականում հակաբիոզի վիճակում գտնվող անհամատեղելի ժամանակների և դրանց բովանդակությունների՝ օսմանականության, համաթուրանա-կանության և քեմալականության հիբրիդի հիմքով կոնսերվատիվ հեղափոխության խեղկատակ մի ծրագիր, որն այնպես կխճճի առանց այդ էլ արհեստական թուրք էությունն ու բնույթը, որ բնության օրենքով միակ ելքը կմնա դրանց քայքայումն ու մասնատումը:

Ի դեպ՝ նույնպիսի կոնսերվատիվ հեղափոխություն է փորձում անել բյուզանդական համակարգի մյուս բաղադրիչ Ռուսաստանի Պուտինը՝ դրա հիմքում դնելով մեկ այլ հակաբիոզի վիճակում գտնվող անհամատեղելի ժամանակներ և դրանց բովանդակություններ՝ պետրոսյան ցարականությունը, բոլշևիկությունը և թուրանաբնույթ արևելականությունը:

Եվ ահա՝ պատմության ընթացքի մեջ անտեղիորեն ցիստավորված-պահպանված այս թերկայսրությունների հոգեվարքային ակտիվության ներկայիս վերջնափուլում ազգի բովանդակ ուժերը համախմբելու և անժամանակ ժամանակը վերապրելու գերագույն ճիգեր գործադրելու փոխարեն ռուս-թուրքական հրեշների և դրանց դիակները մինչև վերջ ամեն գնով օգտագործելու մարմանջով տարված համաշխարհային ուժերի թերմացքը լափող օրվա ժամիշխանները և նրանց սպասարկող փորահացի դավաճան գրագետները լծվել են Հայրենիքն ու հայությունը ինքնաոչնչացման տանելու ճանապարհով իրենց ոչինչ էությունների իշխանական ու նյութական տականք մղումները բավարարելու ստորագույն և զազրելի գործին:

Մենք կանգնած ենք լինել-չլինելու այնպիսի մարտահրավերի դեմ հանդիման, որպիսին չի եղել անգամ Մեծ Եղեռնի ժամանակ:

Մեզ փորձում են դարձնել ուրացող, դավաճան և գոյության իրավունք չունեցող անարժանապատիվ ազգ:

Եվ մենք դեռ լռում ենք:

Կանգնած ենք միանգամայն պարզ ջրբաժանի առաջ. կամ սովորում ենք հանճարից, հիշում ենք «Հացն ու գինին, տեր կենդանին և խաչ պատերազմին» և ծառս ենք լինում ու վերադառնում ենք արթուն սանասարականության, կամ պատմությունը, արձանագրելով դերերի փոփոխությունը, մեր պիղծ գոյությունից կմաքրի սրբազան Հայրենիքը:

«ԶՎԱՐԹՆՈՑ» ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ
ԶՎԱՐԹՆՈՑԻ ՏԱՃԱՐԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄ
ԵՎ
ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾՔԻ ՄՈԴԵԼ

Վարուժան Ավետիսյան

Արարչություն, մարդ, Կենաց Ծառ, մարդու առաքելություն

Արարման և արարվածքների, այդ թվում՝ մարդու և նրա առաքելության վերաբերյալ մարդկային ընկալումները (պատկերացումները) դրսևորվում են գաղափարներով, պատկերներով և հնչյուններով:

Գրեթե բոլոր հնագույն ազգերի հավատալիքների համաձայն մակրոտիեզերքի (Տիեզերք, Արարիչ) և միկրոտիեզերքի (մարդ, արարվածք, երկրային արարիչ), ինչպես նաև դրանց կապի վերաբերյալ մարդկային պատկերացումների երկրաչափականացման հիմքն ու ելակետը վեց շրջանից կազմված Կենաց ծառի սխեմատիկ պատկերն է **/տես նկ. 1/:**

Կենաց ծառի պատկերը կազմված է Տիեզերքը քաոսից զատող հավիտենական սկզբի մեծ շրջանից և նրա մեջ ամփոփված հինգ ուժերի (տարրերի) փոքր շրջաններից, որոնցից մեկը կենտրոնում է և խորհրդանշում է հատիկը (հոգին, եթերը, միկրոտիեզերք-մարդը), իսկ մյուս չորսը՝ բնության չորս ուժերը (տարրերը, տարերքները)՝ հուրը, օդը, ջուրը և հողը: Մեծ շրջանի մեջ հինգ փոքր շրջանների համադրությամբ առաջանում են արական և իգական (յան և ին) տիրույթներ **/տես նկ. 2/:**

Կենաց Ծառը Մակրոտիեզերքի և միկրոտիեզերքի կապն է՝ իր ուղղահայաց և հորիզոնական խաչվածքով: Նրա արմատները երկնքում են, սաղարթը՝ երկրի վրա: Եվ մարդը Կենաց ծառի պտուղն է՝ նրա վերարտադրության կոդը պարունակող սերմ և նրա համն ու հոտն ամփոփող մարմին: Միևնույն ժամանակ՝ արարչակերպվող մարդն ինքն է Կենաց Ծառի՝ որպես մարդ-տիեզերք կապի առանցքը: Միկրոտիեզերք մարդու աշխարհընկալումը թե՛ մակրոտիեզերքային է և թե՛ միկրոտիեզերքային, համադրաբար՝ մարդակերպ և մարդաբնույթ է: Մարդը միկրոտիեզերք է, կրում է Արարչի հոգու մասնիկը և տիեզերքի բովանդակությունը:

Կենաց Ծառի սխեմատիկ պատկերի հիմքի վրա են արտահայտվում և նրանից են սկիզբ առնում զարդարվեստի, գրային համակարգերի, ճարտարապետության, պարարվեստի, մարտարվեստի, կառավարման և կյանքի

մյուս բոլոր ոլորտների ու երևույթների ֆիզիկական ձևերի ու գաղափարական արտահայտումների երկրաչափականացման պատկերները:

Ըստ տիեզերակարգի բանաձևի՝ ամեն ինչ ուղղահայացի և հորիզոնականի ներդաշնակ ամբողջությամբ է ստեղծվում ու գործառում և Կենաց Ծառը դրա ծավալային արտահայտությունն է:

Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ, ինչպես ասվեց, միկրոտիեզերք մարդու ընկալումներն ու պատկերացումները մարդակերպ և մարդաբնույթ են: Մարդուց է զարդը և մարդն է զարդը, արարչության պսակն ու ամփոփիչ-շարժիչ ուժը:

Մարդու առաքելությունն է ինքն իրեն՝ միկրոտիեզերքը պահպանել և կատարելագործելով հասցնել Տիեզերքին համապատասխանության վիճակին:

Նա պետք է հաղթահարի Կենաց Ծառի առանցքով արարված տիեզերակարգից շեղվելու հետևանքով առաջացած մարտահրավերները և իր կյանքը վերստին համապատասխանեցնի տիեզերակարգին՝ դառնա արարչամարդ:

Եվ, երբ կգան բարու ժամանակները, միկրոտիեզերք-մարդն աղավաղված չի լինի և կհամապատասխանի Տիեզերքին:

Եվ այս առաքելության հիմնական բեռը պետք է կրի այն մարդը, որը հասու է տիեզերակարգին, հաղորդակից է Կենաց Ծառին, իր էության ու մշակույթի մեջ կրում է դրանք և պատրաստ է ուսուցանել մյուսներին:

Մեր մեծերից Կոստան Զարյանը նման մարդուն անվանում է Արարատյան մարդ, Հովիվ, որ կարող է ոչ միայն ճանաչել զիմաստություն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ, այսինքն՝ լինել կանչված, այլև որպես Լույսի կանթեղ մյուսներին ցույց տալ ուղին և տանել այդ ուղով՝ լինել նաև ընտրված:

Այլ կերպ ասած՝ մարդը պետք է վերադարձնի բարու թագավորությունը, դառնա ներդաշնակ և բարի (կազմակերպված, կարգավորված տիեզերքի նման): Երբ գան բարու ժամանակները, մարդու արարվածքները կհամապատասխանեն Մարդու արարվածքներին:

Մարդու ակտիվ, ոչ հայեցողական դերը խորհրդանշող պատկեր է Արարչի ձեռքը **/տես նկ.3/,** որն ուղիղ ակնարկ և ցուցում է մարդուն բնորոշ արարչական շնորհի և դրա բացառիկության վերաբերյալ, մարդու առաքելության վերաբերյալ:

Արարչի ձեռքի բութ մատը խորհրդանշում է մարդուն, որը որպես հատիկ, հոգի, միտք, ուժ՝ կազմակերպում և գործի է դնում բնության ուժերը (տարրերը) խորհրդանշող ձեռքի մյուս մատներին՝ ցուցամատին (հուր), միջնամատին (օդ), մատնեմատին (ջուր), ճկույթին (հող):

Արարչի ձեռքը ևս Կենաց Ծառի յուրօրինակ, մարդակազմական խորհրդանիշ է, որը պատկերում և ընդգծում է մարդուն՝ որպես երկրի վրա արարչականի հիմնական սուբյեկտային կրողի ու իրագործողի (հիմնական տարրի և ուժի) և բնության ուժերի (տարրերի) կապն ու հարաբերակցությունը, նրանցից յուրաքանչյուրի դերն ու նշանակությունը:

Արարչի ձեռքը ցույց է տալիս կառավարման (իշխանության իրականացման) համակարգն ու դրա մեխանիզմը: Իշխանության իրականացման հինգ ճյուղերը՝ հոգեմտավոր-գաղափարական (գաղափարաբանական)-հայեցակարգային, գաղափարախոսական-տեղեկութային, օրենսդիր, գործադիր և դատական

(ստորև՝ լայն իմաստով՝ արդարադատական), ճշգրտորեն համապատասխանում են բնական հինգ ուժերը (տարերքները, տարրերը) խորհրդանշող Արարչի ձեռքի մատներին (բութ, ցուցամատ, միջնամատ, մատնեմատ, ճկույթ) և այդ խորհուրդներով արտահայտվող գործառույթներին:

Կենաց Ծառի սխեմատիկ պատկերի վրա բութ մատը (մարդը, հոգին, հատիկը, եթերը) կենտրոնի շրջանն է, որը նաև ամբողջի խտացումն է: Ժամսլաքի (դեպի աջ) ուղղությամբ պտույտով պատկերի վրա խաչաձև դասավորության մեջ վերևի շրջանը խորհրդանշում է հուրը, աջ կողմի շրջանը՝ օդը, ներքևի շրջանը՝ ջուրը և ձախ կողմի շրջանը՝ օդը:

Արարչի ձեռքի պատկերը հուշում և հիշեցնում է, որ բութն (մարդն) է թաթը ձեռք (արարման գործիք) դարձնում: Այսինքն՝ ի տարբերություն մյուս կենդանիներից, մարդը բնության չորս տարրերից բացի, ունի նաև արարչական մասնիկ (տարր, ուժ), որ հոգին է, ինչի շնորհիվ մարդն ունի արարչական միտք, խոսք և իր մտքի կառույցը նյութականացնելու գործիք՝ մարդկային ձեռք: Պրիմատների մյուս ներկայացուցիչների՝ ձեռքի նման օրգանը թերի է և չի կարող արարել, այլ ընդամենը կարող է օգտագործել շրջապատի առարկաները: Պրիմատներից միայն մարդն ունի արարչական միտք և հմուտ ու կատարյալ արարչական ձեռք-գործիք:

Մարդն Արարչի ձեռքն է, որի միջոցով Բարձրյալն իր գործն է անում երկրի վրա:

Հայության առաքելություն

Հայությունը, որպես արարատյան մարդկանց, հովիվների ազգ, Կենաց Ծառի պատկերն ամփոփող խաչաձև կապն է Արարչի ու մարդու (ուղղահայաց կապ) և մարդու ու մարդու (հորիզոնական կապ) միջև:

Հայությունը կարող է հարատևել, եթե ստանձնում և իրականացնում է Կենաց իմաստնության տարածման իր այս համամարդկային առաքելությունը:

Հայությանը պատուհասած բոլոր աղետներն ու կորուստները հետևանք են ազգային առաքելությունից հրաժարվելու և այն իրագործելուն կոչված Մարութա Վանք ազգային համակարգի քայքայման:

Ուստի հայությունը պետք է պետականորեն համախմբվի և ինքնակազմակերպվի որպես այդ առաքելության իրականացման գործառույթ կատարող համակարգ:

Հայոց հավատամքային համակարգի պատումը՝ Սասնա Ծռեր կամ Սասնա Տուն էպոսը, պետականությունը ներկայացնում է Մարութա Վանքի մոդելով:

Միևնույն ժամանակ՝ Էպոսը ներկայացնում է մի ուշագրավ դրվագ՝ երկնային հրամանով Դավիթն իր մեջքի սուրը հանում և դնում է վերակառուցվող Մարութա Վանքի հիմքում, որպեսզի Վանքը՝ համակարգը, կանգուն մնա: Այդ գործողությունը ժողովրդին կամային-ուժային կերպով, այն է՝ քաղաքականապես, կազմակերպելու արարի խորհրդանիշ է, գործողություն, որի շնորհիվ նա որակապես փոխվում-զարգանում է և դառնում է ազգ:

Ներկայիս և պատկերացնելի հեռանկարի աշխարհում Հայկական համակարգը պետք է կառուցվի և գործի Հայկական պետության առանցքի շուրջը կազմավորված համահայկական ցանցային կառույցի ձևով ու տրամաբանությամբ: Հայկական պետությունը պետք է դառնա Համահայկական ցանցապետության հիմնական բաղադրիչն ու միջուկը: Ընդ որում՝ Հայկական

պետությունը Համահայկական ցանցապետության առանցք և կենտրոն-միջուկ պետք է լինի ոչ միայն կառուցվածքային-գործառութային, այլև բովանդակային-գործառութային առումներով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայության լեզվածին և բնիկ լինելու պատճառներով հայ մնալու ու լինելու հիմնական և առաջնային պայմաններն են Հայոց լեզուն և Հայրենի հողը, Համահայկական ցանցապետություն-համակարգի արդյունավետ գործունեությունը, ուստի՝ հայության հարատևությունը և առաքելությունը հնարավոր կարող է լինել միայն այն դեպքում, երբ.

1) Հայության մեծ մասն ապրում է Հայրենիքում,

2) Հայրենիքն ամբողջական է, այսինքն՝ Հայկական պետության տարածքն զբաղեցնում է ամբողջ Հայկական բարձրավանդակը:

Այս պատճառով Հայրենիքի վերատիրացումը և արտերկրյա հայության հայրենադարձությունը դառնում են գերակա և համակարգաստեղծ նպատակներ:

Ճարտարապետություն, պաշտամունքային կառույցներ

Տիեզերակարգի, Կենաց Ծառի երկրաչափականացված դրսևորումներն առավել ամբողջական և համակարգային կերպով առկա են ճարտարապետության, որպես կանոն՝ պաշտամունքային կառույցների ճարտարապետության մեջ:

Պաշտամունքային կառույցների ճարտարապետության մեջ է, որ մարդը ձգտում է այնպես կազմակերպել ու նյութականապես արտահայտել-երևակել տարածությունը, որ ճշգրիտ, ամբողջական և համակարգված կերպով արտահայտի արարչության, տիեզերակարգի, ինչպես նաև երկինք-երկիր, Արարիչ-մարդ, մարդ-բնություն և կյանքային այլ հարաբերությունների որակական ու քանակական հատկանիշների անհրաժեշտ ու բավարար համախումբը, որպեսզի դրա միջոցով ցույց տա մարդու հավատամքային համակարգը, առաքելությունն ու ուղին **/տես նկ. 4/**:

Պաշտամունքային կառույցը ծավալային Կենաց Ծառ է՝ ուղղահայաց և հորիզոնական պրոյեկցիաներով **/տես նկ. 5, 6, 7, 9, 10 և 11/**:

Կառավարումն օբյեկտիվորեն տեղի է ունենում Տիեզերք-աշխարհի արարման, դրա պատկերի և մարդու առաքելություն-ուղու վերաբերյալ մարդկային պատկերացումներին համապատասխան:

Ըստ այդմ՝ ամենաարդյունավետ կառավարման համակարգն այն համակարգն է, որ համապատասխանում է այդ պատկերացումներին:

Ուստի՝ առավել ամբողջական և արդյունավետ կառավարման համակարգի բովանդակակառուցվածքագործառութային պատկերը հնարավոր է գտնել այն պաշտամունքային կառույցների դիտարկմամբ, որոնք առավել ամբողջական են ներկայացնում Տիեզերք-աշխարհի պատկերը և մարդու առաքելություն-ուղին:

Բնականաբար՝ որևէ ազգի պաշտամունքային կառույցները, եթե ուրիշից պատճենումներ կամ մարդածին հիբրիդներ չեն, որպես կանոն, հիմնված են նրա մշակույթի վրա և արտահայտում են նրա պատկերացումները, այդ պատճառով դրանք արտահայտում են նաև նրա առաքելություն-ուղին և, ըստ այդմ՝ ցույց են տալիս նրա առաքելություն-ուղու իրագործման կառավարման համակարգի բովանդակությունն ու կառուցվածքագործառութային պատկերը:

Հայկական պաշտամունքային կառույցներ. Զվարթնոցը՝ եզակի երևույթ

Հայկական պաշտամունքային կառույցների ճարտարապետությունը խիստ յուրատիպ է և ունի գաղափարական-հորինվածքային ինքնուրույն մոդել, քանի որ արտահայտում է բուն Հայոց հավատամքային համակարգը, ցույց է տալիս հայ ազգի առաքելությունն ու ուղին: Նրա մեջ առկա այլ հնագույն ազգերի ճարտարապետություններից ներառված բաղադրիչները չեն հակասում Հայոց հավատամքային համակարգին **/տես նկ 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12 և 14/**:

Հայկական պաշտամունքային կառույցների ուսումնասիրությունն առանձնացնում է Զվարթնոցի տաճարը **/տես նկ 7, 8, 9, 10, 11, 12 և 14/**:

Զվարթնոցի և մեզ հայտնի մյուս երեք զվարթնոցատիպ տաճարների՝ Անիի Գագկաշեն Ս. Գրիգոր, Բանակի և Թավուզքյարի, ինչպես նաև Անիի պարիսպներից դուրս գտնվող գողտրիկ Հովվի եկեղեցու, վերաբերյալ առկա հետազոտությունների համադրությամբ առնվազն չենք կարող պնդել, որ սրանք Զվարթնոցի նման արտահայտում են տիեզերական համաչափությունները:

Ուստի Զվարթնոցի տաճարը մնում է եզակի:

Հայկական մյուս պաշտամունքային կառույցների մեջ Զվարթնոցի տաճարը տիեզերքի պատկերի, ուստի նաև՝ ազգային առաքելություն-ուղու իրագործման կառավարման համակարգի առավել ամբողջական արտահայտությունն է հետևյալ հիմնական դրսևորումների շնորհիվ.

1) Զվարթնոցը գտնվում է Հայոց երկու խորհրդապաշտական լեռների՝ Արարատի և Արագածի ուղիղ մեջտեղում, ինչն ունի իմաստային և գործնական եզակի նշանակություն:

2) Զվարթնոցը կառուցված է Հայոց Տիր Աստծո տաճարի տեղում: Տիրն ավելի ուշ շրջանում է մասնագիտացել որպես ընդամենը դպրության Աստված, մինչդեռ Տիր-Տոր(ք)-Թոր-ը նախնական համակարգում խորհրդանշել է Թորգոմա տուն համակարգ-ամբողջը:

3) Մյուս պաշտամունքային տաճարները, բացի, թերևս, բուրգերից, ունեն երկու բաղադրիչ՝ երկիր (ներքևի քառանկյունաձև մասը) և երկինք (վերևի մասը՝ թաղարը կամ գմբեթը):

4) Զվարթնոցը, մինչդեռ, միայն երկնքի, նրա կառուցվածքի ամբողջական պատկեր է:

Այն եռաստիճան-եռահարկ գմբեթ է, որը կառուցված է յոթը երկինքները խորհրդանշող յոթաստիճան հարթակի **/տես նկ. 12/** վրա:

Գմբեթի երեք հարկերը Արարչի տիրույթն են, դրա՝ վերից վար՝ հոգեմտավոր-բանական (բան-մտքի), բան-խոսքի՝ խրատի և բան-գործի մակարդակներով:

Դրանք միանում և փոխանցվում են վերից վար իջնող կամքի առանցք-վեկտորով **/տես նկ. 13/**:

Վերևի հարկը նաև Արարչի գահն է:

Զվարթնոցի պարագայում երկիրը ամբողջ Հայքն է՝ Հայկական բարձրավանդակը, իսկ հայ ազգը Զվարթնոց համակարգով ամփոփված համամարդկային առաքելության կրողն ու իրագործողն է: Եթե Զվարթնոց-տաճարը ուղղահայացի մեջ երկնային զվարթունների՝ երկնային զինվորների

բնակարանն է, ապա հորիզոնականի մեջ Հայկական բարձրավանդակը երկրային զվարթունների բնակարանն է: Երկրային զվարթունները ճանաչում են երկնային իմաստությունը, որ նրանց են փոխանցում երկնային զվարթունները՝ հրեշտակները, իրենց խոսք-խրատի միջոցով և, այդ իմաստության ու խրատի պրիզմայով դիտարկելով ու իմանալով հանճարեղ նախնիների բան-գործերը, զարգացնում են իրենց շնորհները և դրանց իրագործմամբ արարում են երկրում՝ որպես երկրային արարիչներ: Յոթնալույս վարդապետ Մեսրոպ Մաշտոցը վերագտել է ազգային առաքելության իրագործման բանալի-մեթոդը՝ «Ճանաչել զիմաստություն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

5) Զվարթնոցն Արարչի ձեռք է, որի հինգ մուտքերը խորհրդանշում են ձեռքի մատները: Մարդը, ըստ իր էության, բնույթի և, ըստ այդմ՝ հոգեմտավոր զարգացման մակարդակի ու իշխանության ճյուղի (հասարակական խավի) պատկանելության, տաճար է մտնում և Արարչի հետ հաղորդակից է լինում համապատասխան տարրը խորհրդանշող դռնից: Արարչի ձեռքը ցույց է տալիս կառավարման (իշխանության իրականացման) համակարգն ու դրա մեխանիզմը: Նրա երեք հարկերը կառավարման (իշխանության իրականացման) մակարդակներն են՝ միտք, խոսք, գործ, իսկ մուտքերը՝ հինգ ճյուղերը: Վերևից իջնելու ու դրսևորվելու-փոխանցվելու-տարածվելու սկզբունքով վերին (երրորդ) հարկի (մտքի) մակարդակում իրականացվում է հոգեմտավոր-գաղափարական (գաղափարաբանական)-հայեցակարգային իշխանությունը, միջին (երկրորդ) հարկի (խոսքի) մակարդակում՝ գաղափարախոսական-տեղեկութային, ներքին (առաջին) հարկի (գործի) մակարդակում՝ օրենսդիր, գործադիր և դատական: Արարչական տրամաբանությամբ օրենսդիրը, գործադիրը և դատականը լայն իմաստով գործադիր են, քանի որ մտքից ծնվող և խոսքով դրսևորվող-փոխանցվող կամքի իրագործման ձևեր են[2]:

6) Որպես ծավալային դրսևորում՝ Զվարթնոցը նաև նուռ է՝ թե հորիզոնական հատակագծի, և թե ուղղահայաց կառուցվածքի ձևերում: Նուռը, ինչպես հայտնի է, կարգավորված տիեզերք-աշխարհն է: Նուռը կանչված և ընտրված զվարթունների կարգավորված համակարգն է: Նուռը նաև տարածություն-ծավալը և ժամանակը ներամփոփող-համադրող ներդաշնակ կենաց համակարգն է: Խորհրդանշական իմաստով Զվարթնոցը տիեզերական նուռ է, որն ամփոփելով ի մի է ժողովում ազգին, նրան դարձնում է կազմակերպված, տիեզերակարգին ու

[2] Կառավարման կամ իշխանության իրականացման երեք մակարդակների և հինգ ճյուղերի համակարգը դիտարկելիս հարկավոր է նկատի ունենալ, որ համակարգը տարբեր կերպով է գործառում երկնային և երկրային չափումներում: Երկնային չափման մեջ օրենսդիր-գործադիր-դատականը տարանջատ չէ, մինչդեռ երկրային չափման մեջ տարանջատ է, որովհետև Արարիչը կատարյալ է և իշխանության տերն է, իսկ մարդն անկատար է և ընդամենը իշխանության իրականացնողն է: Արարչի հոգին ու միտքը, ապա նաև՝ միտքը, խոսքը և գործը իրարից տարանջատ ու միջնորդավորված չեն: Մինչդեռ մարդու պարագայում դրանք տարանջատ են ու միջնորդավորված, դրանց միջև կամուրջներ կան: Մարդը մտածում և արարում է, որովհետև նրա մեջ Արարչի հոգու մի մասնիկը կա: Մարդը նախ պետք է կարողանա հաղորդակից լինել Արարչին և իրացնել նրանից ստացած իր հոգու ծրագիրը: Արարիչն ամբողջ է: Նա մարդու նման վարվելու՝ մասնատելով հասկանալու և Իր վարքագիծը զսպումների ու հակակշիռների միջոցով մշտապես կարգաբերելու կարիք չունի, մինչդեռ մարդը սահմանափակ է և հակված է սխալվելու, ուստի պետք է տարանջատի և տարանջատ ու փոխհակակշռող ձևով իրականացնի օրենք-կարգը (օրենսդիր), դրա գործադրումը (գործադիր) և սխալների ստուգում-շտկումը (դատական): Այսինքն՝ արարչական չափման մեջ իշխանությունը ճյուղավորված չէ, միայն մակարդակներ ունի: Միևնույն ժամանակ՝ թե արարչական-երկնային և թե մարդկային-երկրային չափումներում արարում-կառավարումը տեղի է ունենում բնության հինգ ուժերի (եթեր, հուր, օդ, ջուր, հող) միջոցով: Արարիչը՝ որպես ամենի և ամենքի արարող, իսկ մարդը՝ որպես միջնորդավորված երկրային նմանակող-արարող:

արարչական առաքելությանը ներդաշնակ ու պատրաստ ամբողջություն, համակարգ, աշխարհաժողով, որ մարմնավորում է երկրի վրա Արարչի կամքն ու իշխանությունը և դրանք ի կատար է ածում իր կամքով ու իշխանությամբ: Հանրապետության մոդել է: Կառավարման առումով կա հիերարխիա, սակայն որոշում կայացնելիս բոլորն իրար հավասար են, ամեն մեկն ունի իր ձայնը և բոլորը միասին են որոշում, ինչից հետո միայն հիերարխիան կատարում է որոշումը:

7) Զվարթնոցի երկրորդ հարկ-մակարդակն առաջինի, իսկ երրորդը՝ երկրորդի արտահայտություն-բացվածքն է: Խոսքը՝ մտքի և միտքը՝ գործի: Եվ, ընդհակառակը, վերևինը ներքևինի քվինտէսենցիան է: Խոսքը՝ գործի և միտքը՝ խոսքի:

8) Մեջտեղի մակարդակը՝ խոսքը, կապի և փոխանցման գործառույթ ունի: Վերից վար՝ որոշման ու հրահանգի, վարից վեր՝ ճանաչման ու խնդրանքի:

9) Այստեղ երկինքն ու երկիրը, բանն ու գործն առավելապես բացահայտված և համակարգայնորեն ներկայացված են: Երեք կոները և երեք գլանները՝ որպես երկնքից երկիր էջքով արական ու իգական սկիզբների եռամակարդակ (բան-միտք, բան-խոսք և բան-գործ) հաջորդական պրոյեկտում-անցումներ՝ դրանց հորիզոնական արարում-տարածմամբ կյանքի կոչվող հատակագծային սխեմայի հինգ շրջանները՝ որպես Արարչի ձեռքի հինգ մատների գործունեության տիրույթներ, ամբողջականորեն խորհրդանշում են արարումն ու արարվածքները, տիեզերակարգի պատկերն ու ցիկլը՝ Կենաց Ծառը:

Միևնույն ժամանակ՝ ներսից մտքի մասն առանձին է, իսկ խոսքի և գործի մասերը՝ միասին: Քանի որ մարդու համար միտքը ներփակ է, իսկ խոսքը և գործը՝ դրսևորված:

10) Զվարթնոցի հարկերի համաչափություններում գաղտնիք կա: Եթե վերին (երրորդ) հարկի տրամաչափը ուղիղ երկու անգամ պակաս է միջին (երկրորդ) հարկի տրամաչափից, համապատասխանաբար՝ 12,8 և 25,6 մետր, ապա ներքևի (առաջին) հարկի տրամաչափն ընդամենը 35,75 մետր է, այլ ոչ թե 51,2 մետր: Այսինքն՝ առաջին և երրորդ հարկերի տրամաչափերի միջև առկա չէ Կենաց Ծառի սխեմատիկ կառույցի 1/8 համաչափության արտահայտությունը, ինչը բնորոշ է պաշտամունքային կառույցներին: Գաղտնիքն այն է, որ Զվարթնոցը սովորական տաճար չէ և, ինչպես արդեն նշվեց, չունի երկրային բաղադրիչ: Եվ, այնուամենայնիվ, 1/8 համաչափությունն առկա է տաճարի հատակագծում: Կենտրոնի առանցքով կառուցված 51,2 մետր տրամագծով շրջանագիծը շոշափում է տաճարին կից և նրա օրգանական բաղկացուցիչ մասը կազմող քառանկյուն կառույցի արտաքին պատի եզրը՝ դրանով իսկ գծելով գմբեթ-տաճարի երկրային պրոյեկցիայի խորհրդանշական տիրույթի սահմանը: Մի սահման, որ դուրս է թե Նուռ համակարգի ուղղահայաց երկնային տիրույթից ու չափումից և թե նրա ստվեր-հատակագծի երկրային տիրույթից ու չափումից, բայց, այնուամենայնիվ, տաճարի գաղափարական-խորհրդապաշտական-գործունեական տիրույթի մաս է կազմում: Դա, ըստ էության, պատերով չամփոփված նախագավիթն է, որ նախատեսված է կանչված, բայց դեռևս չընտրված ու Նուռ-տաճարի պատերի ներսում տեղ ու դեր չունեցողների համար **/տես՝ նկ.14/**: Նրանց համար, որ դեռ երկրային զվարթուն չեն, հավատի և կարգի մեջ չեն ապրում: Ի դեպ՝ տաճարի վերին (երրորդ) հարկի տրամաչափը և կից քառանկյուն կառույցի լայնությունը հավասար են, այսինքն՝ վերին հարկի ստվերը ճշգրիտ համապատասխանում է

կից կառույցի չափերին՝ ուղղահայացադիր երկնային նուռը դարձնելով հորիզոնադիր երկրային նուռ: Ինչպես երկնքում է, այնպես էլ երկրի վրա է սկզբունքին համապատասխան[3]:

11) Զվարթնոցի կառույցը ներսից պահում են չորս մայր սյուները և նրանցով միացած չորս կիսաբոլորակները, որոնք խորհրդանշում են չորս տարերքները և դրանցով կազմվող Կենաց Ծառը: Մարդկայինի առումով դրանք խորհրդանշում են մարդկային չորս հիմնական առաքինությունները (արիություն, չափավորություն, արդարություն, ողջախոհություն):

12) Եռաստիճան գմբեթ-տաճարը, ըստ էության, մարդու արարչացման ճարտարապետումն է, նրա համակարգային կառույց-ուղին, որով մարդը ոգի-կենտրոնից հոգու բոլորատարած ճառագմամբ չորս գործոն-ուժերի (տարրերի) հնարավոր կոմբինացիաներով դրսևորվում է որպես մարդու արարչաշնորհ 32 տաղանդներ (խորհրդանշվում են Զվարթնոցի պատերի 32 նիստերով և դրանց վրա զետեղված՝ համապատասխան տաղանդներով օժտված 32 երևելի անձանց պատկերներով): Մարդը, օգտագործելով իր հիմնական շնորհը՝ ազատությունը, որպես 32 տաղանդներով արարելու միջոց և ուղի, հասնում է հոգևոր, մտավոր և մարմնական եռամիասնական կատարելության, դառնում է հասյալ՝ տիեզերական բան:

Նույն կերպով ազգն է դրսևորվում, կատարելագործվում և իրագործում իր արարչաշնորհ առաքելությունը:

Զվարթնոցը՝ ազգային առաքելության պատգամ և կազմակերպվածքի մոդել

Զվարթնոցն ըստ էության Հայոց առաքելության իրականացմանը կոչված ինքնակազմակերպական համակարգի արտացոլումն է և կորիզային իմաստով՝ Հայոց պետականության խորհրդանիշ Էպոսային Մարութա Վանքն է **/տես նկ 7, 8, 9, 10, 11, 12 և 14/**:

Զվարթնոցի պարագայում առավելապես բացված և մոդելավորված են մարդու և ազգի առաքելությունը և դրան հասնելու միջոցը՝ քաղաքական կազմակերպվածքը, այն է՝ պետականությունը:

Ուստի ազգային-քաղաքական իմաստով Զվարթնոցը բովանդակային առումով արտացոլում է հայության ազգային առաքելության պատգամը՝ կազմակերպվել և գործել որպես արարչակերպվող ու արարչակերպող Արարատյան մարդկանց՝ Հովիվների ազգ: Իսկ կառուցվածքի առումով այն ի ցույց է դնում հանուն այդ առաքելության իրականացման նրա կազմակերպվածքի մոդելը՝ Թորգոմա տունը:

Ժամանակին Զվարթնոցը կառուցվեց[4] (Տիրի տաճարի հիմքի վրա վերակերտվեց) որպես վերածննդի քաղաքական պատգամ և ակտ, որպես հոգևոր վերապրումի մոբիլիզացնող մոդելային կառույց**:**

---

[3] Գմբեթ-տաճարի առաջին հարկի բարձրությունը երկրորդ և երրորդ հարկերի ընդհանուր բարձրության չափ է, որտեղ նույնպես խորհուրդ կա՝ առայժմ մեզ անհայտ:

[4] Ներսես Շինարար կաթողիկոսի պատվերով՝ 643-652 թվականներին:

Այժմ էլ պետք է կառուցենք Զվարթնոց-Մարութա Վանք պետականություն-կազմակերպվածքը՝ որպես մեր ազգային առաքելության նորովի վերաստանձնման և քաղաքական վերածննդի կառավարման համակարգ:

<u>Համահայկական կազմակերպվածքը</u>

Համահայկական ցանցապետության կառավարման համակարգը

Համահայկական ցանցապետության կառավարման համակարգը պետք է լինի նրա միջուկ-առանցքի՝ Հայկական պետության կառավարան համակարգի բովանդակության, կառուցվածքի և վերջինիս բաղադրիչների բացվածքային նմանօրինակը: Բնականաբար՝ անհրաժեշտ բացառումներով և լրացումներով, ինչպես նաև կապերի ու հարաբերությունների ենթաբաղադրիչներով[5]:

Հայկական պետության կառավարման համակարգը[6]

Ինչպես արդեն ասվեց, կառավարումը, որպես գործընթաց, տեղի է ունենում կամքի առանցքով վերևից ներքև իջնող երեք մակարդակներում (միտք, խոսք, գործ) **/տես նկ 13/** և յուրաքանչյուր մակարդակի հինգ (գաղափարաբանական-հայեցակարգային, գաղափարախոսական-տեղեկութային, կարգասահմանման (օրենսդիր), գործադրական (գործադիր) և վերականգնման[7] կամ սխալների ստուգման-շտկման (նեղ իմաստով՝ դատական, արդարադատական)) ոլորտներում, որոնցից առաջինը կենտրոնականն է (ռազմավարականը, համակարգողը, որոշողը), իսկ մյուս չորսը՝ ածանցյալ-ճյուղային են **/տես նկ 2/**:

Ուշագրավ պատկեր ենք տեսնում հինգ ոլորտների սխեմայի վրա **/տես նկ 1 և 2/**: Նրանցից չորսի՝ հուր, օդ, ջուր և հող, միջև հարաբերակցությունները երկու տիպի են՝ լծորդական (մասամբ փոխհատվող-փոխծածկվող) և առնչական (շոշափող): Այսպես՝ հուրը և օդը, հուրը և հողը, օդը և ջուրը, ջուրը և հողը լծորդական կապ ունեն, իսկ հուրը և ջուրը և օդը և հողը՝ առնչական: Կենտրոն(մարդ)-եթերը բոլորի հետ լծորդական կապի մեջ է:

Պետական կառավարման գործընթացներն ուսումնասիրելիս կտեսնենք, որ այս օրինաչափությունները ճշգրտորեն դրսևորվում են նաև այդ բնագավառում:

Ըստ ասվածի՝ մարդկային-երկրային չափման մեջ կառավարման (իշխանության իրականացման) ճյուղերն ըստ Կենաց Ծառի կառուցվածքի բնության ուժերին համապատասխանում են հետևյալ կերպով՝ հոգեմտավոր-գաղափարական (գաղափարաբանական)-հայեցակարգային (կենտրոն-եթեր), գաղափարախոսական-տեղեկութային (հուր), օրենսդիր (օդ), գործադիր (ջուր) և դատական (հող):

---

[5] Համահայկական ցանցապետության կառավարման համակարգի մանրամասն բովանդակությունն ու կառուցվածքը հնարավոր կլինի ներկայացնել լրացուցիչ ուսումնասիրության հիման վրա՝ Հայկական պետության կառավարման համակարգին համապատասխան:

[6] Հայկական պետության կառավարման համակարգի մասին ավելի մանրամասն տե՛ս Վարուժան Ավետիսյան, «Ժողովրդավարության վերածննդի Արարատյան մոդել» հոդվածը:

[7] Վերականգնումը համակարգի կենսընթացքի յուրաքանչյուր շրջափուլում համակարգի վերարտադրության անհրաժեշտ բաղադրիչ-գործընթաց է (ռեգեներացիա), որն ըստ հայեցակարգային, գաղափարաբանական և օրենսդրական վերաբերմունքի իրականացվում է բնության շնորհածի, ինչպես նաև անցյալում ու ներկայում հայեցակարգայինով հղացված, գաղափարախոսականով տարածված-ներդրված, օրենսդրականով սահմանված, գործադրականով ձեռք բերված արդյունքի պահպանման ու դրա կորսված (վնասված) մասի վերականգնման (փոխարինման, փոխհատուցման) միջոցով:

Ինչպես տեսնում ենք, պետական կառավարման առումով իշխանության իրականացման ճյուղերը հինգն են, այլ ոչ թե երեքը: Երեք ճյուղերի (օրենսդիր, գործադիր, դատական) բաժանումը թերի է, քանի որ ներկայացնում է միայն իրավագիտական առումը:

Ի դեպ՝ մասն ամբողջի արտացոլումն է կանոնին համապատասխան՝ ամբողջից մասնավոր և մասնավորից ամբողջ հավերժորեն հակամետ ընթացքով իշխանության իրականացման ճյուղերից յուրաքանչյուրը նույնպես իրեն առանձնահատուկ ձևով դրսևորվում է ըստ բնության ուժերի՝ կենտրոն-եթեր, հուր, օդ, ջուր, հող[8]:

Ուշագրավ է, որ հին աշխարհում պետական կառավարման համակարգերը շատ ավելի բնական ու անպաճույճ էին և ըստ էության համապատասխանում էին Կենաց ծառի մոդելին:

Այդ պատճառով առաջարկում ենք արդիականացմամբ վերարտադրել ճիշտ աշխարհաճանաչողության հիման վրա ստեղծված հին համակարգային մոդելը:

Ըստ այդմ՝ պետական կառավարման համակարգի մեջ.

1) հոգեմտավոր-գաղափարաբանական-հայեցակարգային ենթահամակարգի (գիտական հաստատություններ, պետական կառավարման մարմինների գիտական բաղադրիչներ, գիտական խմբեր և առանձին գիտնականներ՝ ըստ լիազորությունների) հիմնական գործառույթներն են՝ ազգի և պետության էաբանական և գոյաբանական ուղեվարումը, այդ թվում՝ գաղափարաբանության, ինչպես նաև դրա հիման վրա՝ ռազմավարության և դրա իրագործման մշտադիտարկումը, ռազմավարության իրագործման կարգի փորձաքննական ուղեվարումը, ներառյալ՝ դրա հիմնական մասի (Սահմանադրություն և այլ հիմնարար ակտեր) մշակման համակարգումը, կադրերի ընտրազատման մեխանիզմի մշակումը, այդ մեխանիզմի գործադրման մշտադիտարկումը՝ կասեցման ու արգելանքի իրավասությամբ և կադրերի ընտրազատումը,

2) գաղափարախոսական-տեղեկութային ենթահամակարգի (հանրային մեդիա, հանրային մեդիայի լիցենզավորման ու տեսչական-վերահսկիչ կառույցներ, հասարակական միավորումներ, քաղաքացիներ, ինչպես նաև գիտակրթական ոլորտի համապատասխան հաստատություններ, որոնցից հասարակականներին ու մասնավորներին՝ ըստ նրանց վերապահված և/կամ պատվիրվող լիազորությունների) հիմնական գործառույթներն են՝ գաղափարաբանության տարածումը, այդ թվում՝ կրթության միջոցով, տեղեկույթի շրջանառության, հետադարձ կապի և հանրային վերահսկողության ապահովումը,

3) օրենսդիր ենթահամակարգի (Ժողովուրդ[9], Աշխարհաժողով[10], խորհրդարան, ինչպես նաև համայնքներ և դրանց ներկայացուցչական

[8] Մասնավորապես, ըստ հինգ ուժերի (եթեր, հուր, օդ, ջուր, հող) գործադիրի գործառույթները համապատասխանում են՝

1) կենտրոն(մարդ)-եթերը՝ մարդու հոգեմտավոր և նյութական վերարտադրության ոլորտին,
2) հուրը՝ պաշտպանության (արտակարգ ազդեցություններից) ոլորտին,
3) օդը՝ արտաքին հարաբերության ոլորտին,
4) ջուրը՝ նյութական արժեքների արարման և կառավարման ոլորտին,
5) հողը՝ եղածի հաշվառման և պահպանության ոլորտին:

[9] Ժողովուրդը՝ հանրաքվեների և ուղիղ ժողովրդավարության այլ ձևերի միջոցով:

մարմինների (տեղական ինքնակառավարման մարմինների) նորմաստեղծ բաղադրիչ) հիմնական գործառույթներն են՝ ռազմավարության ընդունումը, դրա իրագործման կարգի սահմանումը և դրա գործադրման հսկողությունն ու վերահսկողությունը,

4) գործադիր ենթահամակարգի (պետական և տեղական ինքնակառավարման գործադիր կառավարման մարմիններ, այդ թվում՝ կենտրոնական բանկ) հիմնական գործառույթներն են՝ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով և օրենքներով սահմանված կարգով ռազմավարության իրագործումը,

5) դատական (դատաիրավական) ենթահամակարգի (դատարաններ, արբիտրաժներ, մինչդատական վարույթի մարմիններ, պատիժների իրականացման և դրա նկատմամբ հսկողության ապահովման մարմիններ, դատական ակտերի հարկադիր կատարման մարմիններ, ինչպես նաև փաստաբաններ) հիմնական գործառույթն է իրավունքին համապատասխան արդարադատության իրականացումը՝ արդարության վերականգնման և իրավունքի վերահաստատման միջոցով:

Վարչատարածքային բաժանումը, տարածքային կառավարումը և տեղական ինքնակառավարումը

Մինչ Հայկական բարձրավանդակի հիմնական մասի վերատիրացումը և նահանգների տարածքներով վարչական բաժանումը, առաջարկվում է թողնել ներկայիս մարզային բաժանումը, սակայն մասամբ վերանայել այն՝ խոշորացման միտումով, ներկայիս 10-ի փոխարեն՝ 5 մարզ[11]**:**

Միևնույն ժամանակ՝ առաջարկվում է վերականգնել խորհրդային ժամանակվա վարչատարածքային միավորները, որոնք հիմնականում համընկնում են մեր գավառների տարածքներին, քանի որ դրանք աշխարհագրական, ռելիեֆային, ենթակառուցվածքային, ենթամշակութային և մի շարք այլ առումներով եղել և մնում են որպես մեկ ամբողջություն: Դրանց մասնատումը, կազմացրումը կամ այլ տրամաբանությամբ և վերակազմումը հանգեցնում է կառավարման արդյունավետության զգալի անկման և այլ բացասական հետևանքների:

Խնդիրը լուծելու համար առաջարկվում է նախկին խորհրդային վարչական շրջանները վերածել համայնքների (մեկ շրջան-մեկ համայնք) և դրանց կառավարման մարմինները կազմավորել համայնքնային ընտրությունների միջոցով:

Հարկ կլինի նաև փոփոխել քաղաքների դասակարգումը՝ առանձնացնելով հանրապետական (Երևան, Կումայրի, Վանաձոր) և շրջանային ենթակայության քաղաքները:

---

[10] Աշխարհաժողովը ժողովրդի բարձրագույն ներկայացուցչական մարմին է, որ գործում է մշտական հիմունքներով և, բացառությամբ հանրաքվեով լուծվող հարցերից, կայացնում է ազգի և պետության կյանքին վերաբերվող մյուս բոլոր ռազմավարական որոշումները: Ավելի մանրամասն տե՛ս Վարուժան Ավետիսյան, «Ժողովրդավարության վերածննդի Արարատյան մոդել» հոդվածը:

[11] Սյունիքի մարզը և Վայոց Ձորի մարզը՝ Սյունիքի մարզ (կենտրոնը՝ Սիսիան), Արարատի և Արմավիրի մարզերը և նախկին Աշտարակի շրջանը՝ Արարատի մարզ (կենտրոնը՝ Մասիս), Կոտայքի և Գեղարքունիքի մարզը՝ Գեղարքունիքի մարզ (կենտրոնը՝ Սևան), Արագածոտնի մարզի մնացյալ մասը և Շիրակի մարզը՝ Շիրակ-Արագածոտնի մարզ (կենտրոնը՝ Արթիկ), Լոռու և Տավուշի մարզը՝ Լոռի-Տավուշի մարզ (կենտրոնը՝ Վանաձոր):

Երևան քաղաքի վարչական շրջաններին տալ ենթահամայնքի կարգավիճակ և ղեկավարներին ընտրել տեղական ընտրությունների միջոցով:

Մեր, հատկապես գյուղական, բնակավայրերում առկա ամուր ազգակցական-սոցիալական կապերը, որ ինքնին դրական և պահպանության ենթակա երևույթ է, համայնքային ընտրությունների ժամանակ վերածվում են անհաղթահարելի խոչընդոտի և խեղիչ գործոնի. մարդկանց մեծ մասը ոչ թե համայնքի ղեկավար է ընտրում, այլ իր ազգականին և բարեկամին, ինչի հետևանքով մեծ հարազատություն ունեցող ապիկարը կարող է առաջ անցնել հմուտ կառավարչից և զբաղեցնել նրա տեղը:

Այս սոցիալ-մշակութային արգելքը հաղթահարելու համար ժամանակ և մեծ ջանքեր են հարկավոր, ուստի առայժմ ճիշտ կլինի գյուղական բնակավայրերի ղեկավարներին նշանակել տվյալ բնակավայրի բնակիչների թվից՝ որպես համայնքային ծառայողի:

Իսկ շրջանային ենթակայության քաղաքները պետք է դառնան ենթահամայնքներ և ընտրեն իրենց ղեկավարներին:

Զուգահեռաբար՝ հարկավոր է բեռնաթափել մարզպետարանների կառուցվածքը, գործառույթներն ու լիազորությունները՝ դրանք սահմանափակելով տարածքային քաղաքականության համադրման համար անհրաժեշտ նվազագույն ծավալով:

Նկար 1



Նկար 2



Նկար 3



Նկար 4


1 H
2 He
3 Li
4 Be
5 B
6 C
7 N
8 O
9 F
10 Ne
11 Na
12 Mg
13 Al
14 Si
15 P
16 S
17 Cl
18 Ar
19 K
20 Ca
21 Sc
22 Ti
23 V
24 Cr
25 Mn
26 Fe
27 Co
28 Ni
29 Cu
30 Zn
31 Ga
32 Ge
33 As
34 Se
35 Br
36 Kr
37 Rb
38 Sr
39 Y
40 Zr
41 Nb
42 Mo
43 —
44 Ru
45 Rh
46 Pd
47 Ag
48 Cd
49 In
50 Sn
51 Sb
52 Te
53 I
54 Xe
55 Cs
56 Ba
57 La
58 Ce
59 Pr
60 Nd
61 —
62 Sm
63 Eu
64 Gd
65 Tb
66 Dy
67 Ho
68 Er
69 Tu
70 Yb
71 Lu
72 —
73 Ta
74 W
75 —
76 Os
77 Ir
78 Pt
79 Au
80 Hg
81 Tl
82 Pb
83 Bi
84 Po
85 —
86 Rn
87 —
88 Ra
89 Ac
90 Th
91 Pd
92 U
118 —

Նկար 5

Նկար 6

Նկար 7



Նկար 8



Звартноц. План

Նկար 9

Նկար 10

Նկար 11



Նկար 12

Նկար 13



Նկար 14



ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՆՆԴԻ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՄՈԴԵԼ

Վարուժան Ավետիսյան

ՆԱԽԱԲԱՆ

Միջնադարում տեղի ունեցավ մշակութային, քաղաքակրթական վերածնունդ:

Դրա համատեքստում մեկնարկեց նաև ժողովուրդների ինքնակառավարման կամ ժողովրդավարության վերածնունդը:

Սակայն ժողովրդավարության վերածնունդը մնացել է կես ճանապարհին՝ վիժեցման արդեն տեսանելի մարտահրավերին դեմ հանդիման:

Մեր կարծիքով, այս կիսատությունը հիմնականում պայմանավորված է առավելապես երկու համակարգաստեղծ բաղադրիչների (ընդհանրականի նկատմամբ անհատականի գերակայություն և առևտրային-պայմանագրային) գեներացմամբ կայացած Միջերկրծովյան քաղաքակրթության վրա հիմնվելու:

Մեր պատկերացմամբ, ժողովրդավարությունը կարող է հաղթահարել ճգնաժամը և վերածնունդ ապրել, եթե հիմնվի երկու այլ համակարգաստեղծ բաղադրիչների (ընդհանրականի ու անհատականի ներդաշնակություն և հոգևոր-արժեքային) գեներացմամբ կայացած Արարատյան քաղաքակրթության վրա, ինչպես նաև կիրառի արդի հաղորդակցային տեխնոլոգիաների հնարավորությունները:

ՆՊԱՏԱԿ

Ստեղծել պետության կառավարման համակարգ, որն իրապես կարտահայտի ժողովուրդ-ինքնիշխանի ընդհանուր կամքը և.

1) հնարավոր կդարձնի մտքի ու կամքի ազատագրումը՝ ստեղծագործաբար սնվելով անցյալից և խիզախորեն կերտելով ապագան,

2) կապահովի առավելագույն հնարավոր արդյունավետություն, քանի որ ժողովրդին կբերի ներդաշնակ ամբողջականության «երամ» վիճակի և առավելագույն սիներգիականությամբ կբազմապատկի նրա կարողականությունը և կերաշխավորի լավագույն լուծումներ,

3) գրեթե կբացառի իշխանության յուրացումը, ինչն այս կամ այն չափով առկա է ներկայիս անգամ ամենաժողովրդավարական երկրներում,

4) կուսակցությունները կզտի պատեհապաշտներից և դրանք կվերածի իրապես գաղափարների գեներացման և քաղաքական կամքի ձևավորման ու արտահայտման ինստիտուտների,

5) էապես կսահմանափակի չարիք դարձած պոպուլիստների ու կարիերիստ-դուրսպրծուկների մուտքը քաղաքականություն՝ այն վերածելով իրապես նվիրյալ գաղափարականների ու բարձրակարգ մասնագետների գործունեության,

6) կչեզոքացնի օտար համակարգերի և ներքին կոռուպցիայի բացասական միջամտությունն ու ազդեցությունը երկրի քաղաքական կյանքում:

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ՝ ՈՐՈՇԻՉ ՄԵԿՆԱԿԵՏ

Ազատության ըմբռնումը որոշիչ է մարդու աշխարհընկալման և, ըստ այդմ, վարքի համար:

Մինչ օրս ազատության հասկացությունը սահմանելու մեկնակետը համեմատությունն է որևէ հոգևոր կամ նյութական արժեք (բարիք) ձեռք բերելու կամ արդեն ունեցածը չկորցնելու կամընտրանքի հնարավորությունների սպեկտրի (լուսակն) տիրույթում՝ դրա հակադիր բևեռների մեջ և միջև:

Սա ոչ թե արմատից բխող, այլ ածանցյալ մեկնակետ է:

Սակայն, սխալանքը մեծ չի լինի, եթե ազատության հասկացությունը նման մեկնակետից սահմանելիս աչքի առաջ ունենանք իդեալական, արարչակերպ մարդուն, քանի որ նրա կամընտրանքը բխում է արարչականից և ծառայում է արարչականին:

Մինչդեռ առօրեական մարդը հեռու է իդեալից, ուստի ազատության հասկացությունը նման մեկնակետից սահմանելիս իրականում սահմանում ենք կամայականությունը:

Այդ պատճառով հարկ է սահմանումը բխեցնել արմատից և որպես սահմանման մեկնակետ դիտել ազատության՝ որպես արարչական շնորհի, իմաստը, դրա նախանշանակումը:

Ըստ այդմ՝ ազատությունը մարդուն Արարչի տված հիմնական արարչական շնորհն է, որի շնորհիվ նա կարողանում է դրսևորել Արարչից ստացած իր մյուս բոլոր շնորհները և ի կատար ածել մարդու առաքելությունը՝ նմանվել Արարչին, դառնալ արարչակերպ:

Ըստ այդմ՝ կամքը, ներառյալ՝ ընտրության հնարավորությունը, դրսևորվում է ազատությունն օգտագործելու, դրանից օգտվելու երկու տարբերակներից մեկն ու մեկի ձևով՝ հանուն արարման կամ հանուն կործանման:

Առաջինն ազատություն է, մինչդեռ երկրորդը՝ ինքնակամություն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄՆԵՐ

Պետության կառավարման ասպարեզում մարդկությունը հայտնվել է փակուղում:

Վերջին տասնամյակների ընթացքում քաղաքական, տնտեսական, մեդիա և այլ համակարգերն ու ինստիտուտները, օգտագործելով առաջանցիկ տեմպերով ու ծավալներով զարգացող քարոզչական ու մեդիա տեխնոլոգիաները, իսկ հարկ եղած դեպքում՝ նաև բռնության մեքենան, ոչ միայն հաղթահարում են մարդկանց մեծ մասի քննադատական մտքի կարողականության վերին սահմանը, այլև գաղութացնում են նրանց գիտակցությունը, թելադրում գաղափարներ, ճաշակ, ուստի նաև՝ կամք:

Մարդկությունը յուրօրինակ ձևով վերադարձել է խավար միջնադար:

Ժողովուրդների ամբոխացումը հանգեցնում է ժողովրդավարության վերասերման ու ամբոխականացման:

Սովորական են դառնում վերնախավերի կեղծացումը, զուգահեռաբար՝ իշխանության յուրացումը, չարաշահումն ու պետության զավթումը:

Ըստ այդմ՝ մեծ ու հզոր պետությունները և վերպետական ու անդրազգային համակարգերն ապամարդկայնանում են, իսկ փոքր պետությունները վերածվում են ռեսուրսի:

Ազատ միտքը և ազատ կամքը կանգնած են պատմության շրջադարձային մարտահրավերներին դեմ հանդիման:

Ժողովրդավարությունը երբեք այսքան վտանգված չի եղել:

Ուստի կենսականորեն կարևոր է դառնում առաջացած ճգնաժամի հաղթահարումը և ժողովրդավարության վերածնունդը:

ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՏՄԱԿԱՆ-ԷՎՈԼՅՈՒՑԻՈՆ ԵՎ ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐ

Պատմական-էվոլյուցիոն

Ներկայիս ժողովրդավարական համակարգերն արդյունք են հպատակների միապետության և քաղաքացիների հանրապետության միջև փոխզիջման:

Մինչդեռ սրանք անհամատեղելի են և չեն կարող սիմբիոզ ստեղծել:

Այս փոխզիջումը տեղի է ունեցել հետևյալ կերպ. կողմերը պահպանել են միապետականության և ֆեոդալիզմի հայեցակարգային-կառուցվածքային համակարգը, այդ թվում՝ դրա համակարգաստեղծ բաղադրիչ անձակենտրոնությունը, սակայն փորձել են այն լցնել նոր բովանդակություններով՝ առաջին հերթին և գլխավորապես միապետ-ինքնիշխանի կամքի փոխարեն առանցքում դնել ժողովուրդ-ինքնիշխանի կամքը:

Մինչդեռ հետզհետե ակնհայտ է դառնում, որ հին տիկի մեջ նոր գինի լցնելու այս փորձը ստիպված ենք արձանագրել որպես մարդկության հերթական ձախողում:

Սահմանադրական միապետությունների աչքառու հանգամանքը զատ թողնելով, առանց երկմտելու կարելի է փաստել, որ ներկայիս կառավարման համակարգերի նախագահներն ու վարչապետները ոչ այլ ինչ են, եթե ոչ բավականին լայն լիազորություններով օժտված ժամանակավոր միապետներ:

Ըստ այդմ՝ նրանց շուրջ ձևավորվող պաշտոնեական դասը մի յուրօրինակ արքունիք է՝ բնորոշ արատներով, եսակենտրոնությամբ և խմբակենտրոնությամբ:

Առաջին դեմքերի սրբազնացումը, միջազգային-դիվանագիտական արարողակարգն ու էթիկետը, առաջին տիկնոջ ինստիտուտը, կառավարման մարմինների տեղակայումը պալատներում կամ պալատանման կառույցներում, վերնախավերի արքունական վարքուբարքը և շատ այլ երևույթներ մատնում են միապետականությունն ու ֆեոդալիզմը, դրան բնորոշ անհավասարությունն ու անարդարությունը, արտոնյալությունը, ժողովրդից մեկուսացումն ու նրա կամքն իմիտացմամբ շահագործելը:

Իշխանությունն ունի կենտրոնաձիգ կուտակման բնական մղում, ուստի առկա կառավարման համակարգերում իշխանության իրականացման ճյուղերի ոչ լիարժեք տարանջատումը հանգեցնում է ժողովրդի կամքի ոտնահարման և ստեղծում է այդ կամքի իմիտացիայի ու դրա միջոցով իշխանության յուրացման հնարավորություններ:

Կուսակցություններն առկա կառավարման համակարգերում ձևավորվում են հասարակության շահախնդիր խմբերից: Որպես կանոն, դրանցում գերակշռում են զոհաբերականությունից զուրկ եսամոլ կարիերիստները, որոնց գերակա նպատակն է հասնել կառավարման ղեկին և այն օգտագործել անձնական ու խմբային շահերն սպասարկելու համար:

Հզոր գաղափարական մեկնարկային լիցքը, կամքն ու զոհաբերականությունը, որ բնորոշ են եղել առկա կառավարման համակարգերի կայացման շրջանի հեղափոխական քաղաքական գործիչների դասին, այլասերվել ու անկել են հատկապես վերջին տասնամյակների ընթացքում:

Ժողովրդավարական համարվող կառավարման համակարգերում մեր աչքի առաջ հաստատվում է անբարո, արկածախնդիր ու բռնապետական մղումներով պոպուլիստների կամ անդրկուլիսյան խմբերի կամակատար աթոռակալների կառավարչական դաս, ինչն, ըստ էության, ժողովրդավարության հոգեվարքի հիմնական նախանշաններից մեկն է:

Պրոբլեմն օբյեկտիվ է, քանի որ ներկայիս ժողովրդավարական կառավարման համակարգերը հիմնված են ոչ թե հասարակության օրգանիզմում սիմբիոզի, այլ սիմբիոզի ձև ու կերպի տակ թաքնված հակաբիոզի վրա:

Մարդաբանական

Ըստ Էթիկական (արժեսկզբունքային) չափանիշների և բարոյակամային հատկանիշների՝ մարդիկ դրսևորվում են որպես.

1) հնազանդներ,
2) ինքնակամներ,
3) ազատներ:

<u>Հնազանդներ</u> – Առանձնապես չեն ձգտում ազատության և իրավունքի և ենթարկվում են առկա (պարտադրվող) էթիկական չափանիշներին ու նորմերին (բացասական թե դրական):

<u>Ինքնակամներ</u> – Ձգտում են ազատության և իրավունքի, բայց միայն հանուն իրենց, չունեն էթիկական մղումներ և ինքնասահմանափակումներ, հակված են սահմանազանցելու, ներառյալ՝ շրջանցելու և ոտնահարելու, էթիկական չափանիշներն ու նորմերը, այդ թվում՝ այլոց ազատությունն ու իրավունքը:

<u>Ազատներ</u> – Ձգտում են ազատության և իրավունքի, բայց ոչ միայն հանուն իրենց, այլև առաջին հերթին հանուն բոլորի, ունեն բարձր էթիկական մղումներ և ինքնասահմանափակված են էթիկական չափանիշներով ու նորմերով, այդ թվում՝ այլոց ազատությամբ և իրավունքներով:

Ըստ քաղաքական գիտակցության, մարդիկ պայմանական «քաղաքական պարույր»-ում (տե՛ս սխեմատիկ պատկերը) դրսևորվում են որպես.

<u>Բանիմացներ</u> – Աջ են, պահպանողական, ստատիկ, ձգտում են կայունության: Բանիմացությունը քաղաքական պարույրի մեկնարկն է: Բանիմացը միայն ընդհանրական, հասկացության մակարդակի պատկերացում ունի կյանքի, ներառյալ՝ քաղաքական ինստիտուտների և գործընթացների, վերաբերյալ, չի տեսնում բացերն ու արատները, իսկ եթե նույնիսկ ինչ-ոչ չափով տեսնում է, ապա դրանք ընդունում է որպես անխուսափելիություններ և այդ պատճառով

վախենում է վերանայել իրերի դրությունը և ձգտում է կայունության ու անփոփոխության, հարմարվում է և պաշտպանում է եղած իրերի դրությունը, միակողմանի է և աչառու, հաճախ կաղապարված է և ժամանակից հետ ընկած:

Գիտուններ – Ձախ են, հեղափոխական, դինամիկ, ձգտում են փոփոխության: Գիտունությունը քաղաքական պարույրի բեկումն է: Գիտունը բավականին խորը, դատողության մակարդակի պատկերացում ունի կյանքի, ներառյալ՝ քաղաքական ինստիտուտների և գործընթացների, վերաբերյալ, տեսնում է բացերն ու արատները և գիտակցում է դրանց վերացման անհրաժեշտությունը, այդ պատճառով ձգտում է վերանայել իրերի դրությունը: Միևնույն ժամանակ՝ չունենալով կյանքի ամբողջական պատկերացում, որպես կանոն, չափն անցնում է, դառնում է միակողմանի եւ աչառու, հաճախ անտեղի է և ժամանակից առաջ ընկնող:

Իմաստուններ – Հավասարակշռող-համադրող ամբողջական են: Իմաստնությունը քաղաքական պարույրի ավարտ-ամբողջացումն է: Իմաստունն ամբողջական, մտահանգման մակարդակի պատկերացում ունի կյանքի, ներառյալ՝ քաղաքական ինստիտուտների և գործընթացների, վերաբերյալ, այդ պատճառով գիտակցում է, թե ինչը և ինչպես պետք է պահպանել և ինչը ու ինչպես պետք է փոփոխել: Նա հավասարակշիռ է, արդար և տեղին ու ժամանակին:

Կան նաև երկու միջանկյալ տիպեր՝ բանիմաց-գիտուններ և գիտուն-իմաստուններ:

Բանիմաց-գիտուններ – Աջ կենտրոնամետ են, չափավոր պահպանողական և ստատիկ-մասամբ դինամիկ:

Գիտուն-իմաստուններ – Ձախ կենտրոնամետ են, չափավոր (էվոլյուցիոն) հեղափոխական և դինամիկ-մասամբ ստատիկ:

Կից ներկայացվող «Քաղաքական պարույր» սխեմատիկ պատկերում նշված տիպերը ներկայացված են հետևյալ համարակալմամբ.

1. Բանիմաց,
2. Բանիմաց-գիտուն,
3. Գիտուն,
4. Գիտուն-իմաստուն,
5. Իմաստուն:

Քաղաքական պարույր

-



Մեկ բացառությամբ նույն անձի մեջ էթիկական-բարոյականային եռյակի (հնազանդներ, ինքնակամներ, ազատներ) և դրանց միջանկյալ տիպերից յուրաքանչյուրը կարող է համադրվել քաղաքական գիտակցության եռյակի (բանիմացներ, գիտուններ, իմաստուններ) և դրանց միջանկյալ տիպերից յուրաքանչյուր հետ:

Բացառությունը իմաստունի և ինքնակամի համադրումն է: Իմաստնությունը համադրելի չէ ինքնակամության հետ:

Էթիկական-բարոյականային հատկանիշները պայմանավորում են անձի դրսևորման բնույթը, մինչդեռ քաղաքական գիտակցության հատկանիշները՝ որակը:

Կառավարման բնութը հիմնականում պայմանավորված է հասարակության անդամների էթիկական-բարոյականային հատկանիշներով, իսկ գիտակցական հատկանիշներն ունեն ածանցյալ, սպասարկող դեր:

Հասարակության էթիկական-բարոյականային եռյակում (հնազանդներ, ինքնակամներ, ազատներ) հարաբերակցությունը տարբեր է պատմական, աշխարհագրական, մշակութային և այլ, բայց գործնական դրսևորման առմամբ՝ հիմնականում քաղաքական մշակույթի և կառավարման համակարգի, պատճառներով:

Անշուշտ, կան սրանց նվազագույն բացարձակ քանակներ: Սակայն, որպես կանոն, կյանքում դրանցից յուրաքանչյուրի քանակը միջանկյալ վիճակների հաշվին նվազագույն բացարձակից ավելին է:

Բարձր էթիկայի և ազատությունը խրախուսող և ինքնակամությունը սահմանափակող քաղաքական մշակույթի ու կառավարման համակարգի պարագայում ինքնակամության և հնազանդության հակումներ ունեցողների զգալի մասը կդրսևորվեն որպես ազատներ:

Մինչդեռ ցածր էթիկայի և ինքնակամությունը խրախուսող քաղաքական մշակույթի և կառավարման համակարգի պարագայում ինքնակամները կզավթեն ամեն ինչ, հնազանդներին կդարձնեն գործիք և կհալածեն ու դուրս կմղեն ազատներին:

Առաջինը ժողովրդավարություն է, երկրորդը՝ բռնապետություն:

Ժողովրդավարության պարագայում ազատներն առաջին պլանում են, նրանց կողքին կան նաև ինքնակամները, բայց ազատները գերակշռում են:

Բռնատիրության պարագայում ազատները շատ քիչ են (ամբողջատիրության պարագայում ձգտում են բացարձակ նվազագույն քանակի) և մղված են հետին պլան (լուսանցք), հալածվում են քաղաքական և, որոշ չափով նաև այլ ասպարեզներում (ամբողջատիրության պարագայում բոլոր ասպարեզներում և շատ ավելի կոշտ կերպով): Գերիշխում են ինքնակամները, որոնք ամեն կերպով և առումով օգտագործում են հնազանդներին:

Ըստ այդմ՝ կախված քաղաքական մշակույթից և կառավարման համակարգից, տեղի է ունենում ժողովրդի ազգացում կամ ամբոխացում և ինքնացում կամ ինքնամերժում (ինքնաքայքայում, ինքնաոչնչացում):

Վերը նկարագրված ժողովրդավարությունը և բռնատիրությունը, հարկավ, նկատի ունենք իրենց զուտ, «իդեալական» վիճակներում:

Իրականության մեջ դրանցից յուրաքանչյուրն այս կամ այն չափով ունի մյուսի տարրեր, ինչի հետևանքով առաջանում է գրեթե անսահման բազմազանություն:

Ասվածի համատեքստում կա մի սինթետիկ տարբերակ, որն ավելի ու ավելի է սպառնում ներկայիս մարդկությանը:

Ցածր ու պարզունակ էթիկայի և ցածր ու պարզունակ կոլեկտիվ գիտակցության պայմաններում ինքնակամությունը շփոթվում է ազատության հետ, իսկ ինքնակամները՝ ազատների: Դրա շնորհիվ ինքնակամները չարաշահում են մարդկանց վստահությունը, խաբում են հասարակությանը, նրան վերածում են հնազանդ ամբոխի և, օգտվելով նրա թմրաքնած ու հիպնոսացած վիճակից, տիրանում են կառավարման բռնության, մեդիա ու տնտեսական լծակներին, այնուհետև յուրացնում են իշխանությունը, զավթում են պետությունը և պետությունը դարձնում են իրենց հանցագործությունների գործիք: Այս եղանակով հաստատվող բռնատիրությունը նախկինում հանդես էր գալիս բացառապես դասական դիմագծով, ինչի ամենացայտուն օրինակը նացիստական Գերմանիան է: Ներկայումս՝ գիտակցության և կամքի կառավարման, առաջին հերթին՝ մեդիա և կրթական, տեխնոլոգիաների զարգացման ու հարաճուն ազդեցության շնորհիվ, բռնատիրությունը ավելի հաճախ է հանդես գալ որպես կեղծժողովրդավարություն:

Քանի որ հասարակության շարժիչ ուժերն են ազատներն ու ինքնակամները, ուստի մարդկության խնդիրն է ստեղծել այնպիսի կառավարման համակարգ, որը կերաշխավորի ազատների հնարավորինս մեծ քանակ և որոշիչ դեր:

Կարող է զարմանալի թվալ, բայց մինչ օրս մարդկային մտքի, նրա աշխարհընկալման ելակետային չափանիշների համակարգը չի փոփոխվել և մնացել է մարդու զգայարանների (հիմնականում՝ տեսողության և լսողության) անմիջական հասանելիության տիրույթի շրջանակում:

Մարդը հասարակությունը և հասարակական հարաբերությունները, ինչպես շրջապատի առարկաներն ու երևույթները, պրոյեկտում է իր զգայարաններին հասու տիրույթի վրա, տեղավորում է դրա շրջանակներում, ապա նոր միայն դիտում ու դիտարկում է դրանք:

Սա բնական է, օրինաչափ և անփոփոխելի:

Պատահական չէ, որ տարածության և ժամանակի մեջ իրերի և երևույթների ներսն ու կապերը, դրանց քանակական և որակական դրսևորումները, տարածական տեղակայվածությունը և այլ հատկանիշները մարդու համար ավելի ու ավելի հասանելի ու ճանաչելի դարձնող արդի տեխնիկատեխնոլոգիական հնարավորություններն ընդամենը ծառայում են դրանք մարդու զգայարանների համար հասանելի դարձնելու նպատակին:

Այս է պատճառը, որ մարդը հասարակությունը պատկերացնում է որպես իր համար տեսանելի ու լսելի միջավայր, իրեն ճանաչելի և ֆիզիկապես հասանելի մարդկանց խումբ, իսկ ավելի մեծ քանակությամբ մարդկանց հանրության մասին պատկերացում կազմելու համար այն պրոյեկտում է իրեն հասու մոդելի վրա:

Պետություններն սկսեցին ձևավորվել, երբ երկրագնդի վրա մարդիկ սակավաթիվ էին, իսկ նրանց կազմած հասարակությունները՝ փոքրաքանակ: Եվ, բնականաբար, դրանք ձևավորվեցին փոքր հասարակությունների (ցեղ, տոհմ, քաղաք) ու դրանց բնորոշ հարաբերությունների համակարգերի տրամաբանությանը համապատասխան:

Առաջին միապետները տոհմապետներն էին: Միապետությունը տարածվում էր ցեղերի, տոհմերի բնակության փոքր արեալներում:

Մենք այդ ժամանակներից առ այսօր մեր պատկերացումներում ունենք հոր նման հոգատար, «բարի միապետ»-ի ֆենոմեն, ըստ որի նա իր ցեղի, տոհմի զավակներին վերաբերվում է ծնողի նման, արդարամիտ է և արդարադատ:

Եվ, քանի որ այսպիսի պատկերացումները ևս բնական են ու բնորոշ են մարդկանց, կյանքում պատահում են նաև իսկապես բարի միապետներ:

Մյուս տարբերակը քաղաք-պետությունների ժողովրդավարությունն է, որ գործում էր փոքր՝ մարդու աչքի ու ականջի համար անմիջականորեն հասանելի տիրույթում՝ քաղաքի հրապարակում:

Բոլոր պատմական դեպքերում, երբ կառավարման համակարգերը և հասարակություններն աճել են և դուրս են եկել մարդու զգայարանների համար անմիջականորեն հասանելի շրջանակից, ի վերջո դարձել են բռնապետություններ:

Պատճառն այն է, որ, որպես կանոն, ինքնակամներն են ձգտում իշխանության և, երբ հասնում են դրան, ի վերջո դառնում են բռնապետներ և հաստատում են բռնատիրություն:

Այսպես, թե տոհմացեղային միապետությունների և թե ժողովրդավարական փոքր քաղաք-պետությունների միավորման և/կամ հզորացման ու տարածման

պարագայում ստեղծվել են բռնապետական պետություններ կամ կայսրություններ:

Ուստի, մեր հիմնական առաջնային խնդիրն է՝ այնպես անել, որ ինքնակամները չկարողանան զավթել կառավարման լծակները:

Ընդսմին, հարկ է նկատի ունենալ, որ մարդն ինքնին փոքր, մարդաչափ համակարգի տարր է և շատ քչերն են կարողանում մեծ մտածել ու մեծ գործել, մինչդեռ.

1) մեծաքանակ հասարակություններում և մեծ տարածքներում սովորականից, միջին պատկերացումներից ավելի երկար ու բարդ կամք և գիտակցություն է պետք մեծ համակարգ, տվյալ դեպքում՝ պետություն ստեղծելու համար,

2) կարճ և պարզ կամքի ու գիտակցության պարագայում, օրինակ, մարդիկ բարի են, արդար, երբեմն նույնիսկ՝ հերոս, բայց երբ անհրաժեշտ է երկար ու բարդ կամք և գիտակցություն, շատ բարիներ դառնում են չար, շատ արդարներ՝ սրիկա և որոշ հերոսներ՝ նույնիսկ դավաճան:

ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԴԵՏԵՐՄԻՆԱՆՏՆԵՐ

Որպես հիմք ընդունելով Կոստան Զարյանի խոհատեսական մոտեցումները, կարող ենք դրանցից բխեցնել այն եզրահանգումը, որ պատմական-էվոլյուցիոն և մարդաբանական գործոնների համախումբ ազդեցությամբ կառավարման մշակույթները և դրանցից բխող կառավարման համակարգերը էական մասով կայանում և գործառում են ըստ հետևյալ քաղաքակրթական դետերմինանտների.

Տիբեթյան – հնազանդություն (Արարիչն ինձ հետ անմիջականորեն հարաբերելի չէ, առաջնորդն Արարչի փոխանորդն է, անքննելի է և անվերապահ, ինքնիշխանը առաջնորդն է, ազգը առաջնորդի հպատակների համախումբն է, ես հպատակներից մեկն եմ):

Միջերկրծովյան – ինքնակամություն (Արարիչը ես եմ, առաջնորդը հավասարների մեջ իմ ընտրածն է, ազգը ինձ նմանների թվաբանական համախումբն է, ինքնիշխանը ազգն է, ես ազգի անդամ եմ):

Արարատյան – ազատություն (Արարիչն իմ հայրն է, առաջնորդը կանչվածների մեջ իմ ընտրած առաջադեմն է, ազգը նախնիների և սերունդների որակական ամբողջությունն է, ինքնիշխանը ազգն է, ես ազգի զավակ և անդամ եմ):

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ. ԿԵՂԾԻՔ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներկայումս կիրառվող ժողովրդավարական համակարգերը ծագում են քաղաք-պետությունների ժողովրդավարության մոդելից:

Քաղաք-պետությունների ժողովրդավարությունը հրապարակային ժողովրդա-վարություն էր՝ իրականացվում էր հրապարակներում: Ձայնի իրավունք ունեցող քաղաքացիները հավաքվում էին հրապարակում որպես ընդհանուր ժողով և որոշում էին քաղաքին վերաբերվող հարցերը:

Քաղաք-պետությունները մեծ չէին, ուստի քաղաքացիները տեղավորվում էին հրապարակում:

Դա մի ժողովրդավարություն էր, որ անմիջականորեն՝ առանց միջնորդի, տեսանելի էր աչքի և լսելի էր ականջի համար:

Քաղաք-պետությունը պարզ ու փոքր համակարգ էր, նրան վերաբերվող հարցերը բարդ չէին, ուստի ամեն քաղաքացի եթե ոչ մտահանգման, ապա դատողության կամ առնվազն հասկացության մակարդակով պատկերացնում էր դրանք և ի վիճակի էր որոշում կայացնել:

Իսկ երբ քաղաք-պետությունը մեծանում ու տարածվում էր, կառավարման օբյեկտն ու լուծելիք պրոբլեմները բարդանում էին, ժողովուրդը չէր տեղավորվում հրապարակում, ուստի ժողովուրդ սուբյեկտի և նրա կառավարմանը ենթակա օբյեկտի միջև կապը դառնում էր միջնորդավորված, ուստի՝ աղավաղված:

Այդ ժամանակ ժողովրդավարությունը ցավոտ ջղաձգումներով մահանում էր՝ տեղը զիջելով միապետությանը: Հռոմի օրինակը խիստ հատկանշական է:

Գաղտնիք չէ, որ անտիկ ժամանակների քաղաք-պետությունների և միջնադարի ազատ քաղաքների ժամանակների համեմատությամբ հասարակությունները քանակապես հազարապատկվել են, բազմապատիկ բարդացել և հետզհետե էլ ավելի է բարդանում կյանքը: Ըստ այդմ՝ բարդանում են կառավարման օբյեկտները, ինչի հետևանքով այդ օբյեկտների կառավարման վերաբերյալ որոշումներ կայացնելու համար հետզհետե ավելի ու ավելի շատ և հաճախ, իսկ որոշ դեպքերում՝ մշտապես, առաջանում է հատուկ գիտելիքների, փորձի ու հմտությունների կարիք:

Պետություն-օբյեկտը, որ թերևս մարդու կառավարմանը ենթակա ամենաբարդ ու բազմապիսի համակարգն է, չի կարող կառավարվել առանց համապատասխան գիտելիքների, փորձի ու հմտությունների:

Կառավարիչների ընտրությունը պետության կառավարման կարևոր ու վճռորոշ մասն է, ուստի դրա համար ևս անհրաժեշտ են համապատասխան գիտելիքներ, փորձ և հմտություններ:

Հակառակ պարագայում պետության կառավարումը կլինի աղավաղված և ոչ արդյունավետ՝ դրանից բխող բացասական, ի վերջո՝ աղետալի հետևանքներով:

Միևնույն ժամանակ, պետության կառավարումը վերաբերվում է յուրաքանչյուրին և բոլորին, ուստի պետք է բխի ընդհանուր կամքից և հաշվի առնի ու երաշխավորի բոլորի և յուրաքանչյուրի արժանապատվությունը, ազատությունն ու իրավունքները:

Ժողովուրդ-ինքնիշխանի կամքի վերահաստատման և իրական ժողովրդավարության հասնելու համար ստիպված ենք ընդունել իրականության մեջ արմատացած կեղծիքների առկայությունը և ձգտենք հաղթահարել դրանց ծնած մարտահրավերները:

Կառավարումը հիմնված է բնության օրենքների վրա, բխում է դրանցից, արտացոլում է դրանք, ուստի կառավարման համակարգը նույնպես պետք է համապատասխանի դրանց:

Որպես գործընթաց, կառավարումը տեղի է ունենում կամքի առանցքով վերից վար իջնող երեք մակարդակներում (միտք, խոսք, գործ) և յուրաքանչյուր մակարդակի հինգ (գաղափարաբանական-հայեցակարգային,

գաղափարախոսական-տեղեկութային, օրենս-դրական (կարգասահմանման), գործադրական, վերականգնման[12]) ոլորտներում:

Կրոնական կամ ամբողջատիրական հասարակություններում հայեցակարգայինը և գաղափարախոսկանը ունիֆիկացվում (միօրինակացվում) – յուրացվում –մենաշնորհացվում են և, որպես կանոն, ներառվում են պետության կառավարման համակարգի մաս կազմող հաստատությունների մեջ:

Ժողովրդավարական հասարակություններում հայեցակարգայինը և գաղափարախոսականը կայանում և գործառում են որպես «ամպ»՝ ներառելով պետական ու ոչ պետական հաստատություններ, կազմակերպություններ, անհատներ, լայն առումով՝ ամբողջ հասարակությանը:

Ժողովրդավարական հասարակություններում դրանք արտացոլվում են հասարակական դաշինքով ընդունված արժեքների բարոյական ու իրավական նորմերում, ռազմավարական հայեցակարգերում, որոնց համապատասխան օրենսդիրը (ժողովուրդը և/կամ խորհրդարանը) ընդունում է վարքագծի համապարտադիր նորմեր սահմանող օրենքներ, գործադիրը կատարում է դրանք, իսկ դատարանը (արդարադատությունը) վերականգնում է խախտված իրավունքները և դրանց խախտմամբ պատճառված վնասները:

Այդ է պատճառը, որ ժողովրդավարական հասարակությանը վերաբերվող տեսություններում և իրավական ակտերում առանձնացվում է կառավարման (իշխանության իրականացման) ոչ թե հինգ, այլ երեք (օրենսդիր, գործադիր, դատական) ճյուղ: Միևնույն ժամանակ, առանց իրավական սահմանման, մեդիան համարվում է իշխանության իրականացման չորրորդ ճյուղ[13]:

Այդուհանդերձ, հանուն ժողովուրդ-ինքնիշխանի կամքին համապատասխան ժողովրդավարական կառավարում ապահովելու, այդ թվում՝ օտար թշնամական և/կամ կոռուպցիոն ազդեցությամբ իշխանության յուրացումը բացառելու, ժողովուրդ-ինքնիշխանի կամքի իրագործման գործիք պետությունը պետք է ունենա գերադասաբար փափուկ ուժի միջոցով հայեցակարգային ու գաղափարախոսական ոլորտները կանխադրված առանցքների շուրջը պահելու կարողություններ, ինչպես նաև վերջիններիս ապահովման համար անհրաժեշտ մեխանիզմներ ու լծակներ:

Այդ նպատակով օրենսդրին (խորհրդարանին), գործադրին և նրա ոլորտային կառուցվածքային մարմիններին, բարձրագույն դատական մարմնին առընթեր պետք է գործեն հետազոտական, կրթական և փորձաքննական հաստատություններ, որոնք դրանց իրավասության տիրույթներում կապահովեն հայեցակարգային ու գաղափարախոսական գեներացումը, համակարգումն ու առանցքաբերումը, այդ թվում՝ մշտադիտման և ուղեվարման միջոցով:

---

[12] Վերականգնումը համակարգի կենսընթացքի յուրաքանչյուր շրջափուլում համակարգի վերարտադրության անհրաժեշտ բաղադրիչ-գործընթաց է (ռեգեներացիա), որն ըստ գաղափարաբանական-հայեցակարգային, գաղափարախոսական-տեղեկութային և օրենսդրական վերաբերմունքի իրականացվում է բնության շնորհածի, ինչպես նաև անցյալում ու ներկայում հայեցակարգայինով հղացված, գաղափարախոսականով տարածված-ներդրված, օրենսդրականով սահմանված, գործադրականով ձեռք բերված արդյունքի պահպանման ու դրա կորսված (վնասված) մասի վերականգնման (փոխարինման, փոխհատուցման) միջոցով:

[13] Իրականում մեդիան, որպես գաղափարախոսական-տեղեկութայինի հիմնական կրող և փոխանցող, կառավարման շղթայի մեջ հայեցակարգայինից հետո երկրորդն է:

Ինչպես արդեն նշվեց, ժամանակակից պետությունները շատ բարդ և բազմապիսի համակարգեր են:

Ուստի ոչ միայն դրանք կառավարելու, այլև դրանց կառավարիչներին ընտրելու (նշանակելու) համար հարկավոր է ունենալ անհրաժեշտ գիտելիքներ, փորձ և հմտություններ:

Եվ յուրաքանչյուր մարդ կարող է կողմնորոշվել և համեմատաբար ճիշտ ընտրություն կատարել ըստ իր գիտելիքների, փորձի ու հմտությունների:

Մինչդեռ պետություն կառավարելու մակարդակում մարդկանց գերակշիռ մեծամասնությունը զուրկ է դրանցից:

Եվ, քանի որ մարդկանց մեծամասնությունը չունի պետություն կառավարելու և կառավարիչներին ընտրելու բավարար կարողություն, նրանց ընտրության իրավունքը չեզոքացվում ու իմիտացվում է և օգտագործվում է ի չարս:

Ուղիղ ընտրական իրավունքը, որ ներկայացվում է իբրև մարդկության ձեռքբերում և ամրագրված է միջազգային ու ազգային օրենքներում, իրականում չի իրացվում իր նպատակային նշանակության իմաստով, նույնիսկ հաճախ չեզոքացված է այլ օրենքներով ու մեկնաբանություններով:

Քաղաքացին ոչ մի իրական ու գործնական լծակ չունի օրենսդիր, գործադիր և դատական մարմինների որոշումների ու գործողությունների վրա արդյունավետ կերպով ազդելու համար: Նա ստիպված է սպասել մինչև հաջորդ ընտրություններ, որոնց ժամանակ ընդամենը ստիպված է ընտրելու չարիքի փոքրագույնին: Նա հարկադրված է հանդուրժելու սահմանափակ թվով շահառուական խմբերին ներկայացնող քաղաքական ուժերի, վերլուծաբանների և մեդիայի սուտն ու կեղծիքը, կամա թե ակամա ենթարկվել դրանց ազդեցությանը և ուղղորդմանը, ապա «ընտրել»:

Պատմության ընթացքում պատահած դեպքերը, որոնք հիմնականում համընկնում են ժողովուրդ-ինքնիշխանի ոգեղեն պոռթկումների կարճ ժամանակահատվածներին, երբ նաև առաջ են եկել ժողովրդի սրտին և մտքին ներդաշնակ առաջնորդներ, շատ սակավաթիվ են: Մնացյալ դեպքերում առաջ են գալիս պատեհապաշտները, որոնց պատճառով հետագայում նաև կորսվում է սերունդների արյուն-քրտինքով ձեռք բերածը:

Ուստի կառավարման համակարգը պետք է ձևավորվի և գործառի բացասական կանխավարկածի հաշվառմամբ, որպեսզի չհայտնվի սրիկաների ձեռքում, իսկ պատահաբար հայտնվելու պարագայում հնարավոր լինի նրանցից ձերբազատվել:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՄԱԿԱՐԳ

Ինքնակամների ձեռքում կառավարման լծակների հայտնվելը բացառելու և ժողովուրդ-ինքնիշխանի ընդհանուր կամքն արտահայտող պետության կառավարման համակարգ ստեղծելու մեր նպատակին հասնելու համար առաջարկում ենք կառավարումը բաժանել ըստ մակարդակների և միջանկյալ, փոքր, ավելի հասանելի ու մարդաչափ համակարգ ներմուծելու միջոցով մարդուն հարմարեցնել-համապատասխանեցնել մեծ համակարգին, տվյալ դեպքում՝ պետությանը:

Պատկերավոր ասած՝ անհրաժեշտ է մեծ պետությունը բաժանել յուրօրինակ քաղաք-պետությունների, քաղաք-պետության հրապարակների բջիջների և այդ

բջջային համակարգում միջանկյալ օղակի դեր կատարող բջջի միջոցով մարդուն մոտեցնել, հասու դարձնել կառավարմանը:

Հենց այս տրամաբանությամբ ձևավորվող և գործառող պետության կառավարման համակարգ կիրառած մեր նախնիների ժողովրդական իմաստնությունը և մեր ազգային-պետական ինքնությունն ու ժառանգորդությունը շարունակելու նպատակով պետության կառավարման առաջարկվող համակարգն անվանել ենք «Աշխարհաժողով» համակարգ:

Նախկինում «Աշխարհաժողով»-ը ձևավորվում էր դասային և տարածքային սկզբունքներով[14]:

Մեր պատկերացրած «Աշխարհաժողով» համակարգը նորովի արդիականացված հնի խոստումնալից տարբերակ է[15]:

Ներկայումս այն պետք է ձևավորվի ժողովրդավարական հասարակության մեջ առկա և պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման առավելագույն ներառականություն երաշխավորող բազմաբնույթ սկզբունքներով, այդ թվում՝ մասնագիտական, սոցիալական և տարածքային:

Ասվածի հաշվառմամբ՝ որոշիչ է դառնում ընտրական համակարգի, ինչպես նաև կառավարման մարմինների կառուցվածքագործառութային մոդելի հարցը:

Կառավարման գիտելիքներ, փորձ և հմտություններ չունեցող քաղաքացիների մեծամասնության համար ընտրական համակարգի հիմնական սկզբունքը պետք է լինի չմիջնորդավորված ակտիվ ընտրական իրավունքը: Քաղաքացին պետք է ընտրի այնպիսի մեկին, որին քիչ թե շատ անձամբ ճանաչում և վստահում է:

Մեր պատկերացմամբ, յուրաքանչյուր պայմանական 100 քաղաքացու շրջանում կա առնվազն մեկը, որին մյուսները ճանաչում ու վստահում են[16]:

Նման եղանակով ընտրված պատվիրակները կյանքին և իրենց միջավայրերին առավելապես քաջածանոթ, ժողովրդի կամքն արտահայտող ու փոխանցող շերտն են կազմում[17]:

Պայմանականորեն առնվազն 100 անգամ դժվար և բարդ է ազդել նրանց գիտակցության ու կամքի վրա, քանի որ նրանք, եթե ոչ մտահանգման կամ

---

[14] Ի դեպ՝ մինչ օրս գործող մի շարք երկպալատ խորհրդարաններում առկա է դասայինի և տարածքայինի ծաղրանմանություն:

[15] «Աշխարհաժողով» համակարգի ներդրման փուլում ինքնակամներին հնարավորինս դուրս մղելու նպատակով անհրաժեշտ կլինեն զտիչներ: Սակայն, որքան էլ զտիչներ կիրառվեն, սկզբնական շրջանում ինքնակամները, օգտվելով ցածր էթիկայի վրա հիմնված քաղաքական մշակույթի սողանցքներից ու լծակներից (նաև հաշվի առնենք, որ շատ հնազանդներ դեռևս հակված են լինելու ինքնակամներին, նրանց ազդեցության տակ են լինելու), կարող են զգալի թիվ կազմել, բայց հետագայում համակարգը կհաղթահարի նաև այս պրոբլեմը և ազատները կդառնան կայուն կերպով գերիշխող: Այդ ընթացքում հավելյալ առաքելություն կունենա գաղափարական սկզբունքով ընտրված և գաղափարներ ու բարձր էթիկական չափանիշներ գեներացնող ու դրանցով առաջնորդող խորհրդարանը (տե՛ս Պետական խորհուրդ):

[16] Հնարավոր է, որ այդ թիվն ավելի մեծ է, օրինակ՝ 150 կամ 200: Հարկ կլինի հետազոտել և ճշգրտել:

[17] Ի դեպ, ԱՄՆ-ում մինչ օրս պահպանված ընտրիչների ինստիտուտն այս մոտեցումն է հիշեցնում:

դատողության, ապա առնվազն հասկացության մակարդակով պատկերացնում են պետության կառավարումը և կառավարիչների որակները:

Այս եղանակով ընտրված պատվիրակները կազմում են ժողովրդի կամքը ներկայացնող բարձրագույն ներկայացուցչական մարմինը:

Քանի որ այս մարմինը մեր պատկերացրած «Աշխարհաժողով» համակարգի առանցքն է և պատմական Աշխարհաժողովի նմանօրինակը, առաջարկում ենք այն անվանել Աշխարհաժողով:

Ասվածի համատեքստում նաև առաջարկում ենք մտաբերել հին աշխարհի բնական և անպաճույճ պետական կառավարման համակարգերը և մերօրյա համակարգը կառուցել դրանց արդիականացմամբ՝ կիրառելով նաև գործադիրի ու դրա ոլորտային կառուցվածքային մարմինների պատմական ծագում ունեցող անվանումներ ու բովանդակություններ:

Փորձենք ներկայացնել Հայաստանի համար առաջարկվող պետության կառավարման համակարգի վերաբերյալ մեր պատկերացումները:

ԺՈՂՈՎՈՒՐԴ

1. Ժողովուրդն ամբողջ ծավալով իշխանություն իրականացնող ինքնիշխան է:

2. Ժողովուրդն իշխանությունն իրականացնում է անմիջականորեն կամ Սահմանադրությամբ սահմանված պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով:

3. Ժողովուրդն իշխանությունն անմիջականորեն իրականացնում է հանրաքվեների, ընտրությունների, ինչպես նաև իր հայեցողությամբ՝ ուղիղ ժողովրդավարության այլ միջոցներով՝ անզեն կամ զինված[18] եղանակներով:

ԱՇԽԱՐՀԱԺՈՂՈՎ

4. Աշխարհաժողովը բարձրագույն ներկայացուցչական մարմին է:

---

[18] Զինված եղանակով իշխանության իրականացումը նման է, բայց նույնական չէ զինված ապստամբությանը: Մեր պատկերացմամբ, զինված ապստամբությունը կեղեքիչ տիրողների դեմ հպատակների զինված ընդվզումն է:
«Ապստամբություն» տերմինը ինքնիշխան-միապետի, միապետության համակարգի հայեցակարգային-գաղափարաբանական բովանդակությունից բխող մնացուկային հասկացության անվանում է:
Բնութագրական է, որ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ապստամբության պայման է համարվում այն իրավիճակը, երբ ժողովուրդը կեղեքման բեռից ստիպված է դրան դիմել որպես վերջին միջոցի: Այս ձևակերպումը.

- սահմանափակում է ժողովրդի՝ ըստ իր կամքի և հայեցողության իշխանություն իրականացնելու բացարձակ բնական իրավունքը,
- ժողովրդին պարտադրում է մինչ դանակը ոսկորին հասնելը հանդուրժել կեղեքումն ու իշխանության յուրացումը, ինչպես նաև նրա արարքի գնահատականը թողնում է նրան կեղեքող ու նրա իշխանությունը յուրացրած համակարգին, այն համակարգին, որի դեմ ժողովուրդն ապաստամբել է:

Արդեն ժողովուրդ-ինքնիշխան կարգավիճակն ունեցող սուբյեկտը ոչ թե «ապստամբում» է, այլ զինված եղանակով հաստատում կամ վերահաստատում է ըստ իր ընդհանուր կամքի իշխանություն իրականացնելու իր իրավունքը/հնարավորությունը:
«Ապստամբ» վիճակը և «ապստամբություն»-ը առկա են որպես ժողովուրդ կայանալու և զինված կերպով այդ կայացումն ապահովելու շրջափուլում:
Անցումը մի վիճակից մյուսին որակական է, ուստի հնարավոր չէ որոշել դրա քանակային, չափելի սահմանը, բայց հնարավոր է արձանագրել անցումը որպես որակական փոփոխություն:

5. Աշխարհաժողովը բաղկացած է պատվիրակներից:

6. Աշխարհաժողովի պատվիրակության թեկնածու դառնալու ցանկություն ունեցող ՀՀ քաղաքացին Կենտրոնական ընտրական հանձնաժողովին է ներկայացնում նրա որոշմամբ հաստատված ձևի հայտ, որը պարունակում է սահմանված ձևաչափի համառոտ կենսագրական, ՀՀ քաղաքացու անձնագրային տվյալներ, լուսանկար, օրենքով ներկայացվող չափանիշների ու պահանջների համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր:

7. Թեկնածուն չի կարող լինել որևէ քաղաքական կուսակցության անդամ: Կուսակցության անդամ հայտատուն պետք է սառեցնի իր կուսակցության անդամությունը: Անդամակցության կեղծ սառեցման կամ, առավել ևս՝ Աշխարհաժողովի պատվիրակ եղած ժամանակ կուսակցության թելադրանքով գործելու համար նա պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության:

8. Սահմանված կարգով հայտ ներկայացրած և հայտի պահանջներին համապատասխանող ՀՀ քաղաքացիները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի[19] կազմած հարցաշարով հանձնում են թեսթային քննություն: Դրական արդյունք արձանագրած հայտատուներին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գրանցում է որպես Աշխարհաժողովի պատվիրակության թեկնածուներ և համապատասխան էլեկտրոնային բազայում հրապարակում է նրանց համառոտ կենսագրականն ու լուսանկարը:

9. Թեկնածուի ընտրությունը կատարվում է ըստ ընտրողի կողմից նրան անձամբ ճանաչելու, վստահելու և իր կամքն արտահայտելու ու իր անունից հանդես գալու լիազորություններ պատվիրակելու կանխավարկածի սկզբունքի: Այդ պատճառով արգելվում է նրա օգտին քարոզչությունը:

10. Աշխարհաժողովն ընտրվում է մեկ տարի ժամկետով:

11. Քվեարկությունը կատարվում է էլեկտրոնային եղանակով, այդ թվում՝ ընտրատեղամասերում: Քվեարկությունը տեղի է ունենում մայիս ամսվա երրորդ շաբաթվա երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ հնգօրյա ժամանակահատվածում:

12. Քվեարկությամբ 100 և ավելի ձայն ստացած թեկնածուները դառնում են աշխարհաժողովի պատվիրակներ:

Հատկապես համակարգի կայացման փուլում տարատեսակ պրոբլեմներից, առաջին հերթին՝ իշխանության յուրացման հավանականությունից խուսափելու համար հարկ կլինի դիտարկել թեկնածուներին տրվող ձայների քանակի ողջամիտ վերին շեմ սահմանելու հարցը, որպեսզի Աշխարհաժողովը չվերածվի փոքրաթիվ հայտնի մարդկանց ժողովի:

Միևնույն ժամանակ՝ հարկ կլինի քրեական խիստ պատասխանատվությամբ պաշտպանել համակարգը կազմակերպված կերպով թեկնածուներ առաջադրելու և յուրացնելու դեպքերից:

[19] Կենտրոնական ընտրական հանձնաժողովը և տարածքային ու տեղամասային հանձնաժողովները կազմավորվում են ոչ կուսակցական սկզբունքով: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները հանրային պաշտոնյաներ են, իսկ մյուս հանձնաժողովի անդամները՝ կուսակցությունների հետ չառնչվող հասարակական կազմակերպությունների և նախաձեռնությունների ներկայացուցիչներ ու անհատ կամավորներ: Վերջիններս վճարվում են իրենց կատարած աշխատանքի համար:

13. Աշխարհաժողովի հինգ ամենաավագ տարիքի պատվիրակներից կազմվում է Աշխարհաժողովի քարտուղարություն[20]: Քարտուղարությունն իր կազմից ընտրում է համակարգող և տեղակալ: Քարտուղարության ենթակայությամբ գործում է աշխատակազմ: Քարտուղարություն ապահովում է Աշխարհաժողովի գործունեությունը, այդ թվում՝ նրա կապը Պետական խորհրդի հետ:

14. Աշխարհաժողովն ընտրում է Պետական խորհուրդ:

15. Աշխարհաժողովը հաստատում է Պետական խորհրդի որոշումները.

1) հանրաքվե նշանակելու, խաղաղություն հաստատելու, սահմանադրական օրենքներ ընդունելու, միջպետական միջազգային պայմանագրեր վավերացնելու, կասեցնելու կամ չեղյալ հայտարարելու, Ասպետության[21] ծրագրին հավանություն տալու, պետական բյուջե ընդունելու,

---

[20] Որևէ մեկի հրաժարվելու պարագայում Քարտուղարության անդամ է դառնում ըստ ցուցակի հաջորդ ավագ տարիքի պատվիրակը:

[21] Գործադիրին «կառավարություն» անվանելը բովանդակային-հասկացութենական սխալ է, քանի որ իրականում կառավարությունը օրենսդիրի, գործադիրի և դատականի ամբողջությունն է: Հայերենում այն փոխառվել է ռուսական իրականության ''правительство'' – ից, որը միապետ-ինքնիշխանի կամքի գործադրումն ապահովող կառավարման գործիք է: Առաջարկում ենք օգտագործել «ասպետություն» անվանումը, որն առնված է Հայոց համակարգի «ասպետ» տիտղոսից, իսկ գործառույթը՝ ասպետի գործառույթներից:
Ասպետը, առհասարակ, ձիավոր ազնվականն էր, հեծյալ իշխանավորը:
Հին Հայաստանում ասպետի պաշտոնը զբաղեցնում էր Բագրատունի տոհմի ներկայացուցիչը: «Ասպետն էր իշխան և հրամանատար, ամենայն թագավորութեանն հրամանաց գլուխ, ամբողջ երկրի իշխան, հրամաններ արձակող, Թագավորի մերձավորագույն խորհրդական և նրա անունից երկիրը կառավարող»:
Ցավոք սրտի, մինչ օրս Խորենացու և այլ պատմիչների տեքստերն առավելապես ենթարկվել են հիմնականում լեզվական, այլ ոչ պատմական-համակարգային վերլուծության, ինչի պատճառով ստացվել է կիսատ և սխալ արդյունք: Ասպետը հաճախ ներկայացվել է որպես հեծելազորի պետ, մինչդեռ հեծելազորը զորքի մաս էր և գտնվում էր սպարապետի ենթակայության տակ:
Գաղտնիք չէ, որ Հին աշխարհի ազգերը, հատկապես՝ նույն արմատից ծնված մշակույթ կրողները, ունեցել են նմանատիպ կառավարման մշակույթ և համակարգեր:
Այս տեսակետից դառնալով Հին Հռոմին տեսնում ենք, որ այստեղ վերնախավը բաղկացած էր սենատորների և հեծյալների դասերից:
Սենատորների դասը համապատասխանում է մեր նախարարաց, տանուտիրական, ոստան դասին, որը կայացնում էր ռազմավարական որոշումներ, իսկ հեծյալները մեր ազնվական ազատ դասն են, որոնց միջոցով իրականացվում էին այդ որոշումները: Այսինքն՝ ասպետները այսօրվա պարագայում պետական պաշտոնյաներն են՝ բյուրոկրատիան:
Իսկ ասպետը նրանց բոլորի կառավարիչն է, գլուխը, որ նրանց միջոցով կառավարում է երկիրը: Հռոմեական կոնսուլները և հելենական աշխարհում ստրատեգները համապատասխանում են մեր ասպետին (ի դեպ, ավանդույթի համաձայն Աքիլլեսին, ամենայն հավանականությամբ՝ նրա տիտղոսը և կարգավիճակը նկատի ունենալով, Հելլադայի ցեղերից մեկն իր լեզվով անվանել է «Ասպետ». – ''Предание гласит, что после потопа первым царем молоссов и феспротов был Фаэтонт, один из тех, кто пришел в Эпир вместе с Пеласгом, но есть и другой рассказ: среди малоссов поселились Девкалион и Пирра, основавшие святилище в Додоне. Много спустя Неоптолем, сын Ахилла, явился сюда во главе своего племени, захватил страну и положил начало царской династии Пирридов, носивших это имя потому, что и сам Неоптолем прозывался в детстве Пирром, и одного из своих сыновей, рожденных от Ланассы, дочери Клеодема, сына Гилла, назвал Пирром. С этих пор там чтут наравне с богами и Ахилла, называя его на местном наречии Аспетом''. Плутарх. Избранные жизнеописания в двух томах, том первый, Москва, Издательство ''Правда''-1987, Пирр и Гай Марий, стр. 471-472'':):
Բնականաբար՝ այն ժամանակ կառավարման համակարգը ռազմականացված էր և բյուրոկրատիան հիմնականում զինվորական էր: Այսօր այդպես չէ, բայց էությունը նույնն է:

պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը հաստատելու, համազգային նշանակության ռազմավարական փաստաթղթեր հաստատելու վերաբերյալ,

2) Ասպետության անդամներին, Գերագույն դատարանի[22] անդամներին, Բարձրագույն դատական խորհրդի անդամներին, Գլխավոր դատախազին, Մարդու իրավունքների պաշտպանին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին, Կենտրոնական բանկի նախագահին, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահին, Հաշվեքննիչ և աուդիտորական պալատի[23] նախագահին, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին և Քննչական կոմիտեի նախագահին ընտրելու, ինչպես նաև նրանց զբաղեցրած պաշտոններից ազատելու վերաբերյալ:

15. Պետական խորհրդի լիազորությունների կատարման անհնարինության դեպքում Պետական խորհրդի նախագահի կամ նրա պարտականությունները կատարող անձի, իսկ եթե հնարավոր չէ՝ ապա Աշխարհաժողովի Քարտուղարության առաջարկությամբ արձակում է Պետական խորհուրդը և նշանակում է Պետական խորհրդի արտահերթ ընտրություններ:

16. Աշխարհաժողովը քվեարկում է էլեկտրոնային եղանակով: Աշխարհաժողովի որոշումներն իրավազոր են, եթե դրանց օգտին քվեարկել է Աշխարհաժողովի պատվիրակների ընդհանուր թվի կեսից ավելին:

17. Աշխարհաժողովը քվեարկում և որոշում է ընդունում Պետական խորհրդի ընդունած որոշումների հրապարակումից հետո՝ երեք օրվա ընթացքում: Երրորդ աշխատանքային օրվա ավարտին քվեարկությունը փակվում է:

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

1. Պետական խորհուրդը միջանկյալ ներկայացուցչական մարմին է:

2. Պետական խորհուրդն ընտրվում է հինգ տարի ժամկետով:

3. Պետական խորհուրդը բաղկացած է 61 պատգամավորից[24]:

4. Պետական խորհրդի ընտրական շեմ չի սահմանվում:

5. Պետական խորհուրդը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունում և Աշխարհաժողովի հաստատմանն է ներկայացնում Աշխարհաժողովի իրավասությանը ենթակա հարցերի վերաբերյալ որոշումներ:

Փաստորեն՝ ասպետն այսօրվա վարչապետն է:

Քանի որ ներկայումս կառավարումն իրականացվում է ինստիտուտների միջոցով, ուստի Ասպետությունը պատկերացնում ենք որպես գործադիր բնագավառի ինստիտուցիոնալ կառավարման մարմին: Այսինքն՝ անցյալի ասպետի գործառույթներն այսօր առաջարկում ենք իրականացնել «Ասպետություն» ինստիտուտի միջոցով:

[22] Գերագույն դատարանն ունի նաև Սահմանադրական արդարադատության իրականացման լիազորություններ:

[23] Ներկայիս Հաշվեքննիչ պալատի լիազորություններն ընդլայնվում են:

[24] Պետական խորհրդի պատգամավորների փոքր քանակը բխում է 20/80 օպտիմումի բնական սկզբունքից: Նույնիսկ մեծ երկրներում քաղաքական դաշտի երևելի ներկայացուցիչները մի քանի տասնյակ են կազմում: Մնացածը քանակ են լրացնում՝ նոսրացնելով խորհրդարանի որակը:

6. Պետական խորհուրդը պատգամավորների ձայների պարզ մեծամասնությամբ ընդունում է օրենքներ, նորմատիվ որոշումներ[25], իր իրավասությունից բխող այլ որոշումներ, ինչպես նաև հայտարարություններ և ուղերձներ:

7. Պետական խորհուրդն ընդունում է Ասպետության հրաժարականը:

8. Պետական խորհուրդն Ասպետության ծրագրին հավանություն չտալու, Ասպետությանն անվստահություն հայտնելու կամ Ասպետության հրաժարականի դեպքերում մեկ շաբաթվա ընթացքում ընտրում է նոր Ասպետություն:

9. Պետական խորհուրդը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընտրում է Պետական խորհրդի նախագահին և Պետական խորհրդի նախագահի տեղակալին[26]:

10. Պետական խորհուրդը ձայների պարզ մեծամասնությամբ ընտրում և զբաղեցրած պաշտոնից ազատում է մասնագիտական դատարանների դատավորներին, Գլխավոր դատախազի տեղակալին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներին, Կենտրոնական բանկի խորհրդի անդամներին, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներին, Հաշվեքննիչ և աուդիտորական պալատի անդամներին, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալին, Քննչական կոմիտեի նախագահի տեղակալին:

11. Պետական խորհուրդն Ասպետության առաջարկությամբ որոշում է կայացնում.

1) օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում դիվանագիտական ներկայացուցիչների թեկնածություններին համաձայնություն տալու վերաբերյալ,

2) Զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի նշանակման վերաբերյալ,[27]

3) շնորհում է բարձրագույն զինվորական կոչումներ և բարձրագույն դիվանագիտական ու դասային աստիճաններ:

12. Պետական խորհրդի ընտրությանը ենթակա պաշտոնների համար թեկնածություններ առաջադրելու և զբաղեցրած պաշտոնից ազատելու վերաբերյալ առաջարկությունները ներկայացնում են Պետական խորհրդի խմբակցությունները կամ պատգամավորների առնվազն մեկ յոթերորդը:

---

[25] Առկա համակարգերում ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր, որոշ երկրներում՝ նույնիսկ օրենքի ուժ ունեցող նորմատիվ ակտեր, ընդունելու վերաբերյալ գործադիրին վերապահվող լիազորությունը իշխանության յուրացում է: Գործադիրը չունի նորմատիվ ակտ ընդունելու մանդատ:
Առաջարկվող համակարգում Պետական խորհուրդը նորմատիվ որոշումներ է ընդունում գործադիրի՝ Ասպետության, նախաձեռնությամբ:

[26] Ընդհանրապես՝ ամենուրեք կիրառվում է մեկ տեղակալի սկզբունքը: Տեղակալը տվյալ համակարգի ներքին գործառույթների կառավարիչն է, ինչպես նաև առաջինի բացակայության դեպքում փոխարինում է նրան:

[27] Ասպետությունն անհրաժեշտության դեպքում կարող է ժամանակավորապես՝ մինչ Պետական խորհրդի որոշումը, նշանակել բարձրագույն հրամանատարական կազմի ներկայացուցիչներին:

Մասնագիտական դատարանների դատավորի թեկնածություն առաջադրելու և նրան զբաղեցրած պաշտոնից ազատելու վերաբերյալ որոշումները կայացվում են Բարձրագույն դատական խորհրդի եզրակացության հիման վրա:

Ասպետության անդամին զբաղեցրած պաշտոնից ազատելու վերաբերյալ որոշում կարող է կայացվել նաև Ասպետության նախաձեռնությամբ:

13. Պետական խորհուրդը ձևավորում է հինգ մշտական հանձնաժողով՝

1) Կրթության, գիտության, մշակույթի և սոցիալական հարցերի,

2) Պետաիրավական և ներքին գործերի,

3) Անվտանգության, պաշտպանության և արտակարգ իրավիճակների,

4) Արտաքին գործերի և Հայկական աշխարհի հարցերի,

5) Տնտեսության և ֆինանսաբյուջետային հարցերի:

ԱՍՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1. Ասպետությունը իշխանության իրականացման կոլեգիալ գործադիր մարմին է:

2. Ասպետությունը կազմված է հետևալ հինգ անդամից.

1) Վանապետ,

2) Դեսպանապետ,

3) Սպարապետ,

4) Մարդպետ,

5) Հազարապետ:

3. Ասպետությունը կազմում և Պետական խորհրդին է ներկայացնում Ասպետության ծրագրի, պետական բյուջեի, պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության, ռազմավարական փաստաթղթերի, օրենքների և Պետական խորհրդի նորմատիվ որոշումների նախագծերը[28], ինչպես նաև Պետական խորհրդին առաջադրում է Ասպետության վստահության հարցը:

4. Ասպետության անդամները ռոտացիոն կարգով մեկական տարի ժամկետով զբաղեցնում են Ասպետի պաշտոնը: Ասպետը հրավիրում և վարում է Ասպետության նիստերը, համադրում է նրա անդամների աշխատանքը, ներկայացնում է պետությունը և Ասպետությունը և նրանց անունից ստորագրում է փաստաթղթեր, ինչպես նաև ընդունում է օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերը և հետկանչագրերը:

[28] Նախագծերը կազմվում են Ասպետության ոլորտային մարմինների համակարգերում գործող հետազոտական, կրթական և փորձաքննական գիտական հաստատությունների ներգրավմամբ, այնուհետև Ասպետության նիստում ընդունվում են այդ հաստատությունների հեղինակավոր ներկայացուցիչներից կազմված միջգերատեսչական խորհրդի (պայմանականորեն՝ «Իմաստունների խորհուրդ») խորհրդատվական եզրակացության հաշվառմամբ:

Ասպետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Ասպետության այն անդամը, որը ռոտացիոն կարգով պետք է նրան փոխարինի Ասպետի պաշտոնում:

5. Պատերազմի ժամանակ Ասպետի պաշտոնը զբաղեցնում է Սպարապետը: Սպարապետը թե խաղաղ, թե պատերազմական ժամանակներում Զինված ուժերի գլխավոր հրամանատարն է:

Սպարապետը նշանակվում է բարձրագույն հրամանատարական կազմի ցուցակից: Սպարապետը պետության բարձրագույն զինվորական պաշտոնյան է:

6. Ասպետությունն ունի աշխատակազմ, որի ղեկավարն առանց ձայնի իրավունքի մասնակցում է Ասպետության նիստերին:

Անվտանգային և պաշտպանական հարցերի վերաբերյալ քննարկումներին Զինված ուժերի գլխավոր շտաբի պետը մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով[29]:

7. Ասպետության անդամներն ընտրվում են պաշտոնին ձեռնհաս լինելու սկզբունքով[30]: Կուսակցականները մինչ ընտրությունները սառեցնում են իրենց կուսակցական պատկանելությունը և հանդես չեն գալիս կուսակցության անունից:

8. Ասպետությունը նշանակում է Ասպետության անդամների տեղակալներին և մարզպետներին:

9. Ասպետության որոշումները, որպես կանոն, ընդունվում են կոնսենսուս մինուս մեկ սկզբունքով:

Ասպետության ծրագրի, պետական բյուջեի, պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության, ռազմավարական փաստաթղթերի, օրենքների և Պետական խորհրդի նորմատիվ որոշումների նախագծերի, ինչպես նաև Ասպետության վստահության հարց դնելու վերաբերյալ որոշումներն ընդունվում են կոնսենսուսով:

10. Ասպետությունը, ի թիվս իր հիմնական լիազորությունների, իրականացնում է նաև հետևյալ լիազորությունները.

---

[29] Անվտանգության խորհուրդ չկա, ենթադրյալ հարցերի վերաբերյալ որոշումներ են կայացվում նշված կազմով հավաքվող Ասպետության նիստերում:

[30] Ասպետության (գործադիրի) անդամներին ոչ թե քաղաքական-կուսակցական, այլ պաշտոնին ձեռնհաս լինելու սկզբունքով ընտրելը հիմնական գործոնն է, որ ապահովելու է պատեհապաշտ-կարիերիստների մուտքը կուսակցություններ և դրանց միջոցով՝ քաղաքականություն:
Պետական խորհուրդը (խորհրդարանը) պետք է դառնա միակ վայրը, որտեղ պետք է բախվեն ու մրցեն քաղաքական գաղափարներն ու ծրագրերը:
Գործադիրի ապակուսակցականությունն իմաստազրկում և, այդպիսով, էապես չեզոքացնում է իշխանության յուրացման ու կոռուպցիայի հակում ունեցողների ձգտումը դեպի քաղաքականություն, ինչպես նաև գործադիրի անդամների բացասական, եսակենտրոն մղումները՝ աշխատելու ոչ թե հանուն ազգային շահի, այլ հաջորդ ընտրություններում ամեն գնով վերընտրվելու:
Բացի այդ, պաշտոնին ձեռնհաս լինելու սկզբունքով ձևավորվող ու գործառող գործադիրի անդամ լինելու համար հարկ կլինի ձեռք բերել այնպիսի բարձր մասնագիտական ու կառավարչական գիտելիքներ, փորձ ու հմտություններ, որոնք, որպես կանոն, ինքնին էապես երաշխավորում են նաև բարձր էթիկա:

1) լուծում է քաղաքացիություն շնորհելու և քաղաքացիությունը դադարեցնելու հարցերը,

2) ներում է շնորհում դատապարտյալներին,

3) պարգևատրում է ՀՀ շքանշաններով և մեդալներով,

4) Պետական խորհրդի համաձայնությամբ նշանակում է օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում դիվանագիտական ներկայացուցիչներին,

5) հետ է կանչում օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում դիվանագիտական ներկայացուցիչներին:

Ասպետության կառուցվածք

Ասպետության մարմինների կառուցվածքում, որպես կանոն, գործում են գործակալություններ, տեսչություններ և ռազմավարական ծրագրերի գրասենյակներ: Գործակալությունների և տեսչությունների կազմում կարող են գործել ծառայություններ: Սպարապետությունն ունի կառուցվածքային առանձնահատկություններ:

Բացի Սպարապետությունից, Ասպետության մյուս մարմիններին առընթեր՝ որպես առանձին գործակալություններ, գործում են ոլորտային մաղխազություններ[31]: Պաշտպանական ոլորտի մաղխազությունը գործում է Զինված ուժերի Գլխավոր շտաբի կազմում՝ որպես ծառայություն:

Վանապետություն[32]

1) Աշխատակազմ

2) Գործակալություններ

- Ժողովրդագրության, որի մեջ.
- ✓ *Ծնելիության և մայրության ու մանկության հարցերի ծառայություն*
- ✓ *Վերաբնակեցման և տարաբնակեցման հարցերի ծառայություն*
- Կրթության
- Գիտության և տեխնոլոգիաների
- Մշակույթի
- Բնապահպանության
- Առողջապահության
- Սոցիալական ապահովության
- Աշխատանքի
- Սպորտի

[31] Անվանումն արտածված է Հայոց համակարգի «մաղխազ» տիտղոսից, գործառույթները սահմանված են ըստ մաղխազին բնորոշ՝ ինքնիշխանի անվտանգության ապահովմանբ գործառույթների ընդլայնված ու արդիական պատկերացումների:

[32] Անվանումն արտածված է և գործառույթները սահմանված են ըստ կյանքի ծագման և մարդու ու հանրության հոգևոր և նյութական վերարտադրության «ակունք և վայր» իմաստն արտահայտող «վան» բառի իմաստի:

- Երիտասարդության հարցերի

2) Առընթեր գործակալություն

- Ինքնության հարցերի մաղխազության

3) Ռազմավարական ծրագրերի գրասենյակ

- Հայրենադարձության
- .....

Դեսպանապետություն[33]

1) Աշխատակազմ

2) Գործակալություններ

- Արտաքին գործերի
- Հայկական աշխարհի հարցերի

3) Առընթեր գործակալություն

- Արտաքին մաղխազության

4) Ռազմավարական ծրագրերի գրասենյակ

- .....

Սպարապետություն[34]

1) Աշխատակազմ

2) Զինված ուժերի գլխավոր շտաբ

✓ Պաշտպանական մաղխազություն

3) Գործակալություն

- Պաշտպանական արդյունաբերության
- Արտակարգ իրավիճակների, որի մեջ՝

✓ *Փրկարար ծառայություն*[35]

[33] Անվանումն արտածված է «դեսպան» բառից, գործառույթները սահմանված են դեսպանին բնորոշ գործառույթների ընդլայնված պատկերացումից:

[34] Անվանումն առնված է Հայոց համակարգի «սպարապետ» տիտղոսից, գործառույթները սահմանված են ըստ սպարապետին բնորոշ պաշտպանության իրականացման գործառույթների ընդլայնված ու արդիական պատկերացման:

[35] Փրկարար գործառույթը պատերազմական կամ խաղաղ ժամանակների բոլոր բնույթների արտակարգ իրավիճակներում պետք է ունենա անգամ ամենամասշտաբային վնասներից առաջացած մարտահրավերներն հաղթահարելու բավարար կարողություն: Հատկապես փոքր երկրներում նման կարողություն ունի միայն պաշտպանական համակարգը՝ իր տեխնիկական, մարդկային և մոբիլիզացիոն-ռեզերվային հնարավորություններով: Այդ պատճառով այս գործառույթը պետք է վերապահվի պաշտպանական համակարգին:
Ըստ այդմ՝ Զինված ուժերի Գլխավոր շտաբը բազային փրկարարական պատրաստությունը որպես բաղադրիչ ներառում է Զինված ուժերի անձնակազմի ու ռեզերվի մարտական պատրաստության գործընթացում, իսկ ներկայիս բժշկական ծառայությունը ներառվում է փրկարար ծառայության մեջ:

Մարդպետություն[36]

1) Աշխատակազմ

2) Գործակալություններ

- Էկոնոմիկայի
- Ֆինանսների, որի մեջ՝

✓ *Գանձապետական ծառայություն*

- Երկրագործության
- Ենթակառուցվածքների և պահուստի,
- Պետական գույքի և քաղաքաշինության

3) Առընթեր գործակալություն

- Ֆինանսական մաղխազության

4) Ռազմավարական ծրագրերի գրասենյակ

- Միջուկային
- Իրան-Հայաստան երկաթգծի
- Օդատիեզերական համակարգերի և համագործակցության
- .....

[36] Անվանումն առնված է Հայոց համակարգի «մարդպետ» տիտղոսից:

Հին Հայաստանում մարդպետը, բացի կանանոցի կառավարումից, ուներ նաև ուրիշ պաշտոն՝ արքունական կալվածքների վրա հսկողություն, ինչպես երևում է Փավստոսից:

Այսինքն՝ մարդպետն արքունի տնտեսության, ինքնիշխանի կյանքի նյութական սկզբի հոգածուն ու կառավարիչն էր:

Նա կոչվում էր Հայր մարդպետ, քանի որ համարվում էր Արքայի հայրը, քավորը, օրինական ծառայողն ու խոստովանահայրը:

Ըստ այդմ՝ գործառույթները սահմանված են մարդպետին բնորոշ գործառույթների ընդլայնված ու արդիականացված պատկերացմամբ:

Հազարապետություն[37]

1) Աշխատակազմ

2) Գործակալություններ

- Համբարապետության[38]
- Տարածքային կառավարման

3) Առընթեր գործակալություն

- Ներքին մաղխազության (ներառյալ՝ հակահետախուզության)

4) Տեսչություններ

- Կրթության
- Առողջապահության
- Աշխատանքի
- Բնապահպանության և ընդերքի
- Միգրացիայի
- Հարկային
- Մաքսային
- Միջուկային անվտանգության
- Ճարտարապետության և շինարարության (քաղաքաշինության)

---

[37] Անվանումն առնված է Հայոց համակարգի «հազարապետ» տիտղոսից:
Հազարապետի գործառույթների մասին տեղեկությունները ևս, ինչպես ասպետի պարագայում, խիստ նեղ և մասնակի են մեզ հասել:
Հիմնական տեսակետն այն է, որ Հին Հայաստանում հազարապետը արքունի գործերի, տնտեսության կառավարիչն էր, որ Սասանյան շրջանում զբաղվում էր հարկահավաքությամբ և հարկերն ուղարկում էր Պարսկաստան: Կան առանձին կարծիքներ, որ Պարսկաստանում հազարապետն ավելի լայն գործառույթներ ուներ:
Ինչպես Ասպետը հեծյալների, ազնվականության, պետն էր, այնպես էլ հազարապետը գյուղացիների պետն էր: Գյուղացիությունը հիմնական աշխատուժն էր, ուստի հազարապետը վարում էր տնտեսության և գույքային ելումուտի հաշվառման, հարկերի չափերի և ձևերի սահմանման, հարկահավաքության, ինչպես նաև ներքին կարգ ու կանոնի գործերը:
Եթե այսօրվա պատկերացմամբ դիտենք, ապա հազարապետը պատասխանատու էր բնակչության, հողի և այլ գույքի հաշվառման, հարկերի հավաքման, մաքսերի սահմանման ու գանձման, ինչպես նաև պետության ներքին կարգ ու կանոնի՝ ընդհանուր առմամբ՝ մյուս կառավարման մարմինների գործառույթներից դուրս մնացող հազար ու մի բանի հաշվառման և պահպանության համար:
Ըստ այդմ՝ գործառույթները սահմանված են ըստ հազարապետին բնորոշ գործառույթների ընդլայնված ու արդիականացված պատկերացման:

[38] Անվանումն արտածված է «համբար», այսինքն՝ հաշիվ, բառից: Համբար-չարեքային համակարգը շատ հին, հավանաբար՝ Աքեմենյան շրջանից ֆիսկալ նշանակությամբ կիրառվել է օբյեկտների, առաջին հերթին՝ հողի, չափման, գնահատման, հաշվառման, գրանցման ու հարկման համար:
Առաջարկում ենք Համբարապետական գործակալությանը վերապահել ներկայիս բնակչության ռեգիստրի, ընտրողների ռեգիստրի, իրավաբանական անձանց ռեգիստրի, ՔԿԱԳ-ի, նոտարիատի, Կադաստրի և վիճակագրության գործառույթները:

- Տեխնիկական, սեյսմիկ և հրդեհային անվտանգության
- Հասարակական կարգի[39], որի մեջ՝
- ✓ *Անհետաձգելի օգնության (911) ծառայություն*
- Սննդամթերքի անվտանգության
- Շուկայի վերահսկողության
- Իրավական փորձաքննությունների
- Այլ

ԱՅԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

1. Առաջարկվող համակարգը պետք է ունենա կառավարման գործընթացներին իրազեկ լինելու, մասնակցելու և միջամտելու (բացառությամբ պետական գաղտնիքի հետ կապված օրենքով սահմանված հատուկ դեպքերի) հնարավորություններով ժողովրդի վերահսկողության և հետադարձ կապի մեխանիզմներ՝ ի դեմս մեդիայի, հասարակական միավորումների, քաղաքացիների, ինչը պետք է երաշխավորվի և կանոնակարգվի օրենքով:

2. Խորհրդարանի, ինչպես նաև գործադիր և դատական մարմինների կադրերի, այդ թվում՝ պատգամավորների, գործադիրի անդամների և դատավորների, ընտրազատման, նաև՝ ընտրության կամ նշանակման, համար պետական կառավարման համակարգում պետք է ստեղծվի Կադրերի անհատական դասակարգիչ, որտեղ ըստ պաշտոնների կսահմանվեն կադրերի համապատասխանության ցանկեր՝ առաջնահերթության սկզբունքով:

Ցանկերում թեկնածուները պետք է ներառվեն իրավիճակային խաղերի ձևով կազմակերպվող քննությունների հիման վրա:

Դատավորի թեկնածուների պարագայում էական պետք է լինի նաև մարդկային նկարագրի հանգամանքը:

Իրավիճակային խաղերը կազմակերպում և դրանց հիման վրա թեկնածուներին ցանկերում գրանցելու եզրակացությունները տալիս են համապատասխան հետազոտական, կրթական և փորձագիտական հաստատությունների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովները:

Այդ հանձնաժողովները յուրաքանչյուր խաղի կազմակերպման համար կազմվում են համակարգչային պատահական ընտրանքի միջոցով:

3. Ներկայացվող համակարգի տրամաբանությամբ՝ հաշվի առնելով բնորոշ առանձնահատկությունները, ընտրվում և գործառում են համայնքային ժողովները, ավագանիները և համայնքապետությունները:

[39] Ներկայիս ոստիկանությունը կիսվում է: Հասարակական կարգի պահպանումը՝ հիմնականում պարեկության միջոցով (ՁՈՒ ակտիվ ռեզերվի օրինակով ներդնելով պարեկության ակտիվ ռեզերվ և այն կիրառելով հերթապահության ռեժիմով, ինչի պարագայում հաստիքային արհեստավարժ պարեկները կազմում են անձնակազմի փոքր մասը), դառնում է Հազարապետության առանձին տեսչություն, իսկ քրեական ոստիկանության համապատասխան բաղադրիչները հանվում են Ասպետության կառավարման ոլորտից և տրվում են Հակակոռուպցիոն կոմիտեին ու Քննչական կոմիտեին՝ որպես օպերատիվ-հետախուզական բաղադրիչներ:

4. Համայնքները կազմավորվում են ըստ նախկին ՀԽՍՀ վարչական շրջանների (որոշակի անհրաժեշտ վերանայումներով) և Երևան, Կումայրի ու Վանաձոր քաղաքների:

5. Զուգահեռաբար՝ հարկավոր է բեռնաթափել մարզպետարանների գործառույթներն ու լիազորությունները:

6. Վերականգնվող շրջանների պարագայում մարզպետարանի աշխատակազմերը և կառույցները դառնում են ավելորդ:

7. Մարզպետը պետք է ունենա փոքր աշխատակազմ (մինչև 10 հոգի)՝ օպերատիվ կառավարում և Ասպետության հետ կապ ապահովելու համար:

8. Ըստ այդմ՝ պետք է վերանայվեն նաև ֆիսկալ, իրավապահպան և անվտանգային (մաղխազական) մարմինների կառուցվածքները՝ մարզայինից փոխադրելով շրջանայինի և վերացնելով մարզային օղակը:

9. Առաջին ատյանի (համայնքային) դատարանների դատավորներին և համայնքային դատախազներին ընտրում են համայնքային ժողովները:

10. Գերագույն դատարանի, մասնագիտական դատարանների և Բարձրագույն դատական խորհրդի նախագահներին ընտրում են դրանց դատավորները (անդամները):

11. Քննչական մարմինների իրավասությունն ավարտվում է մեղադրանքի առաջադրմամբ: Այնուհետև դատավարությունը տեղի է ունենում դատարանում, որտեղ դատախազները մրցակցային դատավարության սկզբունքով պաշտպանում են մեղադրանքը:

12. Փաստաբանների լիցենիզավորումն իրականացնում է Հազարապետության համակարգում գործող հետազոտական, կրթական և փորձաքննական հաստատությունը: Փաստաբաններն ազատ են՝ ըստ միավորումների մեջ մտնելու ազատության իրավունքի: Նրանք կարող են ստեղծել փաստաբանական միավորումներ, կարող են գործել առանձին, սակայն փաստաբանական էթիկայի հարցերում ենթակա են փաստաբանական համայնքի ընտրած մարմնի որոշումներին:

13. Խիստ ցանկալի է պետության եթե ոչ մայրաքաղաքը, ապա վարչական կենտրոնը տեղափոխել Երևանից՝ թերևս Կոտայքի մարզ կամ Արագածոտնի մարզի՝ Կոտայքին հարակից հատված:

14. Բոլոր պետական մարմինները տեղակայվում են համեստ շինություններում և նրանց նկուղային մասը կառուցվում է որպես այդ մարմինների գործունեության համար անհրաժեշտ բունկերային համակարգ:

15. Առաջարկվող համակարգը շատ արդյունավետ է փոքր՝ պայմանականորեն մինչև 10 միլիոն բնակչություն ունեցող երկրների համար:

16. Միջին՝ պայմանականորեն մինչև 100 միլիոն բնակչություն ունեցող երկրներում այն կարող է կիրառվել երկաստիճան տարբերակով, այսինքն՝ պայմանական 100/1 ընտրությունից հետո ընտրվածները մեկ անգամ ևս կատարում են 100/1 ընտրություն, ինչից հետո երկրորդ շրջափուլով ընտրվածները ձևավորում են Աշխարհաժողով:

17. Մեծ՝ 100 միլիոն և ավելի բնակիչ ունեցող երկրներում պետք է կիրառվի լայն դաշնայնացում (ֆեդերալացում), ինչի շնորհիվ միջին երկրների նման երկու

շրջափուլով ընտրված դաշնային միավորների աշխարհաժողովներն ընտրում են թե դաշնային սուբյեկտի, թե համերկրային խորհրդարաններ: Համերկրային խորհրդարանն ստանձնում է ամբողջ ժողովրդի ներկայացուցչական լիազորությունը:

18. Պետք է նկատի ունենալ, որ շատ մեծաքանակ բնակչությունն օբյեկտիվ բացասական գործոն է ժողովրդավարական կառավարման համար:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԱԶԳԻ ՈՒ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Վարուժան Ավետիսյան

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Պետության իրավաքաղաքական հայեցակարգը պետության անձնագիրն է, որը պարունակում է տվյալ պետությունում պաշտոնապես և/կամ սովորութորեն ընդունված համակարգված հայացքներ և պատկերացումներ հետևյալ հիմնարար հարցերի վերաբերյալ.

1) Պետության տիտղոսակիր ազգի էթնոմշակութային և/կամ քաղաքական ինքնություն և նրա անօտարելի իրավունքներ:

2) Պետության առաջացման (երբեմն՝ նաև շարունակականության) իրավաքաղաքական հիմքեր:

3) Պետության տարածքի պարամետրներ և հարևան պետությունների հետ տարածքային հարցեր:

4) Պետության առաքելություն, արժեսկզբունքային ուղենիշներ և գործառույթներ:

5) Պետության կառավարման ձև, պետական կառուցվածքի ձև և քաղաքական ռեժիմ:

6) Տվյալ պետության և ազգի պատմական, աշխարհաքաղաքական և/կամ այլ առանձնահատկություններով պայմանավորված հարցեր (օրինակ, հայության և Հայաստանի համար՝ Ցեղասպանության, Հայրենիքի վերատիրացման, Սփյուռքի):

ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐ

Պետության իրավաքաղաքական հայեցակարգերը կարող են լինել.

1) **Պատմական-էվոլյուցիոն** (նեղ իմաստով), որի պարագայում տվյալ պետության իրավաքաղաքական հայեցակարգը ձևավորվել է պատմականորեն՝ մինչ արդի միջազգային իրավունքի կայացման փուլը, այնուհետև պաշտոնապես և/կամ սովորութորեն ինտեգրվել է միջազգային իրավունքին: Օրինակ՝ Իրան, Մեծ Բրիտանիա և այլն:

2) **Միջազգային-իրավական**, որի պարագայում տվյալ պետության իրավաքաղաքական հայեցակարգը բխում է միջազգային իրավունքին

համապատասխան՝ որպես ազգային-ազատագրական հաղթական պայքարի և/կամ միջազգային հարաբերությունների գերակա սուբյեկտների (մեծ տերությունների և/կամ նրանց դաշինքների և/կամ իրավասու կազմակերպությունների) կողմից ստեղծման և/կամ ճանաչման միջոցով այդ պետության հիմնադրման հանգամանքից: Օրինակ՝ 1-ին համաշխարհային պատերազմից արդյունքներով ճանաչված և/կամ հիմնադրված մերձավորարևելյան և եվրոպական պետություններ, այդ թվում՝ 1918-20 թթ. Հայաստանի Հանրապետություն:

3) **Օկուպացիոն**, որի պարագայում տվյալ պետության իրավաքաղաքական հայեցակարգը հիմնված է ապօրինի կամ օրինական օկուպացիայի միջոցով օկուպանտին ձեռնտու կերպով տվյալ պետության մինչօկուպացիոն իրավաքաղաքական հայեցակարգի վերանայումների վրա: Օրինակ՝ օկուպացիոն է 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերով և դրանցից բխող/դրանցով պայմանավորված հետագա այլ ապօրինի օկուպացիոն ակտերով 1918-20 թթ. Հայաստանի Հանրապետության իրավաքաղաքական հայեցակարգի վերանայումների հիման վրա ձևավորված ներկայիս՝ այսպես կոչված երրորդ հանրապետության իրավաքաղաքական հայեցակարգը: Օկուպացիոն են նաև 2-րդ համաշխարհային պատերազմի ավարտին օկուպացված Գերմանիայի և Ճապոնիայի՝ օկուպացիայի պայմանների հիման վրա վերանայված իրավաքաղաքական հայեցակարգերը:

Հատկանշական է Թուրքիայի օրինակը: Այն 1-ին համաշխարհային պատերազմի արդյունքներով պետք է հաշտվեր օկուպացիոն իրավաքաղաքական հայեցակարգի հետ, սակայն քեմալական շարժման և բոլշևիկյան Ռուսաստանի մեծածավալ աջակցության շնորհիվ կարողացավ պարտադրել նոր իրավաքաղաքական հայեցակարգ և, բացի Հայկական և Քրդական հարցերի և Հայաստանի Հանրապետության հետ սահմանի խնդիրներից, մնացյալ առումներով հաստատագրեց այն Լոզանի պայմանագրով:

ՀԻՄՔԵՐ

Իրավաքաղաքական հայեցակարգերը ձևավորվում և գործառում են՝ ա) պաշտոնական փաստաթղթերի՝ միջազգային և ներազգային իրավական ակտերի, ծրագրային-ռազմավարական և քաղաքական փաստաթղթերի և/կամ բ) ոչ պաշտոնական՝ դոկտրինալ կամ այլ բնույթի դրույթների՝ տվյալ պետության մեջ հանրային կոնսենսուսի կամ հանրության մեծ մասի շրջանում սովորութորեն ընդունվելու փաստի հիման վրա:

ԱԶԳԻ ՈՒ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐ

Իրավաքաղաքական հայեցակարգը կանխորոշում է տվյալ պետության արտաքին ու ներքին ռազմավարությունը և դրանք սպասարկող վերնախավի որակը:

Ըստ այդմ՝ այն կանխորոշում է տվյալ պետության և ազգի ճակատագիրը:

Օրինակ՝ օկուպացիոն իրավաքաղաքական հայեցակարգը երբեք չի կարող ծնել պասիոնար ռազմավարություն և ընտրախավ, այլ ընդամենը օկուպանտին սպասարկող ռազմավարություն և վերնախավ:

Լինում են դեպքեր, երբ, ժամանակի ընթացքում, որպես կանոն՝ օկուպանտի բարեհաճության կամ նրա ազդեցության կորստի պարագայում, օկուպացիոն

իրավաքաղաքական հայեցակարգը կարող է համապատասխանաբար վերանայվել կամ փոփոխվել:

Ներկայիս Հայաստանի Հանրապետության իրավաքաղաքական հայեցակարգը, ինչպես արդեն նշվեց, օկուպացիոն է:

Ուստի, քանի դեռ գործում է այդ հայեցակարգը, Հայաստանի Հանրապետությունն օբյեկտիվորեն չի կարող կայանալ որպես ինքնիշխան պետություն և ապահովել հայության կենսական շահերի իրացումը:

Ավելին, քանի որ Հայաստանի Հանրապետության պարագայում ռուս-թուրքական օկուպացիոն հայեցակարգը չի ենթադրում ինքնիշխան հայկական պետության առկայություն, այլ Հայաստանը դիտում է որպես Հարավային Կովկասի ենթաբաղադրիչ քվազիպետություն Ռուսաստանի կամ Թուրքիայի ենթակայության ներքո՝ հետագա լուծարման, ձուլման ու ոչնչացման հեռանկարով, ապա դրա մեջ և դրա հիման վրա բոլոր հավանական լուծումները փակուղային են և կործանարար:

1988-ին սկսված Արցախյան շարժման մասնակի հաջողության շնորհիվ հնարավոր եղավ որոշ ժամանակով մասամբ խախտել և վերանայել օկուպացիոն իրավաքաղաքական հայեցակարգը և դրա մեջ ներմուծել Հայկական հարցի լուծման և 1918-20 թթ. Հայաստանի Հանրապետության միջազգային-իրավական հայեցակարգի տարրեր, որոնք հողի վրա ներկայացան Արցախի մի մասի փաստացի ազատագրմամբ, ինչպես նաև հիմնականում անուղղակիորեն և մասնակիորեն ամրագրվեցին պաշտոնական փաստաթղթերում, այդ թվում՝ Անկախության մասին հռչակագրում և նրան հղում տվող Սահմանադրության նախաբանում:

Միևնույն ժամանակ, ընդհանուր առմամբ և հիմնականում մնացինք ռուս-թուրքական համատեղ օկուպացիայի արդյունք ՀԽՍՀ իրավահաջորդության[40] վրա հիմնված օկուպացիոն իրավաքաղաքական հայեցակարգի շրջանակում և առ այսօր պետությունն ու նրա ռազմավարությունը փորձում ենք կայացնել ու գործադրել դրան համապատասխան:

Եվ, ցավալիորեն դեռ կանգ չենք առնում, թեև օբյեկտիվորեն ակնհայտ է, որ ձախողել ենք մեր հասակից վեր թռչելու այդ մանկամիտ փորձը՝ անխուսափելիորեն հանգելով 2020-ի պատերազմական դավադիր պարտությամբ երևակված դավաճանական կառավարմանն ու դրանից հետո ակնառու դարձած պետականության լուծարման ընթացքին:

[40] Իրականում ՀԽՍՀ-ն նախ եղել է որպես ՀՀ տարածքի մի մասի վրա միջազգայնորեն չճանաչված Խորհրդային Ռուսաստանի օկուպացիոն իշխանության կարգած օկուպացիոն վարչակազմի ենթակայությամբ ապօրինի քվազիպետություն, այնուհետև նույն օկուպացիայի շարունակության տրամաբանության մեջ դարձել է ԽՍՀՄ վարչատարածքային միավոր: ՀԽՍՀ-ն չի եղել ո՛չ պետություն, ո՛չ միջազգային իրավունքի սուբյեկտ: Ուստի ՀԽՍՀ-ն չէր կարող լինել 2-րդ հանրապետություն և նոր պետության իրավանախորդ: Ըստ այդմ՝ այսպես կոչված «3-հանրապետություն» արտահայտությունն ինքնին տգիտություն է որպես գիտական կամ նույնիսկ որպես հրապարակախոսական կատեգորիա և աճպարարություն է՝ որպես օկուպացիոն իրավաքաղաքական հայեցակարգի ապօրինի լեգիտիմացման հնարք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԿՈՒՊԱՑԻՈՆ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐ

Անկախության վերականգնումից հետո Հայաստանի օկուպացիոն իրավաքաղաքական հայեցակարգի իրականացումն օբյեկտիվորեն դրսևորվում է հետևյալ փուլերի հաջորդականությամբ.

1) ՀԽՍՀ պլյուս ԼՂԻՄ – (կեղծ միացման փուլ)[41]:

2) ՀԽՍՀ – (զուտ ՀԽՍՀ առանց ԼՂԻՄ փուլ):

3) ՀԽՍՀ մինուս – (օկուպացիոն իրավաքաղաքական հայեցակարգի առաքելության ավարտի՝ հայոց պետականության վերացման փուլ, ինչը ենթադրում է ՀԽՍՀ մինուս հայկական ազգային ինքնություն, ինքնիշխանություն և պետության տիտղոսակիր հայ ազգի մեծամասնություն, պետության լուծարման այլ դրսևորումներ, ինչպես նաև անխուսափելիորեն՝ հավելյալ տարածքային զիջումներ):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԿՈՒՊԱՑԻՈՆ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

---

[41] «Միացում»-ը հայկական խոսույթ է մտել որպես խորհրդային իրողությունների պայմաններում խորհրդային օրենսդրությանը համապատասխան ՀԽՍՀ-ին ԼՂԻՄ-ի միավորման նպատակի ու բովանդակության արտահայտություն: Այն խորհրդային իրողությունների մնացորդ է, որն արհեստականորեն ներմուծվել է այսպես կոչված երրորդ հանրապետության օկուպացիոն իրավաքաղաքական հայեցակարգ:
Արդեն Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնումից հետո խոսել «միացում»-ից, նշանակում է ընդունելով և վերահաստատելով լեգիտիմացնել ռուս-թուրքական 1920-21 թթ. օկուպացիան, մասնատումը և անեքսիան, դրանից հետո՝ արդեն ԽՍՀՄ օրոք, ռուսական օկուպացիայի տակ հայտնված Հայաստանի Հանրապետության տարածքների մասերը, այդ թվում՝ Արցախը, Խորհրդային Ադրբեջանին հանձնելու, ներառյալ՝ Խորհրդային Ադրբեջանին հանձնված հայաբնակ տարածքների մի փոքրիկ մասի վրա միայն ԼՂԻՄ ստեղծելու, ինչպես նաև գերազանցապես հայերով բնակեցված այդ տարածքներից հայերին դուրս մղելու և հայրենազրկելու բոլոր գործողությունները:
Իրականում ամբողջ Արցախը, նաև Գարդմանքն ու Նախիջևանը, որ ռուս-թուրքական օկուպացիայի, մասնատման և անեքսիայի հետևանքով հանձնվեցին Խորհրդային Ադրբեջանին, Հայաստանի Հանրապետության տարածքներ են:
Այդ պատճառով պետք է խոսել Հայաստանի Հանրապետության օկուպացված տարածքներն ազատագրելու, դրանց դեօկուպացիայի միջոցով Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը վերականգնելու մասին:
Այս փուլն անվանել ենք «կեղծ միացման» փուլ, քանի որ ըստ օկուպացիոն իրավաքաղաքական հայեցակարգի՝ միացում իրականում տեղի չունեցավ և չէր կարող տեղի ունենալ: Սկզբում լինելով ժողովրդի իղձի արտահայտություն, «միացում»-ը հետագայում օգտագործվեց և դեռ օգտագործվում է ընդամենը որպես օկուպացիայի մի դրվագի առթիվ (Արցախի ազատագրման) ընդվզած և որոշակի հաջողություն արձանագրած հայ ժողովրդին խաբելու ու մոլորեցնելու միջոց:
Կեղծ «միացում»-ը հնարավոր դարձավ տարածաշրջանում ուժերի հարաբերակցության որոշակի մոդելով պայմանավորված օպերատիվ դադարի հետևանքով, սակայն օրինաչափորեն պետք է փլուզվեր և ըստ օկուպացիոն հայեցակարգի առաքելության ու նպատակների պետք է մեկնարկ տար մեր աչքի առջև տեղի ունեցող հաջորդական իրադարձություններին՝ բերելով մեզ նախ «զուտ ՀԽՍՀ առանց ԼՂԻՄ», ապա նաև՝ «ՀԽՍՀ մինուս» փուլերին:
Ուստի, հարկավոր է ժամ առաջ դուրս գալ ինքնախաբեության կործանարար ընթացքից, դադարեցնել Հայոց պետականության ոչնչացման առաքելություն ունեցող օկուպացիոն հայեցակարգի սպասարկումն ու թշնամիների պլանների սնուցումը և որդեգրել ազգային իրավաքաղաքական հայեցակարգ, այլ ոչ թե շարունակել զուր փորձերը՝ օկուպացիոն հայեցակարգով ենթադրվող նախորդ փուլի նարատիվներին հետամուտ լինելու միջոցով դեպի այդ փուլ վերադառնալու, այն է՝ իբրև թե «միացում»-ը կյանքի կոչելու համար:
Բաց դռնով ներս մտնելու փոխարեն թշնամիներից դուռը ջարդելու «իրավունք» ստանալու կարիք չկա: Ավելին՝ դա հավաստի ձախողման և կործանման ուղի է, քանի որ այդ դեպքում հայտնվում ենք թշնամիների ծուղակում:

1) Պետության տիտղոսակիր ազգի էթնոմշակութային ինքնությունը որոշակի չէ, լղոզված է, փոխարենը ներդրվում է «հայաստանցի» արհեստական և անբովանդակ ինքնությունը, որը ենթադրում է նաև հայությանը քանակով գերազանցող այլազգիների առկայություն և հայության տիտղոսակիր ինքնիշխանության ու ինքնության վերացման հավանականություն: Ընդ որում՝ «հայաստանցի» արհեստական քաղաքական ինքնությունը տարանջատվում, իսկ որոշ հարցերում՝ նույնիսկ հակադրվում է ՀՀ քաղաքացիություն ունեցող արտերկրաբնակ հայության հատվածի՝ ՀՀ քաղաքացիությունից և ամբողջ արտերկրահայության՝ հայ էթնոմշակութային ինքությունից բխող անօտարելի իրավունքներին: Եվ դա ամրագրված է Սահմանադրությամբ և օրենքներով:

Ընդ որում՝ հատուկ դիտավորությամբ անտեսվում է այն հանգամանքը, որ հայության մեծ մասը ՀՀ տարածքում չի բնակվում և/կամ ՀՀ քաղաքացիություն չունի, քանի որ ՀՀ մեծ մասն օկուպացված է, իսկ հայերը՝ հայրենազրկված ու Հայրենիքից հարկադրաբար հեռացած: Ընդհակառակը, պետությունն անուղղակիորեն և ուղղակիորեն լեգիտիմացնում է այս ամենը և Սահմանադրության մակարդակով անջրպետում է ՀՀ քաղաքացի և ոչ քաղաքացի հայերին, ինչպես նաև Հայաստանում բնակվող և չբնակվող ՀՀ քաղաքացիներին՝ խափանելով ՀՀ քաղաքական կյանքին նրանց մասնակցության հնարավորությունը:

Հայ ազգի և Հայաստանի Հանրապետության անօտարելի իրավունքները ոչ միայն չեն հետապնդվում, այլև անտեսվում, նույնիսկ՝ մերժվում և հակադրվում են պետական քաղաքականությանը՝ որպես պետության շահերին վնասող հանգամանքներ: Ասվածն առաջին հերթին վերաբերվում է Ցեղասպանության ճանաչման և հատուցման օրակարգին, Հայրենիքի դեօկուպացմանն ու վերատիրացմանը, Սփյուռքի համար Հայաստանը որպես Հայրենիք կայացնելուն, ինչպես նաև համայն հայությունը որպես «Հայաստան» կենտրոնի շուրջ համախմբված միասնական ու ամբողջական «Հայկական աշխարհ» դիտելուն և կազմավորելուն:

2) Պետությունն առաջացել է 1990 թ. օգոստոսի 23-ի ՀՀ անկախության հռչակագրի և 1991 թ. սեպտեմբերի 21-ի անկախության հանրաքվեի հիման վրա՝ ԽՍՀՄ լուծարման/փլուզման[42] համատեքստում՝ ՀԽՍՀ վարչական տարածքի վրա՝ uti possidetis սկզբունքով:

Անկախության հռչակագրում և հռչակագրին հղում տվող ՀՀ Սահմանադրությամբ 1918-20 թթ. Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները շարունակելու մասին դրույթը չի համարվում որպես 1918-20 թթ. Հայաստանի Հանրապետության շարունակության (կոնտինիուտետ) արձանագրում, այլ ընդամենը որպես հավատարմության հայտարարություն առ ազգային պետականության ավանդույթներ: Ընդ որում՝ անտեսվում է այն հանգամանքը, որ ՀԽՍՀ-ն պետություն չի եղել, այլ ԽՍՀՄ

[42] Հանրային, այդ թվում՝ փորձագիտական, տիրույթում, ԽՍՀՄ-ի մասնատման ձևի վերաբերյալ զուգահեռաբար դիտարկվում է երկու տեսակետ. լուծարում կամ փլուզում: Ձևական-իրավական տեսակետից ԽՍՀՄ-ը լուծարվել է: Մինչդեռ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԽՍՀՄ-ը իրավական առմամբ իրականում Խորհրդային Ռուսաստանի կողմից նախկին Ռուսական կայսրության տարածքի հիմնական մասի վերաօկուպացման արդյունք էր, ընդ որում՝ նաև արդեն ճանաչված պետությունների օկուպացման արդյունք, իսկ ԽՍՀՄ ստեղծման պայմանագիր իրականում չի կնքվել, ապա ճիշտ է այն տեսակետը, որ ԽՍՀՄ-ը փլուզվել է:

վարչատարածքային միավոր, ուստի ՀԽՍՀ-ն չէր կարող լինել ներկայիս Հայաստանի Հանրապետության իրավանախորդ:

3) Պետության տարածքը և սահմանները համընկնում են ԽՍՀՄ փլուզման պահի դրությամբ եղած ՀԽՍՀ վարչական տարածքին ու դրա սահմաններին: Ըստ այդմ՝ պետության տարածքը կազմում է 29.800 քառ. կմ: Հարևանների հետ տարածքային հարցեր չկան, եթե նրանք ճանաչում են տարածքի նշված պարամետրները:

«ՀԽՍՀ պլյուս ԼՂԻՄ» կեղծ միացման և «զուտ ՀԽՍՀ առանց ԼՂԻՄ» փուլերում Արցախի հարցը Ադրբեջանի կազմից Արցախի ինքնորոշման հարց է, այլ ոչ թե Հայկական հարցի բաղկացուցիչ մաս և, առավել ևս, ոչ 1918-20 թթ. Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության վերականգնման հարց: Արցախում բնակվող հայությունը, թեև բաղկացած է ՀՀ քաղաքացիներից, ունի ՀՀ-ում բնակվող հայությունից տարբեր քաղաքական ինքնություն, այսինքն՝ առանձին քաղաքական ազգ է:

Արդեն ներկայումս իրականացվող «ՀԽՍՀ մինուս» փուլում Արցախի վերջին կտորի ադրբեջանական զավթումից և արցախցիների բռնագաղթից հետո հայտարարվեց, որ Արցախի հարց չկա, իսկ արցախցիները ՀՀ քաղաքացիներ չեն և եթե ցանկանում են, կարող են ՀՀ քաղաքացիություն ստանալ:

4) Պետության իրական առաքելությունը օկուպացիայի ապահովումն է, ինչն առաջին հերթին դրսևորվում է 1920-21 թթ. ռուս-թուրքական օկուպացիայի արդյունքներով ձևավորված տարածաշրջանային ռուս-թուրքական ճարտարապետության պահպանության և հայկական գործոնի կայացումը բացառելու գերակայություններով:

Ի կատարումն այդ առաքելության՝ մինչ 2020-ի պատերազմը («ՀԽՍՀ պլյուս ԼՂԻՄ» կեղծ միացման փուլ) ձևականորեն ու կեղծաբար հռչակված Արցախի անվտանգության երաշխավորի պարտավորությունը պատերազմից հետո զրոյացվեց և մինչ 2021 թ. հունիսյան արտահերթ ընտրությունների ժամանակվա «զուտ ՀԽՍՀ առանց ԼՂԻՄ» փուլում վերածվեց այդ պարտավորությունը Կոսովոյի տարբերակով «անջատում հանուն փրկության» սկզբունքով ու հեռանկարով միջազգային հանրությանը պատվիրակելու խաբեական թեզով, իսկ արդեն ընտրություններից հետո իրականացվող վերջին՝ «ՀԽՍՀ մինուս» կամ ավելի պարզ ասած՝ պետականության լուծարման, փուլում Արցախը ճանաչվեց որպես Ադրբեջանի մաս:

«Զուտ ՀԽՍՀ առանց ԼՂԻՄ» փուլում Արցախին դեռևս ցուցաբերվում էր նվազագույն ֆինանսատնտեսական, ինչպես նաև նվազագույն և, որպես կանոն՝ ձևական-իմիտացիոն, բնույթի միջազգային-իրավական աջակցություն: Սակայն դա ևս մինչև հետագա զրոյացում միտմամբ օբյեկտիվորեն նվազեց և Արցախի վերջնական զավթումից ու հայաթափումից հետո՝ արդեն «ՀԽՍՀ մինուս» ներկայիս փուլում, վերացավ:

Զուգահեռաբար՝ մեկնարկել է Թուրքիայի ուղղությամբ օկուպացիոն հայեցակարգի միջազգային-իրավական լեգիտիմացման գործընթաց և դրանից բխող մի շարունակություն, ինչը ենթադրում է Թուրքիայի հետ շփման գիծը որպես միջպետական սահման ճանաչելու, Ցեղասպանության ճանաչման և հատուցման օրակարգից հրաժարվելու, Հայաստանը թուրք-ադրբեջանական ազդեցության

տիրույթում «ՀԽՍՀ մինուս» տարածքի վրա որպես հայ-ադրբեջանական մեռնող քվազիպետության վերածելու հաջորդական քայլեր:

Ըստ այդմ՝ պետության արժեսկզբունքային ուղենիշները, որ նախկինում կեղծմամբ ներկայացվում էին համազգային իղձերի, ազգային-պատմամշակութային հիշողության և արքետիպերի համատեքստում, ներկայումս մերկացել են և ի ցույց են դրվում դրանք բացեիբաց մերժելու և հայոց պետականության վերացման ու հայկական գործոնի զրոյացման օկուպացիոն վերջնանպատակին ծառայեցվող՝ ըստ էության որպես ««ՀԽՍՀ մինուս» տարածքում բնակվող հայաստանցի նոր ազգ» քաղաքական ինքնությամբ վերակազմավորվելու և ապրելու համատեքստում:

Պետության գործառույթները ծառայում են այս հակապետական առաքելությանը և դրանից բխող արժեսկզբունքային ուղենիշներին:

Որպես հետևանք՝ պետությունը կայացել է որպես հայ ինքնության և հայոց պետականության դեմ գործող թշնամական համակարգ, որի գործունեության վերջնարդյունքը պետք է լինի այս երկու հիմնարժեքների վերացումը:

5) Պետությունը կառուցվածքի ձևով ունիտար է, ինչը պատմական իրողություններից բխող փաստ է:

Պետությունը կառավարման ձևով հռչակված է որպես հանրապետություն, մինչդեռ իրական բովանդակությամբ այն այսպես կոչված երրորդ հանրապետության օկուպացիոն իրավաքաղաքական հայեցակարգի սպասարկման համար ստեղծված կիսագաղութային ճամբարապետություն է:

Քաղաքական ռեժիմն իրականում քողարկված-փափուկ ամբողջատիրություն է, որն ապահովում է հակահայ և հակապետական օկուպացիոն իրավաքաղաքական հայեցակարգից բխող գաղափարաբանության վրա հիմնված հակահայ և հակապետական պետության առաքելության, արժեսկզբունքային ուղենիշների և գործառույթների իրականացումը:

Ասվածի ապացույցներից են Հայաստանի տարածքի, ազգային ինքության, արքետիպերի, Հայրենիքի և պետության հակադրման, «խաղաղության» օրակարգի, տարածաշրջանայնացման, պետական խորհրդանիշների վերանայման, Ցեղասպանության ուրացման և բոլոր մյուս հայեցակարգային թեզերը, որոնք պետությունը զավթած և նրա անունից հանդես եկող սպասարկու ռեժիմն այսպես կոչված երրորդ հանրապետության օկուպացիոն իրավաքաղաքական հայեցակարգի իրականացման ներկայիս վերջին փուլում («ՀԽՍՀ մինուս», կամ, որ նույնն է՝ մի նոր Բաթումի պայմանագրով Հայաստանը Թուրքիայի վիլայեթ դարձնելու) մեթոդաբար դնում է շրջանառության մեջ և ձգտում է կյանքի կոչել:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Բոլոր փորձերն ու ճիգերը՝ ուղղված օկուպացիոն իրավաքաղաքական հայեցակարգի հիման վրա և դրա շրջանակներում աղետը կասեցնելուն և պատմության անիվը շուռ տալուն, այդ թվում՝ Արցախը վերաազատագրելուն և Հայաստանի Հանրապետությանը միացնելուն, դատապարտված են ձախողման:

Անհրաժեշտ է ազգային իրավաքաղաքական հայեցակարգ, ըստ դրա՝ ռազմավարություն և ընտրախավ և, ըստ այդմ՝ ժողովրդի ազգայնացում, համախմբում ու նրա անսպառ ուժի գործադրում:

Ըստ այդմ՝ պետք է դադարեցնել օկուպացիոն իրավաքաղաքական հայեցակարգի վերարտադրությունն ու սնուցումը, ինչի դրսևորումներից են այն տեսակետները, թե ներկայիս Հայաստանի Հանրապետությունը հիմնադրվել է 1990-91 թթ., թե Արցախն ունի ինքնորոշման իրավունք և ըստ այդմ անկախացել է, մնացել է միայն այդ անկախությունը ճանաչել:

Կամ թե՝ հայ ժողովուրդն ինքնորոշվել է 1991 թ. սեպտեմբերի 21-ի հանրաքվեով:

Այդ հանրաքվեն, Արցախում 1991 թ. դեկտեմբերի 10-ին անցկացված հանրաքվեն, ինչպես նաև դրանց հետ կապված ակտերն ու գործողություններն ընդամենը պետք է դիտել որպես օտար տիրապետությունից ազատ ապրելու կամաարտահայտության դրսևորումներ:

Որևէ այլ առմամբ դրանք ազգային ինքնախայտառակության ցուցանիշներ են: Ուստի դրանք պետք է մոռացության տալ որևէ այլ առմամբ, առաջին հերթին՝ որպես պետության հիմնադրման նպատակով ազգային ինքնորոշման ակտեր:

Օկուպացված պետություն լինելով՝ որպես գաղութային տարածք uti possidetis սկզբունքով անկախանալու թեզն առաջ տանելն ազգային պետականությունից և իրավաքաղաքական ժառանգությունից կամովին հրաժարվելու ուղիղ ճանապարհ է:

Այդպես անկախացել են միջինասիական հանրապետությունները, բայց ոչ մենք:

Եթե բալթյան հանրապետությունները Մոլոտով-Ռիբենտրոպ պակտի հետևանքով օկուպացվեցին, ապա մենք՝ Լենին-Քեմալ պակտի:

Եվ, ինչպես նրանք վերաանկախացան Մոլոտով-Ռիբենտրոպ պակտի դատապարտմամբ՝ դրա հետևանքների վերացման համատեքստում, այնպես էլ մենք պետք է ամրագրենք մեր անկախության վերականգնումը՝ Լենին-Քեմալ պակտի դատապարտման և դրա հետևանքների վերացման համատեքստում:

Ստեղծված իրավիճակում, հաշվի առնելով նաև մեր՝ էապես թուլացած լինելու պարագան և հատկապես այդ պատճառով արտաքին լծակներին ևս դիմելու անհրաժեշտությունը, մենք պետք է որդեգրենք պատմականի անհրաժեշտ տարրերով միջազգային-իրավական իրավաքաղաքական հայեցակարգ, որը պետք է բխի ներկայիս Հայաստանի Հանրապետության՝ որպես 1918-20 թթ. Հայաստանի Հանրապետության շարունակության (կոնտինիուտետ) հայեցադրույթից:

Ըստ մեկ և միակ Հայաստանի Հանրապետության իրավաքաղաքական հայեցակարգի.

1) Պետության տիտղոսակիր ազգը հայ ազգն է՝ իր բազմահազարամյա յուրատիպ էթնոմշակութային ինքնությամբ: Հայաստանում ապրում են և կարող են ապրել նաև այլազգիներ՝ ՀՀ քաղաքացու կամ ոչ քաղաքացու կարգավիճակով: Բոլոր դեպքերում՝ հայությունը պետք է մեծամասնություն կազմի և որոշիչ ձայն ունենա իր և իր պետության ճակատագրական հարցերում:

Հայության և Հայաստանի անօտարելի իրավունքները, առաջին հերթին՝ յուրային ինքնությունը պահպանելու և զարգացնելու, Ցեղասպանության ճանաչման, հատուցման, Հայրենիքի վերատիրացման, ներառյալ՝ ՀՀ դեռևս օկուպացված տարածքի դեօկուպացման, Հայաստանը հայության համար համախմբող կենտրոն և միասնական Հայրենիք դարձնելու, այդ նպատակով՝ մեծ հայրենադարձության և պետության կյանքում հայության առավելագույն մասնակցության ապահովման առումներով գերակա են:

2) Հայաստանի Հանրապետությունը հիմնադրվել է 1918 թ. մայիսի 28-ին և միջազգայնորեն ճանաչվել է 1920 թ. հունվար-ապրիլ ամիսների ընթացքում: Չկա և չի կարող լինել երրորդ հանրապետություն: Նաև՝ քանի որ չի եղել և չէր կարող լինել երկրորդ հանրապետություն:

Կա մեկ և միակ հանրապետություն՝ 1918-ին հիմնադրված Հայաստանի Հանրապետությունը:

3) 1920-21 թթ. բոլշևիկյան Ռուսաստանը և քեմալական Թուրքիան օկուպացրել են Հայաստանի Հանրապետությունը, մասնատել և բռնակցել են նրա տարածքը:

1990-91 թթ. ԽՍՀՄ փլուզման համատեքստում տեղի ունեցած ազգային-ազատագրական պայքարի շնորհիվ Հայաստանի Հանրապետության անկախությունը վերականգնվել է նրա մասամբ դեօկուպացված տարածքի (ՀԽՍՀ + ԼՂԻՄ + մյուս դեօկուպացված տարածքներ) վրա:

2020 թ. պատերազմի և հաջորդած ագրեսիաների հետևանքով, ԼՂԻՄ մի մասը, նախկինում դեօկուպացված մյուս տարածքները և ՀԽՍՀ վարչական տարածքի որոշ հատվածներ վերաօկուպացվել են:

Ներկայիս Հայաստանի Հանրապետությունը 1918-ին հիմնադրված Հայաստանի Հանրապետության շարունակությունն է (կոնտինիուտետ)[43]:

Արցախն ամբողջությամբ Հայաստանի Հանրապետության մաս է, իսկ Արցախի անկախության մասին տեսակետն անջատողականություն է՝ ուղղված ՀՀ տարածքային ամբողջականության դեմ:

4) Պետության սահմանները.

- Իրանի հետ՝ համընկնում են Իրանի (Պարսկաստանի) և Ռուսական կայսրության սահմաններին,
- Վրաստանի և Ադրբեջանի հետ՝ որոշվել են Ազգերի լիգայի 1920 թ. փետրվարի 24-ի զեկույց-առաջարկով,
- Թուրքիայի հետ՝ որոշվել են Վուդրո Վիլսոնի 1920 թ. նոյեմբերի 22-ի Իրավարար վճռով:

Ըստ այդմ՝ Հայաստանի Հանրապետության միջազգայնորեն ճանաչված տարածքը կազմում է ավելի քան 164 հազ քառ կմ:

[43] Կոնտինիուտետ, այլ ոչ իրավահաջորդություն, քանի որ իրավահաջորդությունը տեղի ունի նոր պետության առաջացման դեպքերում, մինչդեռ, ինչպես վերը նշվեց, ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի Հանրապետության անկախությունը վերականգնվել է նրա մասամբ դեօկուպացված տարածքի (ՀԽՍՀ + ԼՂԻՄ + մյուս դեօկուպացված տարածքներ) վրա:

5) Պետության առաքելությունը Հայկական բարձրավանդակի բնիկ հայ ազգի՝ որպես իր Հայրենիքում բնակվող և Հայրենիքի հետ ինքնության պահպանումը երաշխավորող կենսունակ կապի մեջ գտնվող օտարերկրաբնակ հատվածներից բաղկացած ամբողջական ու միասնական հայ էթնոմշակութային հանրության, համամարդկային առաքելության իրականացման ապահովումն է:

Այս առաքելության իրականացման գերակա պայմանն է՝ երաշխավորել հայ անհատի և հայ ազգի, ինչպես նաև նույն անհատական և ազգային առումներով՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների և նրանց առանձին ներկայացուցիչների ստեղծարար կենսագործունեությունը:

Պետության այս առաքելությունն առաջին հերթին ենթադրում է Հայաստանի Հանրապետության օկուպացված տարածքի դեօկուպացիան և վերահայացումը (հայրենադարձության, ինքնությունը վերագտնելու և այլ միջոցներով), Թուրքիայի և Ադրբեջանի հետ հատուցման օրակարգով հարաբերությունների կարգավորումը, ինչպես նաև զուգահեռաբար՝ Հայաստանի Հանրապետության՝ որպես միջտարածաշրջանային ու միջքաղաքակրթական կամուրջ-ամրոց աշխարհառազմավարական նախագծի, կայացումն ու զարգացումը՝ Հայաստանի Հանրապետությունը դարձնելով համայն հայությանը համախմբող «Հայկական աշխարհ» ցանցապետության առանցք և միջուկ:

6) Պետությունը կառուցվածքի ձևով ունիտար է:

Միևնույն ժամանակ՝ Հայաստանի Հանրապետության օկուպացված տարածքների դեօկուպացման, առավել ևս՝ հետագայում Հայկական բարձրավանդակի այլ հատվածների վրա նոր պետական կազմավորումների առաջացման (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության աջակցությամբ տարածաշրջանի պետականազուրկ ժողովուրդների ազատագրական պայքարի շնորհիվ) հավանականության հաշվառմամբ՝ կարող են դիտարկվել նաև դաշնության և/կամ համադաշնության տարբերակներ:

Զուգահեռաբար՝ պետք է դիտարկել նաև Մեծ Մերձավոր Արևելքում Հայաստանի Հանրապետության գործուն մասնակցությամբ նոր տիպի միջպետական կազմավորումների կայացման հնարավորություններ:

Պետությունը կառավարման ձևով հանրապետություն է:

Պետության քաղաքական ռեժիմն ազգային-ժողովրդավարական է:

Առկա հակահայ և հակապետական իրավաքաղաքական հայեցակարգը մերժելու, դրա աղետալի հետևանքները հաղթահարելու և, զուգահեռաբար՝ ազգային իրավաքաղաքական հայեցակարգ որդեգրելու ու դրա հիման վրա արդյունավետ ռազմավարությամբ ազգի և պետականության ապագան երաշխավորելու համար նպատակահարմար է վերը նշվածի հաշվառմամբ ընդունել Հայաստանի Հանրապետության հիմնադրման, վերաանկախացման և դեօկուպացիայի մասին հռչակագիր՝ «Հայաստանի Հանրապետության վերականգնման մասին հռչակագիր» (այսուհետև՝ Հռչակագիր) անվանմամբ[44]:

Հռչակագիրը պետք է ընդունվի հանրաքվեով (Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մասնակցությամբ) և հարցմամբ (Հայաստանի

[44] Հռչակագրի մասին ավելի մանրամասն տե՛ս Վ. Ավետիսյան, «Հայք նախագիծ» հոդվածը:

Հանրապետությունում և արտերկրում բնակվող Հայաստանի Հանրապետության ոչ քաղաքացի ազգությամբ հայերի հնարավոր առավելագույն մասնակցությամբ):

Հռչակագիրը նպատակահարմար է ընդունել ի կատարումն «Հայաստանի անկախության մասին» 1990 թ. օգոստոսի 23-ի հռչակագրով նախատեսված՝ «Անկախ պետականության հաստատման գործընթացի ամբողջացման» պահանջի:

Բոլոր դեպքերում՝ Հռչակագիրը, ի թիվս վերանայման ենթակա փաստաթղթերի, պետք է ըստ այդմ քննադատաբար անդրադառնա նաև Հայաստանի անկախության մասին 1990 թ. օգոստոսի 23-ի հռչակագրին, վերանայի այն անհրաժեշտ մասով և վերահաստատի 1918 թ. հիմնադրված Հայաստանի Հանրապետության շարունակականությունից (կոնտինիուտետ) բխող իրավաքաղաքական հայեցակարգի ամբողջական և վերջնական համակարգը:

«ԱԶԳ-ԲԱՆԱԿ» ՀԱՄԱԿԱՐԳ

Ժիրայր Սեֆիլյան, Վարուժան Ավետիսյան

Փաստաթղթի բնութագիր

Փաստաթուղթը մշակվել է Ազգային ռազմավարական հայեցակարգի պատկերացումների[45] հիման վրա: Փաստաթուղթը ներառում է այդ պատկերացումներն արտացոլող Ազգային անվտանգության ռազմավարության անվտանգային-պաշտպանական բաժինը, այդ բաժնով պայմանավորված՝ Պաշտպանական ռազմավարության հիմնադրույթները, ինչպես նաև վերջինից բխող՝ Ռազմական ռազմավարության (Ռազմական դոկտրին) համակարգաստեղծ բաղադրիչները:

Ըստ փաստաթղթի մտահղացման, Հայաստանը՝ որպես պաշտպանության սուբյեկտ, տեսանելի հեռանկարի համար աչքի առաջ ունի առնվազն Արցախի և Նախիջևանի նկատմամբ հայկական վերահսկողությունը, ուստի անվտանգային-պաշտպանական համակարգի կայացումը նախատեսվում է ըստ այդ հեռանկարի:

«Ազգ-բանակ» համակարգի նկարագիրը

Սահմանում

«Ազգ-բանակ»-ը համապարփակ անվտանգության համակարգ է, որը համախմբում և զարգացնում է ամբողջ ազգի անվտանգային-պաշտպանական ներուժի առավելագույն կարողություններ (ազգի բովանդակ անվտանգային-պաշտպանական զորություն) և արդյունավետ կերպով ապահովում է դրանց կիրառումը:

Նպատակ

ՀՀ պաշտպանական անվտանգության և պաշտպանական բաղադրիչի մասով ՀՀ-ի ու հայության հեռանկարային ռազմավարական շահերն արտահայտող նպատակների իրագործման ապահովում:

[45] Տե՛ս Վարուժան Ավետիսյան, «Հայք նախագիծ» հոդվածը:

I. **Կարճաժամկետ հեռանկարում (3-5 տարի)**

Խնդիրներ

1. Առկա կարողությունների գնահատում և խնդիրների առաջադրում:

2. Հավանական հակառակորդի հետ պաշտպանական հաշվեկշռի վերականգնում:

3. Պաշտպանական ոլորտի կառավարման համակարգի արդյունավետության մեծացում:

4. Պաշտպանության կազմակերպման գործում պետության և նրա այլ ինստիտուտների արդյունավետ ու համակարգված ներգրավում և դրանց հնարավորությունների օպտիմալ և արդյունավետ գործադրում:

5. Զինված ուժերի համալրման, պահեստազորի և մոբիլիզացիոն այլ ռեսուրսների ձևավորման, զարգացման ու գործադրման, պաշտպանական կրթության, կադրերի ընտրազատման ու պաշտոնեական առաջխաղացման համակարգերի ու մեխանիզմների օպտիմալացում և դրանց հնարավորությունների զարգացում:

6. Առավելապես ՀՀ պաշտպանական կազմակերպվածքի միջոցով պաշտպանության նպատակների իրագործում և դրանցից բխող խնդիրների լուծում:

7. Բնակչության և զինծառայողների կյանքի և առողջության պաշտպանության ապահովում:

8. Միջազգային պաշտպանական համագործակցության օպտիմալացում և դաշնակցային ներուժի արդյունավետ կիրառման ապահովում:

Գործողություններ

Իրականացնել ՀՀ գործող պաշտպանական կազմակերպվածքի ռազմավարական վերանայում և դրա արդյունքների ու Ազգային ռազմավարական հայեցակարգի նպատակների և խնդիրների հաշվառմամբ մշակել ՀՀ պաշտպանական կազմակերպվածքի հետամնացությունը հաղթահարելու, այն արդի դասական ու հիբրիդային պատերազմների մակարդակի հասցնելու (սահուն կերպով ապագայի պատերազմի մակարդակին հասցնելու միտվածությամբ) և շարունակաբար կատարելագործելու երկարաժամկետ Պլան:

Նշված Պլանին համապատասխան՝

1. Ազգային աշխարհընկալման ու շահերի մեկնակետից մարդկային, ազգային, տարածաշրջանային և համաշխարհային գործոնների, այդ թվում՝ ռազմական թատերաբեմի և ռելիեֆի առանձնահատկությունների հաշվառմամբ մշակել և ընդունել ՀՀ Պաշտպանական ռազմավարություն, Ռազմական ռազմավարություն (Ռազմական դոկտրին) ու այլ անհրաժեշտ ռազմավարական փաստաթղթեր, ինչպես նաև պաշտպանական ոլորտի հարաբերությունները կարգավորող օրենքներ և այլ իրավական ակտեր:

2. Ձեռնամուխ լինել Պլանի և դրա հիման վրա մշակված ռազմավարական փաստաթղթերի ու իրավական ակտերի պահանջների կատարմանը՝ ըստ այդմ ճշգրտելով պաշտպանական ոլորտի բոլոր ծրագրերը, պլաններն ու

միջոցառումները, առաջին հերթին ուշադրություն դարձնելով պաշտպանական կրթության, պաշտպանական արդյունաբերության և պաշտպանության տեղեկութային բաղադրիչի (տեղեկութային գիտատեխնոլոգիական բազա և ռեսուրսներ, տեղեկութային անվտանգության և պայքարի համակարգեր) զարգացմանը:

3. Վերանայել պաշտպանական ոլորտի կառավարման համակարգը, առաջին հերթին կատարելով անհրաժեշտ կադրային փոփոխություններ, մեկ կառույցի մեջ միավորել առնվազն երկայիս պաշտպանության, արտակարգ իրավիճակների և սահմանապահ զորքերի կառավարման մարմինները, ինչպես նաև ստեղծել ռազմական ռազմավարական հետախուզության և հակահետախուզության մարմիններ:

4. Կառուցել ռմբապաստարաններ և զորքերի պաշտպանության ենթակառույցներ:

5. Կուտակել բավարար նյութական միջոցներ և ձեռք բերել հավանական հակառակորդի հետ պաշտպանական հաշվեկշռի վերականգնման համար անհրաժեշտ սպառազինություն ու ռազմական տեխնիկա:

5. Ձեռնամուխ լինել ազգային բովանդակությամբ և մարդկային նկարագրով Զինված ուժերի շինարարությանը՝ առաջին հերթին ըստ այդմ արմատապես վերանայելով համազորային և մարտական կանոնագրքերը:

6. Կազմավորել ակտիվ պահեստազոր:

7. Մշակել և իրականացնել ազգային ընտրախավի մեծ մասին և հատկապես՝ հատուկ օժտված անձանց պաշտպանական կազմակերպվածքում, հիմնականում՝ Զինված ուժերում ներգրավելու, մտավորական սպայի կերպար ձևավորելու քաղաքականություն:

8. Ստեղծել կանանց զինվորական ծառայության համար անհրաժեշտ պայմաններ:

9. Մինչև ուսման ավարտը բացառել հատուկ օժտված երիտասարդների և աղջիկների զորակոչը:

10. Ստեղծել զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանության արժանապատիվ համակարգ:

11. Մշակել պաշտպանական արդյունաբերության և տեղեկութային անվտանգության ու պայքարի համակարգերի զարգացման և/կամ օտարերկրյա աղբյուրներից դրանց ձեռքբերման, ինչպես նաև համատեղ արտադրության ծրագրեր և ձեռնամուխ լինել դրանց կատարմանը:

12. Վերանայել Զինված ուժերի կառուցվածքը. զորատեսակների և միավորումների հրամանատարությունները տարանջատել Զինված ուժերի գլխավոր շտաբից և դրանց միավորմամբ ստեղծել Զինված ուժերի կառավարման օպերատիվ կենտրոն, Զինված ուժերի գլխավոր շտաբը վերածել մտքային-խորհրդատվական և մոնիտորինգային մարմնի, ինչպես նաև անցնել գումարտակ-բրիգադ-կորպուս համակարգի[46]:

[46] Կորպուսների կազմում պետք է լինեն նաև զորահավաքի միջոցով համալրվող «կրճատված» բրիգադներ:

13. Ստեղծել ԱԹՍ զորքեր (ուժեր)՝դրանք հետախուզական-հարվածային ամբողջական (այդ թվում՝ երամային-զանգվածային կիրառման) համակարգերի վերածելու միտվածությամբ, ինչպես նաև ՌԷՊ և հակաԱԹՍ արդյունավետ արդիական համակարգ:

14. Ստեղծել կիբեռանվտանգության և կիբեռ պատերազմի հատուկ նշանակության ուժեր:

15. Սահմանապահ գործառույթը փոխանցել Զինված ուժերին և սահմանապահ զորքերը ներառել Զինված ուժերի կազմում:

16. Վերացնել Ոստիկանության զորքերը (Ազգային գվարդիան)՝ դրանց գործառույթները սահմանափակ անհրաժեշտության տրամաբանությամբ վերապահելով Ոստիկանության պրոֆեսիոնալ ստորաբաժանումներին, իսկ ազատված ռեսուրսն օգտագործել սահմանապահ զորքերն ընդլայնելու համար:

17. Վերացնել ռազմական արդարադատության անհարկի տարրերը՝ զինվորական դատախազությունը և ռազմական ոստիկանությունը, որպես իրական գործառույթներով չծանրաբեռնված և ըստ այդմ՝ կոռուպցիոն ռիսկի աղբյուր դարձած մարմիններ, իսկ զինվորական հանցագործությունների գործերով մինչդատական վարույթն իրականացնել ընդհանուր իրավապահ համակարգի ռազմամասնագիտացված բաղադրիչների միջոցով:

18. Ստեղծել Զինված ուժերի պարեկապահակային ծառայություն՝ զինվորական կարգապահության ապահովման նպատակով:

19. Դիվերսիֆիկացնել անվտանգային-պաշտպանական ոլորտի արտաքին ռազմավարությունը և, ըստ այդմ՝

- վերանայել ՌԴ հետ հարաբերությունները և դրանցից բխող համագործակցության, ներառյալ՝ ՀՀ-ում ռուսական ռազմական ներկայության (սահմանապահ, հետախուզական, ռազմական), որակն ու բնույթը և այդ համատեքստում.
- դուրս գալ ՀԱՊԿ-ից,
- ի կատարումն ՀՀ-ում ՌԴ սահմանապահ զորքերի առկայության վերաբերյալ 1992 թ. սեպտեմբերի 30-ի միջազգային պայմանագրին համապատասխան հայկական սահմանապահ զորքերով փոխարինել ռուսական սահմանապահ զորքերին և ռուսական սահմանապահ զորքերը դուրս բերել ՀՀ տարածքից,
- առնվազն միջնաժամկետ հեռանկարում ՀՀ-ում գտնվող Ռուսաստանյան ռազմակայանը փուլային եղանակով դուրս բերելու նպատակով առնվազն վերանայել դրա խնդիրները, գտնվելու պայմանները, կառուցվածքը, կազմը և այլ պարամետրները՝ առաջին հերթին հանելով հետախուզական և ցամաքային բաղադրիչները[47],
- ըստ ՀՀ շահերի՝ անվտանգային-պաշտպանական համագործակցություն զարգացնել այլ պետությունների և ռազմաքաղաքական դաշինքների հետ,

[47] «Ազգ-բանակ» համակարգի տրամաբանությունը բացառում է երկրի տարածքում օտարերկրյա զինուժի մշտական ներկայություն:

• դադարեցնել Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագրի գործողությունը:

II. **Միջնաժամկետ հեռանկարում (5-10 տարի)**

Խնդիրներ (մեկնարկը՝ Կարճաժամկետի սկզբից)

Հիմնական խնդիր

1. Արդի պատերազմի կարողությունների (արդիական, այդ թվում՝ գերճշգրիտ սպառազինությամբ, կիբեռանվտանգության միջոցներով և համապատասխան կառավարման համակարգի ու ռազմարվեստի որդեգրմամբ) ձևավորման հիմնական բաղադրիչների գեներացում:

Մյուս խնդիրներ

2. ՀՀ-ի ռազմական պարտության բացառում, ինչը ենթադրում է.

• ՀՀ-ի վրա զինված հարձակման և ՀՀ տարածքում ռազմական գործողությունների վարման հնարավորինս բացառում:

• ՀՀ-ի վրա զինված հարձակման սպառնալիքի դեպքում նախահարձակ լինելու, նախականխիչ հարվածներ կիրառելու, ՀՀ-ի վրա զինված հարձակման դեպքում ռազմական գործողությունները հակառակորդի տարածք տեղափոխելու ու հակառակորդին իր տարածքում խաղաղության հարկադրելու, ինչպես նաև հակառակորդին անդառնալի վնաս հասցնող հարվածներ կիրառելու հնարավորությունների ստեղծում և դրանց հարաճուն զարգացման ապահովում:

3. Զինված հարձակումից ՀՀ բնակչության, տարածքի և ինքնիշխանության պաշտպանություն, ինչպես նաև նրա պաշտպանական կենսունակության ապահովում, ինչը ենթադրում է.

• Ժամանակակից նորագույն սպառազինությամբ, տեխնիկայով ու տեխնոլոգիաներով հագեցած և համապատասխան ռազմարվեստին տիրապետող Զինված ուժերի ձևավորում ու դրանց արդյունավետ կիրառման ապահովում:

• Պետության, ազգի և տարածքի պաշտպանական պատրաստում:

• ՀՀ և հայության դեմ ուղղված ոչ զինված գործողությունների (տեղեկութային պատերազմ, կառավարման, տնտեսական, ֆինանսական և այլ համակարգերի դեմ ուղղված գործողություններ) նախականխում, կանխում, կասեցում, չեզոքացում, դրանց հետևանքների վերացում, ինչպես նաև այդ գործողությունների աղբյուրների դեմ պատասխան միջոցների ձեռնարկում:

• Տեղեկութային պայքարի կարողությունների ու մեխանիզմների գեներացում և դրանց արդյունավետ կիրառման ապահովում:

4. Արդյունավետ պաշտպանական կազմակերպվածքի ձևավորում և դրա գործառման ապահովում, ինչը ենթադրում է.

• Որակական պարամետրների գերակայության և դրանց հարաճուն զարգացման ապահովում:

• Կոպիտ ուժի ու մեղմ («խելացի») ուժի օպտիմալ հարաբերակցության ապահովում և դրանց համադրված զարգացում ու կիրառում:

- Մարդկային գործոնի դերի վերաիմաստավորում և դրա արդյունավետ կիրառման ապահովում:

- Պաշտպանական կազմակերպվածքում պետության կառավարման մոդելին համապատասխան պաշտպանության իրականացման և պաշտպանության իրականացման ապահովման համակարգերի, Զինված ուժերի հրամանատարական շղթայի և պաշտպանական կազմակերպվածքի ղեկավար շղթայի, որոշումների տարբերակների մշակման, դրանց կայացման ու կատարման համակարգերի գործառութային դերաբաժանում և լիազորությունների որոշակիացում:

- Զինված ուժերում միանձնյա կառավարման և ինքնուրույնության ու ազատության սկզբունքների օպտիմալ հարաբերակցության ապահովում և դրանց համադրված զարգացում ու կիրառում:

- Մարդու կյանքի և արժանապատվության՝ որպես բարձրագույն արժեքների առաջնահերթ պաշտպանության, իրավունքի ու օրենքի գերակայության և Զինված ուժերի քաղաքական չեզոքության ու դրանց նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության ապահովում:

5. Ինքնաբավության և արտաքին ներուժի անհրաժեշտ կիրառման ապահովում, ինչը ենթադրում է.

- Բավարար պաշտպանական ներուժի և կենսունակության ապահովում:

- Պաշտպանական կարիքների ռազմավարական մասի ապահովում ներքին ուժերի և ռեսուրսների հաշվին:

- Դաշնակցային և համագործակցային ներուժի անհրաժեշտ ներգրավում ու զարգացում և դրա արդյունավետ կիրառման ապահովում:

Գործողություններ (մեկնարկը՝ Կարճաժամկետի սկզբից)

6. Զինված ուժերը համալրել համընդհանուր զորակոչի, պայմանագրային ծառայության և աշխարհազորային սկզբունքների օպտիմալ հարաբերակցության որոշման ու դրանց համադրված կիրառման հիման վրա՝ պրոֆեսիոնալ ստորաբաժանումների ձևավորմանը զուգահեռաբար կրճատելով զորակոչի հիման վրա իրականացվող պարտադիր զինվորական ծառայության ժամկետը մինչև 1 տարի, այդպիսի ծառայությունը վերածելով մարտական պատրաստման գործընթացի (միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում այդ կոնտինգենտին ներգրավելով մարտական առաջադրանքների կատարման մեջ):

7. Ստեղծել տարածքային պաշտպանության համակարգ և ռազմական սպառնալիքներին համապատասխան ժամանակակից պարամետրներով սարքավորել ՀՀ տարածքը, ինչպես նաև զարգացնել ոչ համաչափ, այդ թվում՝ ցանցային պատերազմի կարողություններ:

8. Ձևավորել պաշտպանական արդյունաբերություն, այդ թվում և առաջին հերթին՝ բարձր տեխնոլոգիաների, արհեստական բանականության վրա հիմնված համակարգերի ու սպառազինության արտադրություն, այն կազմակերպելով կլաստերային մոտեցմամբ ձևավորվող արժեքային շղթաների միջոցով: Այդ շղթաները, բացի արտադրականից, պետք է ներառեն նաև հետազոտությունների, մշակումների, խորհրդատվական ծառայությունների, ֆինանսավորման, օրենսդրական կարգավորումների և, անգամ կրթական բաղադրիչներ: Ընդ որում՝ դրանք չեն կարող ձևավորվել առանց պետական

պատվերի, առանց նրա օրենսդրական կանոնակարգման, կազմակերպական ուղղորդման և վերահսկողության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև ֆինանսական մասնակցության: Ուստի այդ շղթաների միայն մի հատվածը կարող է մասնավոր լինել, իսկ մյուս հատվածը պարտադիր կերպով պետք է կազմված լինի պետական օղակներից: Ընդ որում՝ պետությունը պետք է լինի այդ շղթաների հիմնական պատվիրատուն և կազմակերպիչը: Ըստ այդմ՝ պետությունը պետք է նաև օրենսդրական կարգավորումների միջոցով բարենպաստ միջավայր, այդ թվում՝ արտոնյալ հարկային պայմաններ ստեղծի այդ շղթաների կայացման ու գործունեության ապահովման համար:

9. Ձևավորել և գործադրել Զինված ուժերի բոլոր կազմերի զինծառայողներին (շարքայինից մինչև բարձրագույն) իրենց իրավասություններին համապատասխան որոշումների կայացման և կատարման գործընթացներում առավելագույնս ներգրավելու, ինքնուրույն մտածելու և ազատորեն գործելու հնարավորություններ և մեխանիզմներ:

10. Հիմնովին վերանայել Զինված ուժերի կենցաղի ու առօրյա գործունեության կազմակերպումը, մասնավորապես՝ վերացնելով մարդուն, հատկապես շարքային կազմի ներկայացուցիչներին ռեսուրսի վերածող, նրանց անհատականությունից, մարդկային սոցիալիզացման բնականոն հնարավորությունից ու միջավայրից ի սկզբանե զրկող զորանոցային համակարգը և ընտանիքի մոդելով ստեղծել զինծառայողների կացարաններ՝ ըստ այդմ կազմակերպելով նրանց կենցաղը:

11. Կազմակերպել և իրականացնել պաշտպանությանը հասարակության համընդհանուր պատրաստում՝ համապատասխան մշակույթի գեներացմանը համընթաց բոլոր չափահաս քաղաքացիներին փուլ առ փուլ զենք կրելու իրավունքի տրմամբ և զենքի հատկացմամբ: Այդ գործընթացում կամավոր սկզբունքներով հնարավոր մասով ներգրավել արտերկրում բնակվող հայերին:

12. Ձևավորել և կիրառել դպրոցականների, նախազորակոչային տարիքի պատանիների ու աղջիկների հայրենասիրական դաստիարակության, Զինված ուժերի անձնակազմի բարոյահոգեբանական պատրաստման գործուն համակարգեր: Այդ գործընթացում հնարավոր մասով ներգրավել արտերկրաբնակ հայերին:

13. Ձեռնամուխ լինել ժամանակակից միջազգային պարամետրների ու ազգային առանձնահատկությունների հաշվառմամբ պաշտպանական գիտության ու կրթության և կադրերի ընտրազատման ու առաջխաղացման համալիր համակարգի ստեղծմանը՝ այն վերածելով երկրի նույնաբնույթ համակարգի օրգանական բաղադրիչի:

14. Ռուսաստանյան ռազմակայանը դուրս բերել ՀՀ տարածքից:

15. Վերանայել օտարերկրյա պետությունների ռազմաուսումնական հաստատություններում ՀՀ Զինված ուժերի համար կադրերի պատրաստման քաղաքականությունը՝ այդ տարբերակով կադրեր պատրաստելով միայն խիստ անհրաժեշտության դեպքում: Միևնույն ժամանակ՝ դաշնակիցների և գործընկերների նյութատեխնիկական և մասնագիտական աջակցությամբ ՀՀ տարածքում ստեղծել ուսումնական կենտրոններ և/կամ կազմակերպել որակավորման դասընթացներ:

III. Երկարաժամկետ հեռանկարում (10 տարի և ավելի)

Խնդիրներ (մեկնարկը՝ Կարճաժամկետի սկզբից)

Մարդկային գործոնի մասով

1. Իր, ազգի և պետության իրավունքները գիտակցող ու դրանք պաշտպանելու ունակ քաղաքացու պատրաստում:

2. Պաշտպանական համակարգի անձնակազմի և այդ համակարգի հետ առնչվող քաղաքացիների արժանապատվության, ազատությունների ու իրավունքների գերակայության ապահովում:

3. Պաշտպանական համակարգի ձևավորում ազգային աշխարհընկալման ու համամարդկային առաքինություններից բխող արժեքների հիման վրա՝ անձնակազմին և ամբողջ երիտասարդ սերնդին դաստիարակելով ազգային առաքելության և ազատագրական պայքար մղող ժողովուրդներին աջակցելու պարտքի գիտակցությամբ, ռազմահայրենասիրական մղումով և զորային եղբայրության ոգով:

Ազգային սուբյեկտության ապահովման մասով

4. Ինքնաբավության ապահովում՝ ինչպես յուրային ուժերով ու միջոցներով պաշտպանվելու, այնպես էլ պաշտպանական արդյունաբերության, գիտության, տեխնոլոգիաների և կրթության յուրային համակարգեր ունենալու առումներով:

5. Լիակատար պետական ինքնիշխանության ապահովում, այդ թվում՝ վերպետական և ռազմաքաղաքական-դաշինքային կազմակերպությունների անդամության բացառում:

6. Ազգային շահի գերակայության, ինչպես նաև ազգային, աշխարհաքաղաքական և աշխարհագրական առանձնահատկությունների հաշվառման ապահովում:

Զորահավաքի և հասարակության պատրաստման մասով

7. Առանց սեռի խտրականության ՀՀ բոլոր քաղաքացիների պարտադիր և օտարերկրյա պետությունների քաղաքացի ու քաղաքացիություն չունեցող ազգությամբ հայերի՝ կամավոր մասնակցության ապահովում Հայրենիքի պաշտպանությանը՝ սեռի, տարիքի, առողջական վիճակի, հոգեբանական, ֆիզիկական, մասնագիտական որակների ու կարողությունների հաշվառմամբ և օպտիմալ օգտագործմամբ:

8. Պատերազմի և/կամ ռազմական դրության ժամանակ գերկարճ ժամկետում զորահավաքային ռեսուրսի ներգրավման և օգտագործման ապահովում՝ Զինված ուժերի համալրման բոլոր երեք՝ զինակոչային, պայմանագրային և աշխարհազորային համակարգերի կիրառմամբ:

9. Պաշտպանությանը հասարակության համընդհանուր պատրաստում՝ բոլոր չափահաս քաղաքացիներին զենք կրելու իրավունքի տրմամբ և զենքի հատկացմամբ՝ այդ գործընթացում կամավոր սկզբունքներով հնարավոր մասով ներգրավելով նաև արտերկրում բնակվող հայերին:

Տարածքի սարքավորման և տարածքային պաշտպանության մասով

10. Երկրի տարածքի պաշտպանական սարքավորում՝ այն վերածելով արդի դասական և հիբրիդային պատերազմների մարտահրավերները հաղթահարելու

ունակ, ինչպես նաև ապագայի պատերազմի մարտահրավերներին դիմակայելու մակարդակի զարգացման ու կատարելագործման ռեսուրս պարունակող ամբողջական ամրաշինական և դիմադրական ցանցային համակարգի («Երկիր-ամրոց»):

11. Սահմանամերձ շրջանների վերածում ուժեղացված պաշտպանությամբ հատուկ և արտոնյալ վարչատնտեսական գոտու:

12. Տարածքային պաշտպանության և սահմանապահ գործառույթների համալիր ապահովում:

Պետության, տնտեսության և հայկական գործոնի պատրաստման մասով

13. Ազգի և պետության մարդկային ու նյութական ռեսուրսների առաջնահերթ հատկացում պաշտպանական ոլորտին:

14. Պետական կառավարման համակարգի և համազգային կառույցների, ինչպես նաև ազգի և պետության անվտանգային ներուժի համախմբում պաշտպանական ոլորտի առանցքի շուրջ:

15. Արտակարգ իրավիճակների ազգային դասակարգման մշակում ու ներդրում և դրանց նախականխման, կանխման, չեզոքացման և հետևանքների հաղթահարման ու վերացման ապահովում պաշտպանական համակարգի ուժերով ու միջոցներով կամ առնվազն դրանց առանցքային ներգրավմամբ:

16. Պաշտպանական համակարգի բաղադրիչների ինքնուրույնության, շարժունության և ինքնաբավության ապահովում:

17. Բավարար չափով ռազմավարական պաշարների պահուստավորում, պահպանություն, պաշտպանություն և արդյունավետ կերպով օգտագործում:

18. Պաշտպանության գործառույթի գերակայությունն ապահովող օրենսդրության ձևավորում:

19. Պետական կառավարման համակարգի համապատասխանեցում պաշտպանական նպատակներին, ինչպես նաև գերկարճ ժամկետում խաղաղից պատերազմական դրության անցնելու արդյունավետ մեխանիզմների ձևավորում:

20. Պաշտպանական համակարգի վերածում ազգային ընտրախավի ձևավորման դարբնոցի:

21. Պաշտպանական գիտության և կրթության լիակատար ինտեգրում համազգային գիտության և կրթության համակարգերին:

22. Պաշտպանական գիտության, տեխնոլոգիաների և արդյունաբերության վերածում երկրի գիտատեխնոլոգիական և արդյունաբերական զարգացման քարշակ-շարժիչ ուժի:

23. Արդի պատերազմի կարողությունների (արդիական, այդ թվում՝ գերճշգրիտ սպառազինությամբ, կիբեռանվտանգության միջոցներով և համապատասխան կառավարման համակարգի ու ռազմարվեստի որդեգրմամբ) վերջնական ձևավորում և ապագայի պատերազմի կարողությունների (տեղեկութահոգեբանական առանցքի շուրջ զարգացող հակամարտային մարտահրավերների հաղթահարման միջոցների զարգացմամբ) գեներացում ու շարունակական կատարելագործում:

24. Հայկական ցանցի բոլոր բաղադրիչների (մարդուժային, քաղաքական, դիվանագիտական, տեղեկութային, հաղորդակցային, տնտեսական, ֆինանսական, գիտատեխնոլոգիական, մշակութային և այլ) պաշտպանական կարողությունների առավելագույն գեներացում, զարգացում և արդյունավետ կերպով օգտագործում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հայք նախագիծ …….. 6
2. Որպեսզի դերերը չփոխվեն……...23
3. «Զվարթնոց» կառավարման համակարգ
4. Զվարթնոցի տաճարը՝ ազգային առաքելության պատգամ և կազմակերպվածքի մոդել……27
5. Ժողովրդավարության վերածննդի Արարատյան մոդել ... ……52
6. Պետության իրավաքաղաքական հայեցակարգը և ազգի ու պետության ճակատագիրը……79
7. «Ազգ-բանակ» համակարգ……....89